

91560

T-79

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԽԱՆՉԱՐԱԳՐԱԿԱՆ ՎԵՐԱՀԱՅՐԱԳՐԱԿԱՆ ՀԱՆՈՒՆ

1957 ՀԱՅ ՎԵՐԱՀԱՅՐԱԳՐԱԿԱՆ

1971 Բ

Դաշնային Ս. ՊՈՂՈՑՅԱՆ



ՀԱՅ ԺՈՂՈՎ ՐԴԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

(Սպասրդության պատմականություններ)
Ճեղագիտական իրատիւալիքներ

ԹՐԱԿ 4

1957 ՀԱՅ ՎԵՐԱՀԱՅՐԱԳՐԱԿԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԽԱՆՉԱՐԱԳՐԱԿԱՆ ՎԵՐԱՀԱՅՐԱԳՐԱԿԱՆ ՀԱՆՈՒՆ

ԵՐԵՎԱՆ

1939

ԴԱՅԱՍՏԱՆԸ ՄՈՆՂՈԼԻԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈ

Ա. ՄՈՆՂՈԼԻԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ

13-րդ դարի սկզբներին հեռավոր արևելքում առաջանում է Մի խոշոր պետություն, վորը մինչև 14-րդ դարի կեսերը իր իշխանությանն եր յենթարկել այդ ժամանակաշրջանի կովտուրական աշխարհի գրեթե մեծագույն մասը։ Այդ պետությունը մոնղոլական պետությունն եր։ Մոնղոլներն ապրում եին Բայկալյան լճից դեպի հարավ-արևելք ընկած տարածության վրա։ Մոնղոլական տերիտորիայի հյուսիսային մասը պատած եր անտառներով, իսկ հարավային և հարավ-արևմտյան մասերը տափաստաններ եին։ Մոնղոլական ցեղերը ապրում եին այդ անտառներում ու տափաստաններում։ Նրանց զբաղմունքը անասնապահությունն եր։ պահում եին խոշոր թվով ձիեր, խոշոր յեղջռավոր կենդանիներ և այլն։ Անասնապահության հետ միասին զբաղվում եին նաև վորսորդությամբ։ Դենց այս յերկու ծյուղերն ել կապմում եին մոնղոլական ժողովրդի գլխավոր զբաղմունքները։ Իհարկե, կային նաև ցեղեր, վորոնք զբաղվում եին յերկրագործությամբ, բայց յերկրագործությունը մոնղոլների մոտ տնտեսության ստորագաս ճյուղ եր։ Զբաղվելով գերազանցապես անասնապահությամբ, մոնղոլական այդ ցեղերը վարում եին վաշկուն, թափառաշրջիկ կյանք։ Այդ վաշկուն, թափառաշրջիկ կյանքը մոնղոլները վարում եին նրա համար, վորովհետև նրանց անասունների կերակրումը պահանջում եր նրանցից նորանոր արոտավայրեր գտնել։ Մոնղոլները, ինչպես ապակուցում են այն պատմագետները, վորոնք զբաղվել են Մոնղոլիայի պատմությամբ, որինակ

ակադեմիկոսներ Վլադիսլավ Շվետառը և Բարտոլդը, մինչև 11-12-րդ դարը ունեցիլ են տո հմագած քարտեր: Այդ յերկու գլուխականներն եղ բավականին շատ տեղեկություններ են տալիս մոնղոլական ժողովրդի ներքին կիսու ու կացի մասին: Արանք պնդում են, վոր մինչև 11-րդ դարը մոնղոլներն ապրելիս են յեղել տոհմերով: Այդ տոհմը մոնղոլներն անվանել են «Կուրեն»: Կուրենը մասին վորոշ տեղեկություններ են տալիս պարսիկ պատմագիրներից տօկը՝ Պաշտ-Սիր-Դինը: Նա ապրել է 13-րդ դարի վերջին-14-րդ դարի սկզբը: Պաշտին ասում են, թե Կուրենը բառացի նշանակում ողափ: Նա ասում են, վոր այդ Կուրենը դեռևս 13-րդ դարում մոնղոլների մոտ պահպանել երիր նշանակությունը հատկապես ռազմական գործողությունների ժամանակ: Մոնղոլներն իրենց արշավանքի ժամանակ գեռես պահպանել երիր հին տոհմական հարաբերություններն ու նրանց սովորությունները: Պատերազմի ժամանակ նրանք կազմում երիր ող և կենտրոնում կանգնում եր նրանց ցեղապետը և ղեկավարում մարտը:

Բայց տոհմատիրական կարգերը, սկսած 11-րդ դարից, արագ-որեն բայթայվում են: Ինչպես փաստերը ցուցում են տալիս 11-12-րդ դարերում մոնղոլական թափառաշրջիկ ցեղերը այլևս չեն շրջագայում Կուրեններով: Տոհմը 11-12-րդ դարերում այլևս հանդեն չի գալիս վորպես տնտեսական միավոր: Ինո՞ւ կտ. դա բոլորովին չի վերանում, բայց վորպես գերիշխող ծև հանդեն չի գալիս: 12-րդ դարի վերջին և 13-րդ դարի սկզբը մոնղոլների մոտ Կուրենին փոխարինում են արգել այինները: Դրանից ել առևլ բառն ե առաջանում, վորը նշանակում տուն, ծովի: Մոնղոլներն սկսում են շրջագայել այիններով, այսինքն տներով, ընտանիքներով: Տոհմական տնտեսությունը տեղի յե տալիս անհատական տնտեսությանը: Ընտանիքն ե դառնում տնտեսական կյանքի միավորը:

ինչպես պարսիկ, արաբ, մասամբ ել շինական պատմիչները են տալիս, և ինչպես մոնղոլական աղբյուրներն են նշում 13-րդ դարի սկզբին կուրեններն այլևս չեն հիշատակվում. այլ ընդ հակառակը, նրանց տեղ նշվում են այիլներ. թեև կուրենների քայլայումից հետո յել մոնղոլ ցեղերի ներսում յեղած ընտանիքները արյունակցական կապով կապվում են իրար հետ, սակայն նրանք ապրում են արդեն շերտավորման յենթարկված դասակարգային հարաբերություններով. Առ ինարկե, տոհմ չե, համայնք չե, բայց արյունակցական կապերով կապված առանձին ընտանիքների մի միացում ե, վորապեսի նրանք պատերազմի ժամանակ իրար պաշտպանեն:

11-12-րդ դարերում մոնղոլական այդ ցեղերի մեջ արդեն նկատելի յե մասնավոր սեփականություն արտադրական միջոցների վրա և առաջանում է դասակարգային շերտավորում. Տոհմի ավելի ուժեղ անձնավորությունները, վորոնք կարողացել եյին իրենց ճեռքը գցնել նյութական վորոշ միջոցներ, սկսում են առանձնանալ կուրեններից և իրենց ընտանիքով վարել տնտեսությունը: Բայց կուրենները 11-րդ դարում քայլավել են վոշ միայն այդ գծով, այլև բռնի ուժով, այդ ցեղերի մեջ յեղած պատերազմների հետևանքով: Բայց ամենի վերաբերյալ կարող է այնպիսի փաստեր, յերբ առանձին տոհմական ցեղեր հարձակվում են մյուս տոհմի վրա. Չարդում են, գերում կամ նրանց հայտակեցնում են իրենց: Այդ տոհմը մի տեսակ վասսալական կախվածությամբ սկսում ե կապվել տիրող տոհմի հետ: Իսկ սա արդեն հիմք է դնում տոհմական կյանքի քայլայման, հիմք է դնում դասակարգային հարաբերություններին և նպաստում ե նրանց խորացմանը.

Դիալիդ-Ադ-Դենը յերբ խոսում է Զինդիկ խանի նվաճումների

մասին, ասում են, վոր Զինգիկ խանը ամբողջապես հնացանդեց
թե Տանջիռւտ, Ուրուտ և Մանգղուտ ցեղերին: Զինգիկ խա-
նը հրամայեց նրանց մեծ մասին կոտորել, իսկ մնացած
մասը տալ Զիդա-նոյին, վորպես ստորւկ: Այս ցույց է տախու-
վոր Նվաճողները Նվաճվողներին իրենց եյին յենթարկում վոլ
միայն քաղաքականապես, այլև տնտեսապես. վոր Նվաճվող ցեղե-
րը մտնում էն Նվաճող ցեղերի մոտ այնպիսի փոխհարաբերու-
թյան մեջ, ինչպես հողատերը, և հողի վրա աշխատող անմիջա-
կան արտադրողը: Թող մեզ շշփոթեցնի ստրուկ բառը: Ասրուկը
այստեղ շունի նույն իմաստը. ինչ վոր հին աշխարհում, մոն-
ղոլն՝ Նրանց անվանել են, Ունագան բոգոլ”, իսկ Վասդիմիրց վո-
րացատրելով այդ, ասում են, վոր դա շի նույնանում ստրուկի
հետ, վոր դա ստրուկ շե. այլ մի փոքր տարբերվում է խարա-
շուից, իսկ ոխարաշու նշանակում են հասարակ ժողովուրդ,
վորը տնտեսապես և իրավապես այդ ժամանակ արդեն յեն-
թարկում եր առաջացած մոնղոլական զաներին, նույինենե-
րին, բահադրութերին: Ղան, նույին, բահադրութ-սրանք իշխող-
ներ, ցեղապետներ եյին:

Իւարաշուն ունեցել եր տնտեսությունը, իր անա-
սունը, իսկ անասնապահությունը մոնղոլների մոտ այդ ժա-
մանակ տնտեսությունը վարելու հիմնական ձևն եր, բայց
խարաշուն շի ունեցել իր արոտատեղին: Արոտատեղին պատ-
կանել են նույինին, բահադրութերին, իսկ այդ տարածությունն ոգ-
տագործելու համար խարաշուն ստիպված եր տուրք տալ
արոտատեղիի տիրոջը: Ահա ֆեոդալական այդպիսի կար-
գեր են առաջ գալիս մոնղոլների մոտ 12-13-րդ դարերում
կարգեր, վորոնց ուսումնասիրողները անվանում են «Քոչվո-
րական ֆեոդալիզմ»:

Ֆեոդալները, այսինքն խաները, նույիները, բահադրութ-

րը հրենց յենթակա վասսալ ցեղապետներից կազմով են իրեց դրուժինաները վորոնց Մեջ մտադիներին անվանել են Առքորդ կամ Առքարդներ: Այդ Առքարները դուքս էին գալիս, կամ ըստըրվում էին վոշ թե շահագործվող, իրավազուրկ դասից, այլ ընդ հակառակը, տիրող, շահագործող դասակարգից: Այդ Առքարները կազմում էին տվյալ ֆեոդալի ռազմական ուժը:

Տոհմական կարգերի բայցայումը և Նույինների, խանների առաջ գալը մոնղոլների մոտ տեղի ցն ունեցել ուժնող բաշխումներով: Պայքարը 11-13-րդ դարի առաջին քառորդին զանազան ցեղախոսքերի և ցեղապետների միջև շափականց ուժը ե յեղել: Ցեղապետները իրար վրա եին հարձակվում իրար ունեցվածքները խելչու նպատակով: Շատ հաճախ նրանք քատարում եին հեռավոր արշավանքներ, հարձակվում եին Գինաստանի հյուսիսային շրջանների վրա: Ցեղապետները իրենց ծեւավորման այդ շրջանում անընդհատ բաշխման մօջ են յեղել: Մեկը մյուսին աշխատել ե իշխութ, թալանել, յուրացնել նրա ինչե՛ք, նրա ծիերի, վոշարների հոտերը:

Դրա հետ միասին տեղի յե ունեցել դասակարգային պայքար այն իմաստով, վոր հասարակ մողովուրդը, վորը այդ ժամանակ արդեն ճնշման եր յենթարկվում նոր առաջացող ֆեոդալական դասակարգի կողմանց, դիմադրում, պայքարում եր նրա դեմ: Այդ պայքարը, ինչպես աղբյուրներն են հիշատակում, առանձնապես արտահայտվել ե մոնղոլական պետության ծեւավորման շրջանում:

12-րդ դարի յերկրորդ կեսին մոնղոլական այդ ցեղերից մեկն ե յեղել սյսպես կոչված Յեսուգեյ բահադրությանը: Յեղ վոշ տոհմի իմաստով, այլ ֆեոդալական տան իմաստով: Յեսուգեյը մեռնում է 1175թվին: Նրա վորդիներից առաջի ընդունակն ե յեղել Տեսուշինը: Ինչպես աղբյուրներն են ասում,

Տեսուչինը հոր մահից հետո բավական նեղ վիճակում ելլնում
 Մյուս ցեղերը ոգտվելով այն հանգամանքից, վոր այդ ցեղապետու
 շկա, հարծակվում են նրանց վրա՝ խլելու համար նրանց ձե-
 րեն ու անասունների հոտերը: Ֆեռտալական այդ տնից հօռանում
 են դրուժինաները և մոնղոլական ֆեռդալի համար ստեղծվում ե
 բավական նեղ դրություն: Բայց շնորհիվ այն հանգամանքի,
 վոր Տեմուշինը ունեցել է դաշտական մեծ ընդունակություն
 և արիություն, կարողանում ե այդ նեղ դրությունից դուրս գալ
 համառ պայքար մղելով իր հարեան ցեղապետների դեմ: Տե-
 մուշինը դեռևս 12-րդ դարի վերջին ընդ հարվում ե մշաք
 այլ նույինների և բահառուկների հետ: 12-րդ դարի վերջին
 տասնամյակներին Տեմուշինը համառ կովկ միջոցով իրեն Ե
 րենթարկել տալիս բավական թվով նույինների և բահառուր-
 ների, վերականգնում ե իր դիրքը, իր ունեցվածքը, վերականգ-
 նում ե իր դրուժինան և դաման դատավորական տեսնում
 իրեն դիմադրողների հետ: Արա դրուժինաներում յեղած
 վորոշ մարդիկ, վորոնք հետո դառնում են ականավոր զո-
 րավարներ, նրա հակառակորդների կողմից ստանում են շատ
 խիստ գնահատական: Այդ ժամանակ Տեմուշինի ամենառ-
 մեղ հակառակորդը յեղել է Զամուխան: Բարտոլդը գտնում
 է, վոր Զամուխան պետք ելինի վոշ թե ֆեռտալական դասա-
 կարգի Ներկայացուցիչը այլ դեմքըրատական տարրերի, աշխա-
 տավորական տարրերի Ներկայացուցիչը: Զամուխայի մղած
 պատրիարք արտահայտվել է մողովորդի դիմադրությունը զաների
 և բահառուրների իրավունքների ընդարձակում և իշխանու-
 թյան հաստատման դեմ, սակայն Տեմուշինը ճնշելով այն, ուղա-
 տատենց և ամրապեց նրանց իշխանությունը մողովորդի վրա:
 Քսուշինը այդ իշխանությունը հաստատել է դաման նշում-
 ների միջոցով: Զամուխան հետևյալ խոպարծով Յ բնութագրել

այդ դաժանությունը, նա ասում է, վոր Տեսուշինը և նրա նոբար-
ները կատաղած շներ են, վորոնք կերակրվել են մարդեային
արյունով: Արանց սիրոտ սիրոտ չեւ, այլ յերկաթ, նրանք
լուսաս են: Նա ասում է, վոր այդ շորս շները հետեւալ-
ներն են՝ Զեթ, Խուբելա, Զելմե և Սուբելդա: Արանք
Տեսուշինի դրուժինաներում աշբի ընկնող ղեկավարներն
են: Զամուխան ասում է, վոր այդ շների կապերը արձա-
կել են և թողել են մեզ վրա:

Այսպիսի դրուժինաների միջոցով Տեսուշինը իր իշխանու-
թյունը տարածում մոնղոլական ցեղերի սեծամասնության վրա:
1202- 1203 թվին Տեսուշինը արդեն վճռական ճակատամարտ
ե ունենում ավելի հզոր խաների գետ և նրանց իրեն ե յօն-
թարկում: Այնպիս վոր 1206 թվին մոնղոլական ցեղերը իրենց սե-
ծամասնությամբ յենթարկվելիս են յեղել Տեսուշինին: 1206 թվին
Մոնղոլիայի գետերից մեկի ափին տեղի յեւ ունենում մոնղոլական
սեծամասների, այսինքն զաների, բահագուրների, նույիների և
մյուսների ժողովը: Կամ ինչպես մոնղոլներն են անվանել՝ Կուրի-
տան: Այդ ժողովում ճանաշվում է Տեսուշինի իշխանությունը
ամբողջ Մոնղոլիայի վրա և Տեսուշինը հողակվում է Զինգե-
ղան: իսկ Զինգեղ-ղան նշանակում է ամենահերթ ամենաուժը
զան:

1206 թվին փաստորեն քիբայրիայի յեւ յենթարկվում ֆր-
ակը խանի տիրապետությունն ամբողջ Մոնղոլիայի վրա:
Այդ թվին ել վոշ միայն փաստորեն, այլև իրավականորեն
հաստատվում է մոնղոլական մեծ պետությունը՝ Զինգե-
ղանի գլխավորությամբ: Զինգեղ խանը հիմնադրելով ժոն-
ղոլական այդ մեծ պետությունը շի բավականաեւմ միայն
մոնղոլական տերիտորիայով: Ամենից առաջ նա իր իշխա-
նությունը ամրապնդելու համար յերկորի ղեկավար պաշտոն-

Ներում դնում է իր դրուժինաներից աշքի ընկնոց մարդեաց, ստեղծում է իր բյուրոկրատիան, ստեղծում է իր պետական ապարատը, բաժանում է իր պետությունը վորոշ մասերի, վորոնց գլուխ նախ և առաջ դնում է իր մոտեկ ազգականներին։ Այսպիսով ամրացնում է իր իշխանությունը տն-դոլական տերիտորիայի վրա և 1211թ սկսում է իր արշավանքները։

Սիրածին անգամ նա արշավանք է կազմափորապում դեպի հարավ, դեպի Զինաստան։ Մոնղոլական ցեղերը Զինաստանի հետ նոր չեն, վոր սկսում են մերձնալ։ Նախ Բան Զինգիկ խանի պետության կազմակերպվելը, յերկար տարիների ընթացքում մոնղոլական ցեղերը, իրենց ցեղա պետների գլխավորությամբ, հաճախ ասպատակել են հյուսիսային Զինաստանի շրջանները՝ թալանելու նպատակով։ Բայի այդ, շինական առևտրականների և մոնղոլական այդ ցեղերի միջև դեռևս առաջուց չապ եր հաստատվել։ Զինաստանի առևտրականները ապրանքներ եյին բերում մոնղոլական այդ ցեղերի մոտ և վաճառում եյին, իսկ նրանցից վերցնում եյին հատկապես գյուղատընտեսական մթերքներ։ Այդ նպաստել եւ վորպեսզի տուղոլական ցեղերը բավական տեղեկություններ ունենան Զինաստանի մասին։ Զինգիկ խանը մոնղոլական այդ ցեղերին, իսկ այժմ առավելապես Զինգիկ խանին։ Զինգիկ խանը մոնղոլական և միջին ենթայի յերթենկող առևտրականների միջոցով բավական տեղեկություններ եր համարում Զինաստանի մասին։ Առաջարկությունների մասին, կատարված քաղաքական անցուութաք ձերի մասին։

Ինչպես ասացինք, առաջին անգամ մոնղոլներն արշա-

վուս են Զինաստանի վրա 1211թվին և վերջնականապես նվաճում այն 1215թվին։ Այդ սվաճման ժամանակ շինական ժողովուրդը Զինգիկ խանի վորքի կողմից անլուր հալածանքի յեւ յենթարկվում։ Զինական աղբյուրները հաղորդում են, վոր միայն Պեկինում մոնղոլները կռտորել են 50 հազարից ավելի բնակչություն։ Մոնղոլական սարսափը չինական ժողովրդի մեջ այնքան ուժեղ է յենել, վոր կանայք իրենց կոտորներից ցած են նետել, վորպեսզի շնչնեն մոնղոլական վիճակուների ձեռքը։ Զինաստանը կողոպտվում է Զինգիկ խանի վորքերի կողմից և բաղաքականապես յենթարկվում Զինգիկ խանին։

Նվաճելով Զինաստանը մոնղոլական պետությունն իր ուշադրությունը դարձնում է դենիկի հյուսիս-արևմուտք, դեպի Պարսկաստան։ Այն ժամանակ գոյություն ուներ խորեզմի պետությունը, վորի մեջ մտնում եյին Միջին Ասիական մի քանի յերկրներ, Պարսկաստանի հյուսիսային մասը և այժմյան Աղվանատանը։ Խորեզմի պետության կենտրոնական քաղաքն Ուրգենչն եր։ Զինգիկ խանը Զինաստանը նվաճելուց հետո իր բանակը ուղղում է դեպի այդ պետությունը։

Խորեզմի և Զինգիկ-խանի պետությունների միջև սկսվեական շրջանում տեղի յես ունենում վորոշ բանակություններ, վորոնք բարեկամական ընթացք են ստանում, բայց դա առերեսութեր։ Յերկու պետությունների և Զինգիկ-խանի և Խորեզմի պետության կողմից իրար թիկունքում տարվում եր լրտեսական հետախուզական աշխատանք։ Յերկու պետություններն եւ լայն կերպով ոգտագործում եյին առետրականներին այդ լրտեսության համար։ Խորեզմի շահ Մուհամմեդը, վորն իշխել է 1200-1220թթ., Զինգիկ խանին ուղար-

Կում է մի առևտրական քարավան նվթոներով։ Առևտրական քարավանի հետ սակայն նա դնում է նաև հատուկ դեսպանություն, վորին հանձնարարում է ծանոթանալ Ժինգիշ-խանի պետությանը։ Մանրամասնորեն։ Այսինքն իշմանալ այն մասին, թե ինչ ուժ է ներկայացնում իրենից այդ պետությունը, ինչ նոր նվաճումներ կատարելու մտադրություններ ունի, վոր ուղղությամբ է ուզում գնալ և այլն։ Քինզիկ խանը, ստանալով այդ նվթոները և ըսդունելով առևտրական քարավանի ներկայացուցին ու դեսպանությանը, իր հերթին մի քարավան է ուղարկում խորեզմի պետություն, փոխադարձաբար նվերներ ուղարկելով Մուհամմեդշահին։ Այդ քարավանը բաղկացած եր 500 ուղորից և 450 ուղորոց։ 1218թվին այդ քարավանը հասնում է խորեզմի շահի պետության սահմանին և տեղափոխում սահմանագլխիք գտնվող Աստրար քաղաքում։ Քարավանի մասնան մասին իմանում են տեղական իշխանությունները և ինքը խորեզմի շահը։ Թեև քարավանին մասնակցող առևտրականները մեծ մասամբ թուրքներ և պարսիկներ ենին, այնուամենայդիվ խորեզմության կասկածում են այդ քարավանի խեկանան նպատակի մասին, յենթադրում են։ Վոր նա նույնպես կարող է հետախուզական։ Որտեսական նպատակներով ուղարկած լինել։ Այդպիսի կասկածանքի հիման վրա նրանք ծերբակալում են քարավանի ամբողջ կազմը, վոշշացնում բոլորին և յուրացնում քարավանի հարստությունը։

Այս դեպքը առիթ է դառնում մոնղոլական պետության նոր արշավանքների, նոր նվաճումների։ Մոնղոլական առանձինահական ցեղերը պահանջ ունենալի նորանոր արոտավայրերի։ Մոնղոլական պետության ծեավորման շրջանում տնտեսության այդ ձևը՝ խաշնարածությունը, ավելի յէ առաջ

գնում: Մոնղոլական բազմամարդ բանափեն ծի յեր հարկա
վոր, իսկ ծին մոնղոլների մոտ վոշ միացն նառայուս եր
պինվորական կարիքներին և փոխադրական միջոցներ՝ այլ և
նա մոնղոլական ժողովրդին կերակրում եր նաև իր մոռվ և
կաթով: Այդ անասունների համար հարկավոր եր արոտատեղեր,
իսկ մոնղոլական պետությունը Թինգհի-խանի ժամանակ ար-
դեն մեծ պետություն եր դառնում: Այդ հանգամաթիքը տար
պում ե մոնղոլներին Նորանոր Նվաճումներ կատարել: Յեզ
ահա 1218 թվին Խոտրարում տեղի ունեցող գեպքը առհօ և
տալիս մոնղոլական պետությանը՝ հարձակում սկսել միջին
Սուհայի վրա: Հարձակումը սկսվում է 1219 թվին, Թինգհի-
խանը իր վորդիներով /իսկ նա ուներ շորս վորդի, վորոնք ե-
յին/ Զուրի ավագ վորդին, Գաղատա, Ոգատա և Տուրի/
հարձակվում ե Խորեզմի պետության վրա: Խորեզմում մոն-
ղոլական արշավող բանակներին առանձին խոշոր գիտա-
դրություն ցուց չեյին տալիս: Խոռանձրն Բաղաբեներ բա-
վականին դիմադրում եյին, բայց դիմադրում եյին անքառ-
անցատ, ջլատված ուժերով. վորը յերկիրը պաշտպանելու-
տեսակնուկ եֆեկտ շեր ունենում և մոնղոլական գնդերը
կարողանում եյին այդ առանձին- առանձին ուժերին ջար-
դել, ճնշել: 1219-21 թվականներին ամբողջ միջին Սուհ-
ան արդեն տրորվում եր մոնղոլական բանակի վոտների
տակ: Խորեզմի շահ Մուհամմեդը 1220 թվին մտնուա-
ն: Նրա գործը սկսում շարունակել իր վորդի Զալալեդ-
դինը, սա ևս սի քանի անհաջող փորձեր ե անոամ մոն-
ղուներին դիմադրելու և յերկրից դուրս թշելու համար, սա-
կայն վերջ եվերջո ստիպված ե լինում փախել, թափառա-
շրջիկ կյանք վարել, և պարտիվանական կորիզների մեջ
մտնել մոնղոլական զորքերի հետ:

1222-23 թթ Զալալեդդինին մոնղոլները դուրս են գրամ
միջին Ասիայից և ստիպում են նրան չվել դեպք արևոտուք
Զալալեդդինը մի հոծ բազմությամբ մտնում է Անդրկովկասը:
Հենց խորենց մասնակ ասպատակում է Անդրկովկասը:
Հենց խորենց մասնակ ասպատակում է Անդրկովկասը:
Դրվում մոնղոլների հարձակմանը Անդրկովկասի վրա:

Բ. ՄՈՆՂՈԼԱԿԱՆ ԱՐԾԱՎԱՍՔՆԵՐԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍ ՅԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆՎԱՃՈՒՄԸ

Յերբ 1219 թվին մոնղոլական բանակը արշավում է
միջին Ասիայի, այսինքն խորենցի պետության վրա և հա-
ջորդ տարին, այնե՛ 1220 թվին, մի շարք վճռական հար-
վածներ ե հասցնում այդ պետությանը, ահա այդ ժամա-
նակ մոնղոլական բանակից առանձնանում է մի զոկատ
և Զապելի կամ Զեբեյի ու Սուբեյդեյի կամ, հնչպես մեր պատ-
միշներն են ասում, Սաբատա բահադուրի գլխավորությամբ,
Զինդիկ-խանի հատուկ հանձնարարությամբ, հետապն-
դելով խորենցիների առանձին ջոկատներին, ասպատա-
կում ե Պարսկաստանի հյուսիսային մասերը, նվաճում
ե մի շարք վայրեր և մտնում է Անդրկովկաս՝ Անդրկովկաս
կանի վրայով: Այդ զոկատը բաղկացած է յեղել մոտ 20հա-
զար հոգուց: Մոնղոլներն Անդրկովկասում օկուպում են աս-
պատակություններ կատարել: Շանոթանում են յերկրին, շափ-
վում են տեղուած յեղած ուժերի հետ և, վորապես ավելի
լավ պարզեն իրենց համար Անդրկովկասում գոյություն ու-
նեցող իրադրությունը, խորանում են Անդրկովկասի ներսը
և նվաճում են Գանձակ քաղաքը:

Այդ ժամանակ վրացական պետության գահն եր բարձ-
րացել թամարա թագուհու վորդի՝ Հաշան, իսկ նրա ընդհա-

Նուր զորքի հրամանատարն եր իշխանն սպասալարը : Այս յեր կուսը Գանձակի դաշտում վրացական և հայկական ուժեղով, հարձակվում են մոնղոլական զորքի վրա, ճգտուղով կասեցնել Նրանց առաջխաղակումը . դեպի յերկրի խորքը : Կիրակոս Գանձակիցին ասում է, վոր Նրանց հարձակումները տեղի յեն ունենում Խուման դաշտում, վորտեղ սակայն պարտվում են հայկական և վրացական զորքորը Այդ պարտությունը կրելուց հետո Նրանք շեն հուսահատվում և պատրաստվում են Նոր Դիմադրություն ցուց տալ, մանավանդ : Վոր Մոնղոլները ևս պատրաստություն ենին տեսնում արշավելու յերկրի խորքը, սակայն յերբ մոռ դուները նկատում են հակառակորդի պատրաստվածությունը, ուժերի կուտակումը : Իրածարվում են Իրենց այդ մոռ Դրությունից և առիթ շեն տալիս Նոր հարձակման : Վարդան պատմիչն ասում է, վոր Նրանք վախեցան և հետ քաշվեցին Իրենց ծրագիրն իրագործելուց, վրաստանի վրա արշավելուց : Մոնղոլական այդ բանակը, վոր Զապօրի և Սարատա բահադուրի գլխավորությամբ արշավել եր Անդըրկովկաս, ինչպես փաստերն են ցուց տալիս, մոտադրություն շի ունեցել Նվաճել յերկրը և հաստատվել այն տեղ, այլ Նրան հանձնարարություն եր տրվել հետախուզելու և նախապատրաստելու հետագա՝ ^{աբշավանքները} : Մասմբ այդ ե պատճառը, վոր Մոնղոլական այդ բանակը շի մնում Անդըրկովկասում և աշխատում է Դերբենտով անցնել դեպի Բյուսիս, բայց Դերբենտի Կիրճը բավական ամուր կերպով պահվում եր աշաների և գիշաղների կողմից :

Մոնղոլները Դիմուա նն ^{Խորամանեա} Քաղաքականության : Նրանք կարողանում են ջլատել այդ յերկու ուժերին, բաժանել

Արանց՝ իրենց կողմը գուշավելով զփշաղներին և հարվածել
ալաններին։ Այդպիսով կոտրում են Նրանց դիմադրությունը և հնարավորություն են ունենում Դերբենտի կիրճով անցնել հյուսիսային կովկաս։ Մտնելով հյուսիսային կովկաս Նրանք հաշիվ են տեսնում նաև զփշաղների հետ։ Նրանց նոյնպես ջարդում են և ստիպում են բաշվել հյուսիսայր կովկասից։ Այդ զփշաղների հետքերով մոնղոլական զոկատները շարունակում են արշավել դեպի հյուսիս արևմտուք, հասնում են մինչև Ղրիմ և այնտեղ բուլղարների և մյուս ժողովուրդների կողմից հանդիպում են ուժեղ դիմադրության, պարտվում են և ստիպված են լինում հետ նահանջել դեպի Վոլգայի ափերը և Կասպիկ լճի հյուսիսային ափերով կապվել մոնղոլական մյուս բանակների հետ։

1224թին Զապեյ և Սաբատա Բահադրուրը ներկայանում են Չինգիզ-Խանին և զեկուցում Նրան Անդրկովկասի և այլ յերկրների մասին իրենց հավաքած տեղեկությունները։

Իա մոնղոլների առաջին արշավանքին եր դեպի Անդրկովկաս։ Նրանց մեկնելուց հետո Անդրկովկասում, Լաշայի գուխավորությամբ, Մաֆրում են յերկիրը զփշաղներից, Վորոնք դաշնակցելով մոնղոլների հետ, հարվածել են Անդրկովկասյան ուժերին։ Ասկայն հապիվ եր Անդրկովկասը և առավել մոնղոլական այդ առաջին արշավանքի թողած գնդերից ու խմբերից, յերբ յերկիրն է ներխուժում Զալալեդդինը իր հրոսակախմբով։ Մի փոքր առաջ արդեն ասվեց այն մասին, վոր Զալալեդդինը հայածվելով մոնղոլական վորքերի կողմից, շվեց դեպի Անդրկովկաս։ Մինչև 1225թիվը Զալալեդդինը թափառում է հյուսիսային Պարսկաստանում, յերբեմն նոյնիսկ անցնում եր Միջին Ասրա-

և այլն: 1225թվին հետապնդումը սոնղուների կողմից ավելի ուժեղ է լինում և Զալալեղդինը ստիպված է լինում անսել Սևորկովկաս, ճիշտ նոցն ճանապարհով, վորով անցել եր յերեք տարի Նրանից առաջ սոնղոլական արշավախոսք: Զալալեղդինն ել իր բանակով գալիս և նվաճում Մուղանի դաշտը, նվաճում է Գանձակը՝ ապա իջնում է դեպի Հայաստան յնվ բանակում է Արարատյան դաշտում:

Հայկական և Վրացական ուժերը իվանեյի գլխավորությամբ փորձում են հետ շպրտել Խորեզմյիներին: Զավաք վում են Միջարք հայ նախարարներ և Վրացիներ, վորոնք իվանեյի գլխավորությամբ ջանում են դուրս քշել Զալալեղդինին: Գառնիում Նրանք հարձակվում են Զալալեղդինի բանակի վրա, բայց հարձակվողները պարտվում են:

Այդ անհաջող ճակատամարտից հետո տեղական ուժերը՝ Վրացական և հայկական այլևս աշխի ընկնող համառ թյամբ չեին դիմադրում Զալալեղդինին և Զալալեղդինի զորքերը սկսում են հարստահարել յերկիրը, գանձել ձանք տուրքեր, գործադրել բռնություն, հատկապես դավանա փոխության հարցում: Նրանք բռնի կերպով ստիպում ենին ժողովրդին դավանափոխ լինելու և բնակչության մի մասին ել գերում են: 1226-27թ Խորեզմյիները յերկուում իրենց դեմն ունենալով թիշ դիմադրություն հարձակվում են Թբիլիսիի վրա, գրավում են Քաղաքը, Թալանի յեն յենթարկում, այնու հետև իջնում են դեպի հարավ, հարձակվում են Խլաթի վրա, այդ Քաղաքը նոյն պես վերցնում են և ուզում են ավելի հարավ իջնել, բայց հարավում արաբական և սեղջուկյան ամբողջությունները, Իկոնիայի սուլթանությունը, Մամլուկներն ու Կիլիկիայի հայկական թագավորությունը միացած

-10-

Դիմադրում են Զալալեթդինին, մի ճակատամարտում զախ-
ջախում են Նրա կողքերն ու ճետ են շպրտում Նրան: Պարու-
վելով Խորեզմյանները Վերադառնում են Անդրկովիան և հաստա-
վում են Մուղանի տափաստանում: Այդ ճակատամարտից
հետո՝ Բավական յերկար ժամանակ՝ Մինչև 1235-36 թիվը,
Անդրկովիանը, Միջագեղքի հյուսիսային մասերը, փոքր Ծիբ-
այի արևելյան մասերը հաճախ յենթարկվում են Խորեզմյան-
ների ասպատակությանը: /Սորեզմյանները Անդրկովիանը
դուրս են Քշվում միայն այն ժամանակ, յերբ Անդրկովիան
սի վրա տեղի յէ ունենում Մոնղոլական յերկրորդ ար-
շավանքը: Մոնղոլները ստիպում են Խորեզմյաններին քաշ-
վել դեպի հարավ, Բայց հարավում ել, Ասիր քաղաքի շր-
ջակայքում, հարավային ամիրայությունների հետ ընդհար-
վելիս Նրանք վոշնչացվում են:

Մոնղոլական 2-րդ արշավանքը դեպի Անդրկովիան
սկսվում է 1236 թիվն: Այս անգամ Մոնղոլական բանակը
գլխավորում եր Զարմաղանը: Մոնղոլները Պարսկաստա-
նից մտնում են Կուրպատական, Մուղանի դաշտը և հա-
տատվում են այդ դաշտում: Ցերեր Զարմաղանի գլխա-
վորությամբ Մոնղոլական զորքերի մի մասը սկսում է
ակտիվ գործողություններ դեպի արևմուտք, Պարսկաստանի
վրայով, առա հենց նոյն թվականին ել, այսինքն 1236
թիվն Մոնղոլական զորքերի մի այլ մաս Բաթույի ղեկա-
վարությամբ անցնում է Ռուսաստան: Աս հիշատա-
կության արժանի յէ Նրա համար, վորովհետև 1235-
36 թիվը Մոնղոլական նվաճումների աշխաժացման մի
նոր շրջան և այդ սորշափսնքը կատարվել ե վոշ մի-
այն դեպի Անդրկովիան և փոքր Ասիր, այլ նաև այլ
ուղղությամբ: Զարմաղանը բանակելով, այսինքն հաստատ-

վելով Մուղանի դաշտավայրում, մի դաշտավայր, վորը ծտումամանակ վերին աստիճանի նպաստավոր պայմաններ եր ստեղծում մոնղոլական բանակի և այդ բանակին հետվող ընտանիքների համար վորացես արոտատեղի, սկսած ե հարձակումները Անդրկովկասի զանազան վայրերի վրա:

Սույն թվին, այսինքն՝ 1236 թվին, մոնղոլական վորքերը գրոհում են Գանձակի վրա: Գանձակի թնակիչների զգալի մասը՝ աղրբեջանցիներ և հայեր, ամենավճռական դիմա դրություն են ցույց տալիս և բավական յերկար ժամանակ պաշտպանում են Քաղաքը: Մոնղոլները ստիպված են լինում մաս առ մաս նվաճել Քաղաքը: Խոաջին հերթին Նրանք նվաճում են Քաղաքի շրջակային յեղած այգիների մասը, ապա նոր մոտենալով Քաղաքի պարիսպներին սկսում են Քանդել պարիսպները զանազան մեթուսներով: Քաղաքացիները դարձյալ պաշտպանվում են հերոսաբար, բայց վերջիվերջո դրսից անհրաժեշտ ոժանդակություն շնորհանալով նվաճվում են մոնղոլների կողմից: Զարմաղանի վորքերը Քաղաքը նվաճելուց հետո ավերում են այն: Ավերածությունը տեղի յե ունենում վոլ միայն կութական տեսակետից, այլև մարդկային վոհերի տեսակետից: Քաղաքը թալանելու, այրելու հետ միասին մոնղոլները սրի յեն անսկացնում բնակչության մի մասին, իսկ մի զգալի մասին ել գերում են: Գանձակի նվաճումից հետո մոնղոլները իրենց գիրքը Անդրկովկասում ամրացնում են և վերադասավորում են իրենց բանակը՝ նորանոր հարձակումներ գործելու համար: Այդ վերաբասավորումը մոտավորապես հետևելով պատկերն ուներ: Մոնղոլական հրամանատարներից մեկին, Զաղաման հանձնարարվում է իր վորամասներով նվաճել մասու շրջակային:

Դրադատա նույինին հանճնարարվում ե գրավել Կայենի
շրջակայիք համանուն բերդի ինքը՝ ջարմաղանը վերցնուած
իր վրա Անի նվաճումը։ Ասպա Ղատաղա նույինին հանձ
նարարվում ե Այունիքի գրավումը, իսկ Մոլար նույինը
Շամխորի շրջակայիքի գրավումը։

Այդպիսի վերաբաժանում կամ բանակի գասավորում
կատարելուց հետո, մոնղոլական զորքերը մեկը մյուսի հե-
տևից սկսում են նվաճել Հայաստանի և Վրաստանի գա-
լիսուները։ Մոլար նույինը շրջապատում է Շամխոր քա-
ռաքը։ Քաղաքացիները, հասարակ ժողովուրդը վճռել
եյին դիմադրել և պաշտպանել քաղաքը։ Այդ նպատա-
կով նրանք դիմում են Շամխորի շրջանի թեոդալ վահ-
րամին, վորպեսի նա ոգնի, բայց նրանց դիմումը մեռմ
ե ան հետևանք, վորով հետև վո՞չ Վահրամը քաղաքին
ոգնության գնաց, և վո՞չ ել թույլ տվեց իր վորդուն ոգ-
նության գնալ։ Այնուհանդերձ, ժողովուրդը պաշտպա-
նեց իրեն, սակայն մոնղոլների համառությունը քաղաքի
յերկար պաշարելու բնագավառում չի կոտրվում։ Ինչ-
պես աղբյուրներն են հաղորդում, մոնղոլները վերին
ասահինանի հաջողակ են լինում քաղաքի պարիսպները
քանդելու մեջ վոչ միայն Շամխորում, այլև առ հասա-
րակ։ Ահա այստեղ՝ Շամխորում ել նրանք քանդում են
պարիսպները և նվաճում են քաղաքը։ Նոյն բախտին
ե արծանանում նաև լոռի քաղաքը, այդ քաղաքատիք
վայրը։ Լոռու հշխան Շահընշահը, զգալով մոնղոլներին
մոտենալը, թողնում ե քաղաքը, ամրանում ե ամուռ
բերդերից մեկում, իսկ քաղաքի պաշտպանությունը հանձ
նում է իր աներոջը, վորը սակայն չի պաշտպանում
քաղաքը։ Հետաքրքիր բնորոշում ե տալիս այդ մարդկանց

Մեր պատմիչներից մեկը՝ Գևոնձակեցին։ Աս ասում են վոր կրաքը / վորոնց հանձնարարված եր Հոռին պաշտպանել / «Արք Կանանցիք էին և ուտեղու, ըմբեղու և արբեցողութեամբ պարապող»։ Արանք Կնամարդիկ եյին, վոշ կռվող, վոշ պաշտպանող, այլ իրենց նվիրում եյին ուտեղ խմբուն, արբենալուն։ ինչ կարող եյին անել Կրանք Քաղաքը պաշտպանելու գործում։ Յեզ իսկապես։ հակառակ մոնղոլների դժմ ցուցաբերած դիմադրության և համառ Կամբի, այդ մարդիկ շեն կազմակերպում յերկրի պաշտպանությունը և մոնղոլները նվաճում են նաև այս։ Այնու հետև մոնղոլները նվաճում են նաև Այունիքը։ Այունիքում այունյաց ֆեոդալների կողմից մեծ դիմադրության շեն հանդիպում։ Առաջին իսկ հանդիպումից այունյաց Ելիկում ֆեոդալը համաձայնության ե գալիս մոնղոլների հետ, ընդունում ե նրանց գերիշխանությունը և ինքն ել իր բանակով մտնում մոնղոլների արշավորդ բանակի շարքերը, բայց ժողովուրդը, հատկապես Խաչենի շրջակայքում, յերկար ժամանակ պաշտպանվում է։ Այունիքը նվաճելուց հետո մոնղոլական բանակը, նշանակված ղեկավարի զլիավորությամբ, իջնում ե դեպի Արարատյան դաշտը և գնում, պաշարում ե Անին։ Առանձնապես ցայտուն կերպով յերեսում ե հասարակ ժողովրդի պայքարի վոգին Անին պաշտպանելիս և ընդհակառակը՝ ֆեոդալների մի մասի դավաճանական դիրքը։ Անիի բնակչությունը համառ կերպով պաշտպանում եր Քաղաքը և Անին նվաճվում ե մոնղոլների կողմից Մայն։ Ասիսքան Քաղաքի վրա հարձակում գործելը մոնղոլները հատուկ գետպանությունն են ուղարկում, պահանջելով, վոր Քաղաքը հանձնեն։ Քաղաքի ավագանին հայտարարում ե, վոր Արանք

Կարող են մոնղոլներին պատասխանել միայն Շահընշահի
համաձայնությունը առնելուց հետո։ Ակագանին պատաս-
խանում ե մոնղոլների պատվիրակությանը այս ձևով,
իսկ ժողովուրդը, ռամբկները հարձակվում են մոնղոլական
այդ պատվիրակության վրա և վոշնչացնում են նրան։ Դրա-
նից հետո սկսվում է քաղաքի պաշարումը, վորը բավական
յերկար ե տևում։ Մոնղոլները շեն կարողանում ե միայն
ֆեոդալական մի մասի դավաճանության հետևանքով ե.
Վոր քաղաքի դրները բացվում են թշնամու առաջ։ Ֆեո-
դալներից մի քանիսը բանակցության մեջ են մտնում տո-
ղոլների հետ, անցնում են մոնղոլների կողմը և մոնղոլ-
ների հետ միասին համոզում են ժողովրդին դադարեցնել
քաղաքի պաշտպանությունը, իսկուստանալով քաղաքին
վնաս շտալ և յերբ, հավատալով այդ խոստումներին
քաղաքից դուրս են գալիս քաղաքի կովող ուժերը, մոն-
ղոլները հարձակվում են նրանց վրա, ջարդում են և
այդպիսով վերցնում են քաղաքը։ Ահա թե ինչպես ե նկա-
րագրում պատմիչը նախարարների այդ դավաճանությունը։

«Քաղաքն այս Անի լցնալ էր բազմութեասք մարդկան և ա-
նասնոց, և պարսպնալ ամրագոյն պարսպօք... և յոյժ փարթաս
էր քաղաքն ամենայն իրօք... Առաքեաց Զարսա զան դեսպանո
առ նոսա քալ նուա ի հնազանդութիւն, և որք գլխաւորքն էին ի
քաղաքին՝ ոչ իշխանուն պատասխանի առնել պատգամին առանց
հարցանելոյ վիշխանն Շահնշահ. քանի ընդ իշխանութեասք նոր
էր քաղաքն։ Իսկ ամրուն քաղաքին և ռամբկին սպանանին զգաց
գամաւորսն. և զայն տեսեալ զօրքն այլազգեաց. ի քարեւութիւն
դրդեցան. և պաշարեալ զբաղաքն յամենայն կողմանց կանքնեցիք-
փիլիկուանս բազում արուեստագիտութեասք, և տանուցեալ ընդ-
քաղաքին զորեղապէն առին զնա։ Այլ և ուսանք յիշխանաց քաղաքն»

ձեռնոտու եղեն առ թշնամիսն, զապրուստ ասհանց շահելով. և նոյա կոշեալ արտաքս ի Քաղաքէն բազմութիւն, խոստացան ոչինչ առնել նոյա շար. և իբրև ելին արտաքս առ նոյա աժան բազմութիւն, բաժանեցին զնոսա յինքեանս, և սուր ի վերա եղեալ, կոտորեցին առ հասարակ անողորմաբար, սակաւ կանայ տանկունս թողեալ, և արս արուեստաւորս, զոր վարեցին ի գորութիւն: Եւ ապա մտեալ ի Քաղաքն առին վիճան և զորացածս նոյա, և կողոպտեցին զամտնայն եկեղեցիս, և աւերեալ Քանուեցին զամտնայն Քաղաքն. Եղծին և ապականեցին զփառ Վայելշութեան նորս " / Գանձագոյն եջ 244-245/

Մոնղոլների կողմից Անի Քաղաքի Նվաճման թվականը ուսումնասիրողները համարում են 1239թիվը: Մեր աղբյուրներում յեղած տեղեկությունները վորոշակի կերպով շեն հաստատում այդ թիվը: Անիի Նվաճման թիվը վորոշակիորեն համարյա վոլ մի պատմիչի կողմից շի հիշատագվում: Գանձակեցին Անիի Նվաճման մասին պատմում ե այնպես կարծեք թե այն տեղի յե ունեցել հենց 1236 թվին: Մեր ընկերներից մեկը Ժամկոշյան Հայկավը 1236թ պատկանող մի հիշատակարանում գտել է մի տեղեկություն վորը Անին մոնղոլները վերցրել են այն տարին, յերբ գրվել ե այդ հիշատակարանը: Այդպիսով Անիի Նվաճման տարթիվ մասին անորոշություն փա: Դամենայնդեպս պարզ ե, վորայդ Քաղաքը Նվաճվել է 1236-39թվականներին:

Յես շեմ պնդում, վոր Անին վերցրել էն 1236 թվին, Բայ համենայնդեպս, յեղած տեղեկությունները կասկածի տակ են առնում 1239թի ճշտությունը: ✓

Անին Նվաճելուց հետո մոնղոլները վերցնում են նաև Կարսը: Կարսեցիները, ինչպես սեղուկների ժամանակ, այնպես ել այժմ, Նախորով իրենք են դիմում մոն-

Կարող են մոնղոլներին պատասխանել միայն Շահընշահի համաձայնությունը առնելուց հետո։ Ավագանին պատասխանում է մոնղոլների պատվիրակությանը այս ծեռվ՝ իսկ ժողովուրդը, ռամբկները հարձակվում են մոնղոլական այդ պատվիրակության վրա և վոշնչացնում են նրան։ Դրանից հետո սկսվում է քաղաքի պաշարումը, վորը բավական յերկար ե տևում։ Մոնղոլները շեն կարողանում ե միայն ֆեոդալական մի մասի դավաճանության հետևանքով ե։ Վոր քաղաքի դրսերը բացվում են թշնամու առաջ։ Ֆեոդալներից մի քանիսը բանակցության մեջ են մոնղում մոնղոլների հետ, անցնում են մոնղոլների կողմը և մոնղոլների հետ միասին համոզում են ժողովուրդին դադարեցնել քաղաքի պաշտպանությունը։ Խոստանալով քաղաքին վնաս շտալ և յերբ, հավատալով այդ խոստումներին քաղաքից դուրս են գալիս քաղաքի կովող ուժերը, մոնղոլները հարձակվում են նրանց վրա, զարդում են և այդպիսով վերցնում են քաղաքը։ Ահա թե ինչպես ե նկարագրում պատմիչը նախարարների այդ դավաճանությունը։

«Քաղաքս այս Անք լցնալ էր բազմութեասթ մարդկան և անասնոց, և պարսպեալ ամրագոյն պարսպօք... և յոյժ փարթասէ էր քաղաքն ամենայն իրօք։ Առաքեաց Զարման զան դեսպանն առ նոսա գալ նոտ ի հնապանդութիւն, և որք գլխաւորքն էին ի քաղաքին՝ ոչ իշխեցին պատասխանի առնել պատգամին առանց հարցանելոյ զիշխանն Շահնշահ. Քանիք ընդ իշխանութեասթ նոր էր քաղաքն։ Իսկ ամրու քաղաքին և ռամբկին սպանանին զպատգամաւորսն և զայն տեսեալ զօրքն այլազգեաց. ի բարեկութիւն դրուեցան. և պաշարեալ զքաղաքն յասենայն կողմանց կանգնեցին փիլիկուանն բազում արուեստագիտութեասը, և տանուցեալ ընդքաղաքին վորեղապէն առին զնա։ Այլ և ուսանք յիշխանաց քաղաքն»

ձեռնոտու եղեն առ թշնամիսն, զապրուստ ասճանց շահելով. և նոյա կոչեալ արտաքս ի Քաղաքէն բակութիւն, խոստագան ոչինչ առնել նոյա չար. և իբրև եթն արտաքս առ ծոյա ատանայն բազմութիւնն, բաժանեցին զնոսա յինքեանս, և սուրէ ի վերայ եղեալ կոտորեցին առ հասարակ անողորմաբար. սակաւ կանայս ցանկունս թողեալ, և արս արուեստաւրս. զոյ վարեցին ի գորութիւն: Եւ ապա մտեալ ի Քաղաքն առին պինչսն և զորացւածս նոյա, և կողուպտեցին զամենայն եկեղեցին, և աւերտալ Քանդեցին զամենայն Քաղաքն. եղծին և ապականեցին զփառ զայելչութեան նորու ” /Գանձագեցի եջ 244-245/

Մոնղոլների կողմից Անի Քաղաքի նվաճման թվականը ու ուսումնասիրողները համարում են 1239թիվը: Մեր աղբյուրներում յեղած տեղեկությունները վորոշակի կերպով շեն հաստատում այդ թիվը: Անիի նվաճման թիվը վորոշակիորեն համարյա վոլ մի պատմիչի կողմից շի հիշատակվում: Գանձակնեցին Անիի նվաճման մասին պատում ե այնպես կարծեք թե այն տեղի յե ունեցել հենց 1236 թին: Մեր ընկերներից մեկը՝ Ժամկոշյան Հայկավը 1236թ պատճանող մի հիշատակարանում գտել է մի տեղեկություն վորը Անին մոնղոլները վերցրել են այն տարին, յերբ գրվել ե այդ հիշատակարանը: Այդպիսով Անիի նվաճման տարեթիվ մասին անորոշություն իս: Քամենայնդեպս պարզ է, վորայդ Քաղաքը նվաճվել է 1236-39թվականներին:

Յես շեմ պնդում, վոր Անին վերցրել են 1236թին, բայց համենայնդեպս, յեղած տեղեկությունները կասկածի տակ են առնում 1239թին ճշտությունը: ✓

Անին նվաճելուց հետո մոնղոլները վերցնում են նաև Կարսը: Կարսեցիները, ինչպես սեղուկների ժամանակ, այնպես ել այժմ, Նախորոք իրենք են դիմում մոն-

զոլներին և հայտակություն հայտնում նրանց ուսկայի այդ-
ել շի փրկում Կարս քաղաքին կողուպտման յի՞մբարկելոց և
ընտկության գերեվարումից։ Նվաճելով Արարատյան գաշ-
տը Այունիքը, Անին և Կարսը Մոնղոլները տեր են Դառ-
նում Հայաստանի հյուսիսային մասերին ։ Բայց այդ-
մոնղոլները նվաճում են նաև ամբողջ Ասորյան ակա-
նը, Ադրբեյջանը և Վրաստանի արևելյան շրջանները՝
թբիլիսին և Մյուս վայրերը։ Այդպիսով 1236 թվից
Անդրկովկանը ու Հայաստանի հյուսիսային մասերը ընկ-
նում են Մոնղոլական լծի տակ։

Մոնղոլների այս նվաճումների ժամանակ յերկրում հեղեղ
սահմանք, հասարակ ժողովրդի կողմից պուշաթերվում է ու-
մեղ դիմադրություն։ Ժողովուրդը անձնավոր Կերպով պաշտ-
պանում է իր յերկիրը, ասկայն այդպիս շիանում իշխան
դասակարգի վորոշ մաք։ Հայ ֆեոդալների մի մասը առանց
լուրջ դիմադրություն ցույց տալու մոնղոլներին անցնում
են նրանց կողմը և մտնում նրանց բանակը Ճառայտթյան։
Այսպիս և անում Այունյաց նախարար Ելիկումը։ Այդպիս
են անում Պլուշանների նախարարական տան վորոշ
ներկայացուցիչները։ Այդպիս են վարդում Անիի ֆեոդալ-
ների մի մասը։ Վերջիվերջո նոցն գիծն ետանում նաև
Իվանելի վորդին՝ Ավագը, շնայած այն հանգամանքն,
վոր Զաքարյանների մի մասը Շահնշահի գլխավորու-
թյանը ամենավճառական դիմացրությունն են կազմակե-
պում մոնղոլներին և շեն հաշտվում նրանց հետ։ Ավագն
եւ օկզբնական շրջանում ուժեղ դիմադրություն ե կազ-
մակենքպում մոնղոլներին, բայց վերջում հաշտվում ե
նրանց հետ և ծառայում են նրանց համար։

Ինչ պատճառներ կային ֆեոդալական համբ վորոշ

մասի այսպիսի քաղաքանության համար։ Ինչն եր դրդու
Նրանց այսպիսի գիծ տանելու։ Կան մի շարք պատճառներ։
Նախ և առաջ այն, վոր մոնղոլները Անդրկովկասում հրեց
մոտ ծառայության մտնող, իրենց հանձնվող Նախարարների
իրավունքները պահպանում ենին։ Այսինքն պահպանում ե-
յին նրանց կալվածքներն ու նրանց ֆեոդալական իրա-
վունքներն այդ կալվածքներում։ Ուրիշ խոսքով նրանք
պահպանում ենին։ Նրանց սոցիալական դասակարգային բա-
զան՝ ֆեոդալական իրավունքները։ Բայց այս, Ֆիզիկապես
չեյին վոշնչացնում նրանց։ Այնու հետեւ առանձին դեպ-
քերում մենք տեսնում ենք, վոր մոնղոլների կողմն ան-
ցած ֆեոդալներին մոնղոլները և վիրում են նոր տերիու-
րիաներ։ Այսպես, յերբ Ելիկումը հոժար կարգով միանու-
ե մոնղոլներին, ապա մոնղոլական վորավարը Հայաստան,
վորոշ մասերը՝ կոտայքի, Վեդիի շրջանները նվաճելիս
տալիս ե Ելիկումին և ասում ե թե փողով գնվաճը և
կենքով վերցվածը հավասարապես կարող են մարդկանց
հայրենիքը լինել։ Դուք կենքով մեզ հետ միասին նվա-
ճեցիք այս հողերը և դա պատկանում ե ձեզ, վոյեն
կալվածք։ Մոնղոլները վոշ միայն Ելիկումի հետ են այդ-
պես վարգել, այլև մի շարք Նախարարների հետ։

Արանք փոքր պատճառներ չեն, փոքր շարժառիթ-
ներ չեյին ֆեոդալական դասակարգի այդ խավի համար,
յերբ նրանց սպառնում եր մոնղոլական սուլթան։ Ինչպես
Գանձակենցին ե հաղորդում ֆեոդալներն այդ անում
եյին մի կողմից իրենց ֆեոդալական իրավունքները պաշտ-
պանելու, իսկ մյուս կողմից՝ իրենց անձը փրկելու համար։
Մոնղոլներն ել ոգտագործում եյին այդ հանգամանքը և
վերցնում եյին նրանց իրենց բանակում լորպես ռազմական

ուժ ոգտագործելու: Հատ տեղեկությունների մոնղոլներն են Դըրկովկաս էն մոտել վոշ մեծ բանակով, մոտավորապես 20-25 հազար հոգով: Դա մեծ ուժ չե, հասկանալի յե, վոր մոնղոլները շարունակաբար նոր ոգնություն եյին սոսա նուև իրենց թիկունքից, բայց Կրանք նաև չայն էլուսով ոգտագործում եյին տեղական ռազմական ուժերը զրոնք անձնատուր եյին լինում նրանց:

Բոլորովին այլ բան եր համարակ ժողովրդի վիճակը: Հասարակ ժողովուրդը զգում և տծանում եր, վոր մոնղոլական ամբողջ դամանությունը՝ իր ուսերին ե ընկնում, իր գլխին ե թափվում: Նվաճման ժամանակ հասարակ ժողովուրդը յենթարկվում եր թալանի. նրա ինչքը կողոպտվում եր: Այդ ժողովական չեր, նրան գերում եյին, վաճառում եյին և յեկամուն նոր աղբյուր եյին դարձնում իրենց համար, և ի վերջո նրան սպանում եյին: Այս դեպքում հասարակ ժողովրդի, գյուղացիության, արհեստավորության դիմադրությունը շատ ուժեղ եր արտահայտվում: Մի քանի փաստեր արդեն ցուց տվեցին և նորից կրկնելու կարիք չեա: Բոլոր փաստերը, թեկուց հենց այն, վոր Խաչենի շրջանում ժողովուրդը, գյուղացիությունը բաշվում և ամրանում ե Եռներում և յերկար ժամանակ դիմադրում մոնղոլներին անձնատուր շի լինում ու նոյնիսկ հաճախ հարձակվում ե թշնամու վրա, ցուց են տալիս. թե ինչպիսի համառությամբ ժողովուրդը պաշտպանել ե իր հայրենիքը: Յեկ հայկական բուրժուական պատմագրության այն թեկը. թե ժողովուրդը, հայ շինականը ծուել ե իր վիկը ամեն մի նվաճողի առաջ և անտրտունջ կերպով տարել ե ամեն մի լուծ, ինչպես տեսնում եք, պատմական փաստերի կատարյալ աղավաղուան ե և զրպարտանք ե հայ ժողովրդի հասցեյին: Հայկական բուրժուական պատմագրության

մեջ այդ թեզը շատ տեղ է իր արտահայտությունը գտնել: Այս արտահայտվել և սույնիսկ, յերբ խոսել են հայ ժողովրդի խոշորագույն ստեղծագործության՝ Սասունցի Դավիթ⁸ եպոսի մասին, վորտեղ ինչը ժողովուրդը պատկօրավորել է իր հերոսական պայքարը հենց այդ նվաճողների դեմ:

Նվաճումների մամանակ յերկիրը յենթարկվում եր անասեմ ավերածության: Բավկաթիվ Քաղաքներ, վորոնք նվաճվել են մոնղոլների կողմից: Հայաստանում, Խեդրբեցանում, Վրաստանում յենթարկվում են ավերածության և կողոպուտի: Բնակչությունը, ժողովուրդը վոշնչացվում է, կոտորվում և գերեվարվում է: Մոնղոլները վոչ միայն Հայաստանում, Կամ Անդրկովկասում, այլ առ հասարակ արշավանքի յենթարկված բոլոր վայրերում տարել են այդ պիսի Քաղաքականություն: Ինչից ե բջիսում այդ: Այդ բջիսում ե արտադրական այն յեղանակից, վոր ունեին մոնղոլները: Իրոք յերեկի հիշում եք Մարքսի այն խոսքերը, վորոնք վերաբերում են մոնղոլների արտադրական յեղանակին և նրանց բջիսոց նրանց Քաղաքականությանը:

Մարքսը իր Քաղաքատնտեսության քննադատության ներածության մեջ, յերբ խոսում ե արշավանքների մամանակ յերեք արտադրական յեղանակների առաջացման մասին, նա որինակ ե բերում նաև մոնղոլներին: Մարքսն ասում են, որինակ, մոնղոլները վարվում ենին իրենց արտադրության յեղանակի համապատասխան, յերբ ամայացնում ենին Ռուսաստանը: Անասնապահությունը գլխավոր պայմաններն են սեծ անմարդաբնակ տարածությունները⁹: Ուրեմն մոնղոլները ամեցացնում ենին նվաճված յերկրները, ավերում եփն զարգացած Քաղաքները յելնելով այն արտադրական յեղանակից, վոր նրանք ունեին, այսինքն նրանք վորպես խաշնարած

Ժողովուրդ իրենց հոստերի համար ստեղծուած էին ընդարձակ արոտատեղեր. իսկ դրա հոսմար հարկավոր եր ամայացնել դաշտերը:

Այդպես շեն բացատրուած բուրժուական պատսագիրները: Բուրժուական պատմագրության հիմնական թեզն այն է, վոր մոնղոլներն այդ ավերածությունները հատարուած էին յեւնելով իրենց ռասսայական հատկություններից. Իր թե կուլտուրա ստեղծելու և կուլտուրա պահպանելու աշխարողությունից, ընդունակություն շոււնենալուց: Պատմությունը ցուց տվեց, վոր դա բացարձակապես հակադիտական, հակապատմական թեզ է: Մոնղոլ ժողովուրդը հակառակ այն բանի, վոր դարերի ընթացքուած կուլտուրական մակարդակով կանցնած է յեղել ալելի ցածր աստիճանի վրա, այժմ ստեղծուած իր յերրուս կուլտուրա և վոշ պակաս քան մյուս ժողովուրդները:

Տարիներ շարունակ պետական համալսարանի ամբիոնից ժողովրդի թշնամիները Դայաստանի պատմության մեջ ջատագովել են այն միտքը, վոր ամեն մի արշավանք իր հետ բերել է տնտեսության բարձրացուած և կուլտուրա-ու արտահայտվել է դրական կերպով: Դուք գիտեք, վոր ժողովրդի մերկայված թշնամի Դակոբ Զորյանը նախ և առաջ ասուած էր, վոր մոնղոլների նվաճումը պետք է դիտել վորպես դրական յերեսով: Դայաստանուած և Անդրկովկասուած: Սա այդ արդարացնուած եր նրանով, վոր մոնղոլների տիրապետությունը յերկու շրջանի յեր բաժանուած-արշավանքների շրջան և տիրապետությած շրջան, ապա հայտարարուած, վոր յեթե արշավանքների շրջանուած տեղի յե ունեցել ավերուած, ապա տիրապետության շրջանուած՝ կատարվել է տնտեսության և կուլտուրայի վերելք, ծաղկուած: Սա վոշ մի առնչություն շունի պատմական իրական փաստերի հետ: Մոնղոլների տիրապետության

յրջանը Հայաստանի տնտեսական կյանքի բայթայստ և անփուան յրջանը է այդ մենք կ'տեսնենք քիչ հետո. յերբ Կիոսենք յերկրի եկոնոմ ժիկայի մասին:

1242 թվից Հայաստանում սկսվում է մոնղոլական հարձակութիւնը մենքի մի նոր շրջան՝ բաշույի զլխամորությամբ:

Մոնղոլները 1236-1242 թվերին նվաճեցին Միայն Հայաստանի հյուսիսային մասերը և միջնաշխարհը՝ Արարատյան դաշտը. Ծիրակի բաշտը: Այդ մասերը նվաճելուց հետո մի Կարմատե դադար է տեղի ունենում, վորք վերջանում է 1242 թվին: Զարմաղանը, վորպես հրամանատար այլևս ի վիճակի շեր գործել: Աղքաղուները հաղորդում են, վոր նա 1241-1242 թիսկաններին հաշմանդամ էր դարձել, խլացել ու համրացել, վորի պատճառով ել գործել շեր կարողանում: 1242 թվին բանակի հրամանատարությունը անցնում է մի այլ վորավարի ձեռքը: Բաշու նոցին ընտրվում է զորքի ընդ հանուր հրամանատար և հենց նոցը թվից ել վերսկվուամ են մոնղոլական արշավանքները դեպի Հայաստանի հանրապ արևմտյան մասերը և դեպի փոքր Ասիա: 1242 թվին մոնղոլական զորքները պաշարում են Կարին Քաղաքը, բավական յերկար ճամանակ Քաղաքը պաշարելուց հետո միայն կարողանում են նվաճել այն: Քաղաքի բնակչությունը յինթարկվուամ է դաման կոտորածի Քաղաքը ավերվում է, ապատակվուամ է:

Կարինի նվաճումից հետո մոնղոլական զորքի հերթական խնդիրն է դառնում հարվածելի իկոնիայի սույթանությանը: Ի դեպս, Կարինն այն ճամանակ արդեն գտնվում էր իկոնիայի սուլթանության գերիշխանության ներքո: Կարինը նվաճելուց մի տարի անց, այսինքն 1243 թվին, իկոնիայի սուլթանության և մոնղոլական զորքների միջև տեղի յեռնենում վճռական ճակատամարտ: Մեր աղբյուրները հաղոր-

դում են, չոր հկոնիայի սուլթանությունը գեսպանություն է ուղարկում Բաշույի սոն՝ սպառնալով նրան, վոր հնքը թոյլ շի տա մոնղոլներին իրեն յենթակա յերկրները նվաճելու և վոր Բաշուն կ'պատճի այդ հանդուգն Բայլ անելու համար:

Սուլթանությունը հանդես եր բերում ջղածգություններ, ապանութիւններ, վորոնք հետեանք եյին վախկոտության, իսկ Բաշուն շատ հանգիստ պատասխանում է նրանց. ասելով, թե աստված Կ'վորոշի, թե ով ում Կ'հաղթի: Մոնղոլական բանակը առաջ է խաղում դիմադրելու հկոնիայի զորքերին. Հայաստանի հարավային մատում, Զիման կատուկ Կոշված վայրում, վրու, հնչածն հազարդում է Մաղաթիա աբեղան. ընկնում է Կարն և Յերկնկայի միջև, այնտեղ տեղի յե ունենում այդ յերկու բանակների ընդհարումը: Իկոնիայի սուլթանությունը պարտություն է կրում. հաղթվում են, փախուստի յե գիւռում ինքը՝ սուլթանը. իսկ նրա զորքերի մեծագույն մարզարդվում է: Զիման կատուկի ճակատամարտը փաստութեն վճռում է իրոք Ասիայի բախտը: Այն իմաստով, մոր այդ ճակատամարտի հետո իրոք Ասիայի հատկապն արևելյան մասը ամրող զությամբ ընկնում է մոնղոլական գերիշխանության ներքո:

Մոնղոլական զորքերն այդ ճակատամարտում հաղթանակ տանելուց հետո, սկսում են մեկը մյուսի հետեկի գրավել սի շարք քաղաքներ: Առաջին հերթին, ինչպես հաղորդում են Կիրակոս Գանձակեցին, Վարդան Բարձրաբերդցին և մի քանի այլ պատմիչներ, մոնղոլական բանակը նվաճում է Կեսարիա քաղաքը, Վորիկ հետո նվաճում են Սեբաստիան և այս Յերկնկայ: Այդ քաղաքներից՝ Կեսարիան և Յերկնկան ողոլական զորքերին ցույց են տալիս ամենաուժեղ զիմադրություն: Յերկար ժամանակ նրանք պաշտպանվում են հատկա-

պես Յերզնկան, և միայն խորամանկության, դավադրության միջոցով ե վերցվում Յերզնկան։ Իսկ Մերաստիան առանց դիմադրության ցույց տալու յենթարկվում է, անձնատուր ելք նույն։ Այդ Քաղաքների նվաճումով, ինչպես տեսնում եք, մոնղոլական տիրապետությունը բավական ընդարձակվում է դեպի փոքր Ասիա։

Իկոնիայի սուլթանությունը այս արշավանքում լիակատար կերպով պարտվում է և կրցնում է իր Քաղաքական նշանակությունը փոքր Ասիայում։ Ճիշտե՛, այդ սուլթանությունը Փոքր ե անում նորից վրոժքի կանգնել և դիմադրել մոնղոլներին, բայց նա ջարդվում է և նրա ամբողջ տերիտորիան նվաճվում է մոնղոլների կողմից։ հետագա արշավանքների ընթացքում։

1244թին, ինչպես հաղորդում է Գանձակեցին, Բաշուն կազմակերպում է մի նոր արշավանք դեպի Հայաստանի հարավային մասերը։ Մոնղոլական զորքերը խնդիր են դնում հարվածել մամլուկներին, վորոնք այդ ժամանակ վոչ միայն տիրում են Պաղեստինին, Աիրիային, հյուսիսային Միջադետքին, այլև Հայաստանի հարավային շրջաններին և Մասակերտին ու Խլաթին։ Արշավանքը սկսվում է նրանով, վոր մոնղոլական զորքերը պաշարում են Խլաթը ու Գրավում, ապա առաջ են խաղում դեպի Էկոտրիք։ Առաջ խաղալով դեպի Ասորիք, նրանք նվաճում են մի քանի քաղաքներ՝ Ամիդ, Ուրիայ կամ Ուրֆա. կամ Յեգեսիա և Մերքուս Նվաճելով այդ Քաղաքները, մոնղոլական բանակը շարունակում է առաջ գնալ դեպի հարավ, բայց Կիլմայական անկասմ պայմանները ստիպում են նրան հրամարվել այդ մուսադրությունից։ Արշավանքը տեղի յէ ունենում առաջ ժամանակ, յերբ շոգը և ճահճային վայրերում ստեղծված

ծանր ոդք շատ վատ ե անդրադառնում մոնղոլական բանակի վրա: Դիվանդությունները և շոգը ստիպում են մոնղոլներին յետ բաշվել: Համեմայնդեպս այս արշավանքով ել մոնղոլական կորֆերը մի ծանր հարված են հասցնում մամլուկների իշխանությանը և փաստորնեն վերցնում են նրա ձեռքից Հայաստանի հարավային մասերը և հյուսիսային Միջազգետքը: Այս արշավանքով մոնղոլները նվաճում են ֆեռդալական վողջ Հայաստանը և հաստատում այնտեղ մոնղոլական տիրապետությունը:

1244թվից հետո մինչև 1257-58 թվականները մոնղոլական բանակը առանձին խոշոր արշավանքներ և նվաճումներ չի կատարում: Այդ յերեսով մասամբ բացատրվում են նրանով, վոր մոնղոլներն աշխատում են ամրացնել իրենց դիրքերը նվաճված վայրերում, մասնավոր վոր նվաճված վայրերում մոնղոլական տիրապետության դեմ դժողովություններն որ ավուր աճում են և արտահայտվում են առանձին յերեսով: Դեռևս 1249 թվին վրաստանում և Հայաստանում մոնղոլական տիրապետության դեմ կազմակերպվում է ապստամբություն: Ժողովրդին դեպի ապստամբություն հրահրելու պատճառները բավական շատ են: Նախ, 1246-47 թվականներին մոնղոլական Գիուկ ղանը Անդրկովկաս ե ուղարկում յերկու աշխարհագիւտ հագետ հարկահաններ՝ Արղունին և Բուղարին: Արանք Անդրեա Կովկաս գալով, Հայաստանում, Վրաստանում, Աղվանքում սարսափենարածում: Դաման կերպով Արանք ժաղկարդիկ խլուծ են ամեն ինչ: Հարկերը նշանակում են Քաշիսի հարկահաններին և ինչպես ուղեցնելու համար: Ընդվորում այդ հարկերը հայտնվելու

պատրվակի տակ նրանք բազմաթիվ մարդկանց մահապատճի եյին յենթարկում, անգամ իշխող դասակարգից։ Հատ Մաղաքիա աբեղայի, նրանք ամեն ձևանակ դալիս և նեղում եյին վրաց և հայոց իշխաններին։ Վորանցից ուզում են վուսկի կտագ, վուսանցից բազա, վուսանցից ակե՛՛շուն և ծի։ Յեկ այգան նեղում եյին նրանց; Բայց այն, վոր վերցնում եյին մալ, թաղար և խալա։ Այնուհետև մի այլ տեղում նոյն պատմիչը թվարկում է հարկերի այն տեսակները, վորոնք գանձվում եյին։ Այդ տեսակների մեջ հիշատակում է մալ։ Թաղար, ուժիշուր և ազգու կամ արդու։ Բայց այս հարկերից, ձողովորդից վերցնում եյին այլ հարկեր։ Ինչպես որինակ՝ պարան, գուլպա, հազուստեղեն և այլն։ Թվաքեած անունները հարկերի թիվը շեն սպառում, վորովհետև այդ ժամանակ մոնղոլների տերմինով ասած տիրում եր անյասան վիճակ։ այսինքն՝ մեր այժմյան տերմինով ասած պատերազմական դրություն, արտակարգ դրություն և մոնղոլ վորագարները ժողովրդից հավաքում եյին այնքան և այնպիսի տուրքեր, վորքան և վորպիսին նրանք նպատակահարմար են համարում։ Դայաստանում և Դայաստանի հայրեան յերկրներում այս դրությունն եր տիրում, վորը գրգռում եր ձողովորդին մոնղոլական տիրապետության լեմ։

Այդ հարկերը հավաքում եյին ձողովրդից, աշխատավոր բնակչությունից, սակայն ֆեոդալներն ել վորոշ տուրք եյին տալիս մոնղոլներին, վորը կոչվում եր խալա, այսինքն պարտավոր եյին իրենց վորքով կռիվների ժամանակ ծառայել նրանց։ Մաղաքիա աբեղան պատմում եւ, վոր կռիվի ժամանակ մոնղոլները առաջերին քշում հայ և մրացի վորթորին, վորոնք շնչունում եյին իրենց վրա թշնամու առաջին հարվածը և աշխա-

տում հետ մղել հակառակորդին, այդ ժամանակ նոր սոնդոլները կրվի դաշտ Երևան մտնում: Այդպես եր իրա դրությունը նեյաստանում և Վրաստանում 1240-ական թվականներին, մի դրություն, վոր կապարի նման ճընշում եր ժողովրդին և դժբոհություն առաջացնում ժողովրդի մեջ մոնղոլ տիրապետողների դեմ:

Մոնղոլական տիրապետության դեմ կատարված այդ դժբոհությունները 1249 թվին վերածվում են ապստամբության: Դամարյա մեր բոլոր աշխարհները. և վրացական, և՝ հայկական, տեղեկություններ են տալիս այդ ապստամբության մասին: Ապստամբությունը կազմակերպում է վրացական Դամբիթ թագավորը: Ինչպես Գանձակեցին ե պատմու, ապստամբությունը ավելի կազմակերպված և նախայատրաստված ծեռով առաջ տանելու համար տեղի յէ ունեցել Ֆեռալական զորքերի կենտրոնացումը Թթիլիսիի շրջակայքում: Այնտեղ են գնում թե վրացական և թե հայկական ուժերը: Դեռ ապստամբությունը չսկսված, թիֆլիս են հավաքվում վրացական և հայկական թեոդալները և վորոշում են ապստամբություն բարձրացնել: Վրաց իշխաններից մեկն ասում ե՝ «Մենք ունենք շատ զորք, վորն իր թվով ավելի շատ ե, քան մոնղոլներինը: Ապա ինչու համար մենք շենք ապստամբում և մեր յերկիրը զեկավարում»: Բայց ինչպես յերեւում ե պատմիչների անուղղականարկներից և կասկածներից, ապստամբության շուրջը միաձայնություն շի յեղել թեոդալների մեջ, վոր վորոշ մարդիկ համարությամբ շեն վերաբերվել ապստամբության գաղափարին: Յեզ Նրանք ապստամբության նախապատրաստման մասին իրացեկ են դարձնում մոնղոլներին: Այսինքն՝ մատնում են ապաստամբությունը:

Մոնղոլներն իմանալով այդ մասին, առաջին հերթին
ձերբակալում են ապստամբության կազմակերպիչներին և
կապանքի յենթարկում, շրթայակապում։ Այդպիսով ապստա-
մբությունը գլխատվում է, բայց հակառակ դրան, ապստա-
մբությունը այնուամենայնիվ բռնկվում է հայկական և վրա-
կական մի քանի գավառներում։ Յիշիսի և լոռու շրջակայ-
քում հավաքված վիճվորական ուժերը և բնակչությունը ապստա-
մբում են մոնղոլական տիրապետության դեմ։

*Անգամ Խօրա
Բաշուն գաճան կերպով ճնշում է այդ ապստամբությունը և
մեծ կոտորածներ կազմակերպում հայերի և վրայիների մեջ։*

Ապստամբությունը մոնղոլների համար առիթ է բառնում
յերկիրը նոր ավերածության յենթարկելու։ Բնակչությանը գե-
րեվարելու և կոտորելու։ Մոնղոլների դաճանությունն որաց-
բողջ ծանրությամբ կրկին ընկնում է մողովրդի գլխին, վո-
րովինետև։ Քենդալներից և վոշ սեփի քիթը շիարյունոտվառ-
խակ հասարակ մողովուրդը այդ ապստամբության շնորհիվ
անխնա կերպով կոտորածի յե յենթարկվում։ Յեթե մոն-
ղոլներին հաջողվում է բայ գաշտում ջարդել ապստամբ-
ներին, պարտություն մատնել նրանց և կոտորած կազմա-
կերպել, սակայն նրանց շի հաջողվում անհասարակ մողովրդի
պայքարը խլացնել։ 1249 թվին նրանք ճնշում են հայե-
րի ։ Վրայիների կազմակերպվող ապստամբությունը, բայց
1250 թվին մենք տեսնում ենք մողովրդական մասսաների
պայքարի մի այլ արտահայտություն, վորը յերկայրի սրե
նման ուղղված եր թե տեղական շահագործողների և
թե արտաքին իշխողների դեմ։

Այս շարժումն արդեն ցույց է տալիս, վոր վոշ միայն
մոնղոլների տիրապետությունից ավատագրվելու համար
ազգով պայքարը, այլև յերկրի ներսում դասակարգային

պայքարը բավական սուր բնույթ եր ստացել : 1250թվին Այունիքում տեղի յե ունենում զյուղացիական մասսաների մի յելույթ : Այդ յելույթը մեր գրականության մեջ անվանվում է Դավիթ Շարենց շարժում : Ծար զյուղը, վորտեղ բնակվել ե Դավիթը գտնվել ե Խաչենի գավառում . Մեվանա լճի յեկերքին :

Արտաքին տիրապետողների շահագործմանը և հարստահարմանը միանում եր նաև ներքին իշխողների, տեղական թեոդալների ծանր շահագործումը : Ճիշտ ե , վոր այն մամանակ պայքարը ավելի սուր կերպով արտահայտվում է արտաքին տիրողների դեմ, սակայն զյուղացիության համար ստեղծված ծանր կացությունը . թե՝ իրավական սորիկացման տեսակետից և թե՝ հատկապես տնտեսական շահագործման տեսակետից . Կրոնական դրությունը թեթևացնելու համար պայքար մղել նաև տեղական ֆեոդալների դեմ :

Մոնղոլների տիրապետության մամանակ տեղական թեոդալները Հայաստանում չեին դադարել խոշոր կալվածատերներ լինելուց և շատ իրավացի յե ակադեմիկոս Մանածյանը, յերբ խոսում ե մոնղոլների մամանակ հայկական ֆեոդալների աշխուժացման մասին : Այսպէս . որինակ, մոնղոլների տիրապետության մամանակ աշխի ընկնող նախարարական տները սկսում են Հայաստանում շատանալ :

Զաքարյանները մի քանի ճյուղերի բաժանվելով տիրում եին Հայաստանի զգալի մասին . Որբենյանները Այուսիքի մի մասին եյին տիրում . Խաչենում տիրում եին Հասանյանները / Զալալ Հասանը / . Կոտայքում և Գյառնիում տիրում եյին Պռոշյաններ : Բայց այդ, ծանր եր նաև յեկեղեցու շահագործումը . Եյտպիսով հոգևորականների և հայ նախարարների շահագործումը հետ շեր մնում ուստի նշանողի հալածանքներից :

ու շահագործումներից: Այդ մասին խոսում են մեր աղջյուղը ները բավական արտահայտիչ կերպով: Որինակ ժանձակեցին ասում են՝

„Մինչդեռ սակաւ մի կազդուրեալ երկիրս ի հէնից և յապատակելոյ, բորբոքեալ աշխարհակալ հրոյս և մարդիկ ի սոսա ապաստանեալ էին առաւել քանյենսոռուած, իշխանքն զրկէին և կողոպտէին զաղբառս, և ի զրկանաց անտի գնէին հանդերձս մեծագինս և ազանէին” /Գանձակնոյի 5ջ 303/:

Մի այլ տեղ, յերբ խոսում են մոնղոլների կողմից նոր աշխարհագիր անյկացնելու, հարկա հավաքության ձևերի և մոնղոլներին գործակից դառած հայ իշխանների մասին հետևյալն են ասում:

„Այլև իշխանքն տեարք գաւառացն նոյունց գործակից լեալ ի նեղելոցն և ի պահանջելն վասն իրեանց շահելոյ” /Գանձակնոյի եջ 349/:

Ինչպես տեսնում եք, բերված տեղեկությունները խոսում են այն մասին, վոր արտաքին իշխանների հետ մասսին, Կրանցից վոչ պակաս, ժողովրդին շահագործում երն տեղական ֆեոդալները: Հասկանալի յեւ, վոր այդպիսի ծանր կացություն չեր կարող զյուղացիության մեջ առաջ շրբել վայրուց: Ընդդեմ ֆեոդալների, հատկապես ընդդեմ հոգևոր ֆեոդալների: Հոգեոր ֆեոդալները վոչ պակաս քան աշխարհիկ ֆեոդալները նույնպես շահագործում են աշխատավոր ժողովրդին: Մոնղոլները յեկեղեցուն տրծուեսական հարցում ավելի իրավունքներ ենին տալիս, քան աշխարհիկ իշխաններին: Արանք յեկեղեցուն ազատ Երին պահում հարկատվությունից և դա մոնղոլների քաղաքանությունն եր, վորովհետև դրանով մոնղոլները ճգտում ենին սիրաշահել հոգեորականներին և ոգտագործել յեկեղե-

Կուն իրենց իշխանությունը նվաճված վայրերում ամուր պահելու համար: Ահա նաև ֆեոդալական այդ շահագործման դժու ե բարձրանում ժողովրդի դժգոհությունը: Դավիթ Շարծյան կանգնում ե այդ դժգոհ մասսաների գլուխ և արտահայտուանքանու ցանկություններն ու ձգտումները: Դավիթ Շարծյան մասին պատմում ե Կիրակոս Գանձակեցին: Դավիթ Շարծյան Ծար զյուդում աշխատել ե վորապես ջրաղացան: Սայեղել ե աղքատ ու տնանկ: Գանձակեցին նրա մասին ասում ե "ի շքավորաց և տնածկաց": Նա իր ընտանիքը Կօրակորում եր ջրաղացի ստացած յեկամուտով: Այդ մարդը սկսում ե քարոզել և Կիրակոս Գանձակեցու տված տեղեկություններով, այդ քարոզը առաջին հերթին ուղղվում է հոգևորականության դեմ: Թե ինչ ե քարոզել, այդ մասին Գանձակեցին շատ վայրիվերո, աղոտ և տենդենցիով տեղեկություններ ե տալիս: Ըստ Գանձակեցին Դավիթ Շարծյան վբաղվել ե սնոտիապաշտությամբ: Իրեն նկրկայացրել ե հրաշագործ, աղոթքների միջոցով հիվանդներ բռնմոլ: Գանձակեցին ասում ե, վոր Շարծյան ծիրհանի սյուներից մի մեծ խաշ ե պատրաստում և տնկում մի դարի գյուին: ապա ժողովրդին հավաքում ե այդտեղ և քարոզ կարդուա: Նրա մոտ հավաքվում եր մեծ քավմություն և գնում ե: յին նրա մոտ վոշ միայն տեղայինները, այլ անգամ հեռու վայրերից գալիս եյին նրան լսելու: Այնուհետև Գանձակեցին ցավով հայունում ե, վոր այդ մարդիկ, վորոնք ունկնդրում եյին նրան, հավատում եյին կրա ստախուություններին:

Այս ե հաղորդում նրա մասին Գանձակեցին: ինչպես տեսնում եք, նրա տեղեկություններից քիչ քան ե պարզվում: Պարզ ե սակայն, վոր այդ շարժումը ունեցել է

Կրոնական Քող : Այդ իհարկե մեզ չի կարող շփոթեցնել, վորով-
հետև նախորդ շարժումներն անցնելիս մնիք տնսանք, թէ
ինչու միջնադարյան գյուղացիական շարժումները պատրի-
ու նենան կրոնական Քող : Բայց հակառակ Գանձակեցու-
տենդենցիով մոտեցման այս հարցին, պարզ յերեւում է, վոր
Դավիթ Ծարեցու գործունեյությունը արձագանք ե գտել
մողովրդական լայն խավերում, զյուղացիության մեջ և զյու-
ղացիությունը համախմբվել ե նրա շուրջը : Հոգևորական-
ներն ու իշխանները փորձուց են խափանել Դավիթ Ծա-
րեցու գործնեյությունը, բայց նրանց չի հաջողվում այդ:
Այդ մասին վկայում ե ինքը՝ Գանձակեցին:

"Սապա ձեռն արկեալ եպիսկոպոսին և Երիցանցն, կամէին
կործանել պիտան, զոր կանգնեաց մոլարն: Յարեան ամօնայն
ամբոխ բազմութեանն սրովք և բրովք, կամէին սպանանել
կնոսա . և նոյա արտօախ ելեալ յամբոխէն, անիծնեցին ասս-
տիւք վյանդգնեալսն" / Գանձակեցի էջ 312/:

Այս տեղեկությունը վոշ մի կասկած չի թողնում, վոր
Դավիթ Ծարեցու շարժումը . պաշտպանվել ե զյուղացի-
ների կողմից : Սակայն հետագայում Դավիթ Ծարեցին ձեր-
բակալվում ե : Նա պատճվում է յեկեղեցու կողմից և սուրբ-
վաճ ե լինում այլես շգործելու խոսք տալ յեկեղեցուն:
Ձերբակալվում ե խարդախ ճանապարհով : Ինչպես յերեւում ե
տեղեկություններից, նրան շրջապատող վորոշ անձնավորու-
թյուններ կամ վախենալով յեկեղեցուց, կամ կաշառվածով հանձ-
նում են նրան յեկեղեցու ձեռքը : Դավիթ Ծարեցուն ձերբա-
կալելուց հետո Գանձակեցին այլես լուստ շարժման
հետագա ընթացքի մասին : Ասբողջ գործունեյությունը նա
կապում է միայն Դավիթ Ծարեցու հետ:

Ինչպես տեսնում եք, սա շահագրծող դասակարգ:

Նկատմասբ գյուղացիության ունեցած դժգոհության դրսեվորման մի դեպք է: Իհարկե, չունենալով լրիվ տեղծկություն այս մասին, ամբողջը վեր հանել այն ծավալով, ինչ վոր այն ժամանակ յեղել է, հնարավոր չե, բայց դեպքն ինքնստիճայա նշում ե դասակարգային պայմանի սրման, դասակարգային պայմանի դրսեվորման մասին: Խմիջի այլոց, յերբ խոսք ե լինում այս մասին, վորոշ չեն կերներ կասկածի տակ են դնում այդ շարժումը հետեւյալ փաստարկումով, վոր դավիթ Շարեցին կարող ե բախտախնդիրներից մեկը լինել և ոգտագործել այդ հանդամանքը իր անձնական նպատակների համար: Փակագծերում ասենք, վոր միջին դարերում, իհարկե յեղել են դեպքեր, յերբ բախտախնդիր մարդիկ ցանկացել են ոգտվել հանգամանքից սակայն դավիթ Շարեցուն վերաբերաղ փաստերից շիյերեւում, վոր նա բախտախնդիր մարդ ե յեղել: Նուա աղքատ լինելը, հապիլ հակ ընտանիք պահելը, մողովրդի հետ կապված լինելը, ասում ե, վոր այդ բախտախնդրությունը կրանից սպասել մի քիչ դեմ ե տրամայանության: Բացի այդ կարող ենք յենթադրել, վոր դա վորպես առանձին անձնավորություն ցանկանա ոգտագործել մողովրդի ցասումն իր անձնական շահերի համար: Արդյոք դա կարող եր միտել գյուղացիության մղած պայմանը շահագործողների դեմ: Իհարկե շեր կարող: Փաստն այն է: սակայն, վոր գյուղացիության մեջ յեղած դժգոհությունը տիրողների դեմ դրսեորպել ե այդ ծեռվ և տվյալ դեպքում այդ գյուղացիությանը գլխավորել ե Շարեցին: Թեև այդ շարժումը նախորդ շարժումների հետ համեմատած մի բանի գլխով ցածր է յեղել և իր գործու-

Նեյությամբ և ծավալով և իր իդեական հագեցվածությամբ:

Սոնդու Նվաճողները ճնշում են Հայաստանում և Վրաստանում իրենց բռնկված ապստամբությունները: Արանք միաժամանակ ճնշում են և զյուղայիական յԵղութերը թե՛ իրենց և թե՛ տեղական իշխանների դեմ: Այդ ապրուտամբությունը ճնշելուց հետո մոնղոլական տիրապյանությունը Հայաստանում ամրանում է: Արանց տիրապյետությունը Հայաստանում և Անդրկովկասում, ավելի ճիշտ կինի ասել՝ ամբողջ առաջավոր Ասիայում, ամրանում են հատկապես յԵրբ Անդրկովկաս ե զալիս մոնղոլական մի նոր զորավար, մի նոր հրամանատար՝ Հուլառուն:

1252 թվին մոնղոլական կենտրոնական իշխանության գլուխն ե անցնում Մանգու ղանը: Յերբ նա բարձրանում է մոնղոլական կենտրոնական պետության գլուխ, Նվաճված յԵրկրները բաշխում ե իր ազգակիցների միջև: Ահա այդ ժամանակ նա դեպի արևմուտք ե ուղարկում ավելի շուտ՝ դեպի առաջավոր Ասիա յԵ ուղարկում, իր յԵղբայր Հուլառուն: Հուլառուն ամբողջ 2-3 տարի ճանապարհորդություն կատարելով, այսպես լուրջ բավականին ընդարձակ, լայնա ծավալ յԵրկրներ՝ 1255 թվին արդեն լինում ե Անդրկովկասում:

Հուլառուի առաջին ձեռնարկումը լինում է այն, վոր ամրացնում և հաստատուն ե դարձնում մոնղոլական տիրապյետությունը փոքր Ասիայում և Միջագետքում: Հուլառուի առաջնա հերթ գործն ե դառնում Նվաճել և իրեն յԵնթարկել դեռևս իր գոյությունը շարունակող Խալիֆութիւն: Բաղդադը՝ Մերձավոր Արևելքի աղոթակավոր Քաղաքը, դեռևս գտնվում եր Խալիֆաթի:

ՃԵՐՔԻՆ: Այնտեղ նստում եր խալիքը՝ Մահմետական
դավանանքի պետը, վորը Քիչ գեր շեր խաղում մոն-
ղոլների դեմ մուսուլմանական տարրերին զրդույու և
վոտքի հանելու գործում: Մանավանդ վոր այդ շրջա-
նում, հատկապես Հուլառոյի իշխանության շրջանում,
ուժեղանում ե Քրիստոնեական պրոպագանդը և ագի-
տացիան մոնղոլների մեջ ու տեղ-տեղ նոցնիսկ այդ
պրոպագանդը հաջողություն ե ունենում: Ահա այդ
ժամանակ մոնղոլական նոր հրամանատարի առաջ
ձառանում ե բաղդադի գրավման հարցը:

1258թին մոնղոլները կազմակերպում են մի արշա-
վանք դեսի հարավ. դեսի Միջագետք: Դեսի Միջագետք մոն-
ղոլները առաջին արշավանք կազմակերպել են դեռևս Բա-
շույի ժամանակ 1244թին: Նվաճել են մի շարք յերկրներ
ու բաղաքներ, բայց այդ արշավանքի ժամանակ նվաճված
Գավառների մեծագույն մասը հետագայում մոնղոլների տի-
րապետությունից դուրս եր յեկել: Յեզ ահա Հուլառուն նո-
րից վերագրավում ե այդ քաղաքներն ու գավառները:
Վերագրավված քաղաքների ու գավառների մեջ են ծեզ հայտ-
նի մի շարք քաղաքներ – Յեղեսիան, Ամիդը, Խառանը, Դա-
մասկոսը, Հալեպը և այլն: Բայց մոնղոլների այս արշավանքի
կիզակետը Բաղդադի գրավումն եր: Բավականին հետաքրքիր
պատմություն կա Բաղդադի գրավման մասին: Արաբական
խալիքաթը թեև թուլացած, բայբայված, այնուամենայնիվ հա-
մարվում եր մուսուլմանական աշխարհի կենտրոնը: Զգալով
մոտալուտ վտանգը, արաբական խալիքաթը փորձում է դի-
մադրել փորձուց ե պաշտպանվել, բայց մոնղոլները ճառ-
դադը յեղկար պաշարելուց հետո կարողանում են գրա-
վել նաև այս, 1258թին: Վերցնելով Բաղդադը մռնղղլա-

կան զորքերը թալանի յեն յենթարկում այդ հարուստ քաղաքը և գլխատելով արաբական վերջին խալիֆին վերջ են դնում այդ պետությանը :

Բաղդադը նվաճելուց հետո մոնղոլների հերթական խնդիրն ե դառնում արշավել մամլուկների վրա, բայց այստեղ մոնղոլները հանդիպում են համար դիմադրության և մամլուկների հետ ընդհարվելիս մոնղոլական բանակը պարտվում է և ստիպված է լինում դադարեցնել իր արշավանքը դեպի Յեզիրատոս։ Մամլուկները, վորոնք, ինչպես գիտեք, իշխում եյին Յեզիրատոսում և հետագայում առաջացել եյին դեպի Ալ Իրա, Պաղեստին։ Միջին Ասիա, այդ ժամանակ առաջ վոր Ասիայում հանդես եյին գալիս վորպես Քաղաքական ամենախոշոր ուժ։ Նրանք կարողանում են վոշ միայն կասեցնել մոնղոլական արշավանքները այլև հետ շպըտել մոնղոլական բանակին։ Հենց 1260 թվականին մամլուկների կողմից մոնղոլներին հասցրած հարվածներն զգոր փրկեցին Պաղեստինը և Յեզիրատոսը մոնղոլական վորքերի ասպատակումից։ Այդ եր պատճառը, վոր մոնղոլները շկարողացան առաջ խաղալ դեպի Յեզիրատոս, իսկ նրանք Յեզիրատոսը գրավելու մեջ տենչանք ունեյին։

Մամլուկների դիմադրությունը և մոնղոլների դեմքաստորեն տարված հաղթանակն ըստ եյության վերջ ե դնում մոնղոլական վորքերի նոր նվաճումներին, նոր խոշոր արշավանքներին դեպի արևմուտք։

1260 թվի սկզբին պատերազմական դրությունը մերձավոր Արևելքում փաստորեն վերանում է և ձեզավորվում է մոնղոլական արևմտյան եղանությունը

Հովառոյի գլխավորությամբ : Բանն այն է, վոր 13-րդ դարի 60-ական թվականների սկզբներին քաղաքական ու վարչական տեսակենտրի Մոնղոլական այդ լայնածավալ, աշխարհակալ պետությունը բաժանվում է մի քանի մաս սի : Դրանցից մեկը Հովառոյի գլխավորած եղանությունն եր, վորի մեջ Եյին մտնում՝ Պարսկաստանը, Միջագետքը, Անդրկովկասը և փոքր Սիմայի արևելյան գավառները : Այդ Մոնղոլական պետությունները չնայած, վոր վարչական քաղաքական տեսակենտրի իրարի բանված Եյին, բայց այնուամենայնիվ իրար հետ կապված Եյին ֆորմալ հարաբերություններով : Թե՛ Վրսկեհորդան և թե՛ արևմտյան ելղանությունը ծևականորեն ընդունում Եյին կենորոնի՝ Մոնղոլիայում նստող դանի, կամ այլ տերսինով ասած խաքանի իրավունքներն իրենց վրա : Այդ իրավունքները շատ ծևական Եյին : Ծևական այն իմաստով, վոր նա միայն համարվում եր մեծ դան, վորին պարտավոր Եյին լսել մյուս ները, յեթե վորեւ Կարգադրություն արվեր նրա կողմից : Տրադիցիոն մի յերեւություն եր այդ, վորը սակայն վորեւ Եյական գերիշխանություն մյուս պետությունների համար շուներ, իսկ հետագայում 14-րդ դարում, վերանում նաև այդ ծևական կապը :

Հայաստանը նույնպես մտնում եր Հովառի եղանության մեջ : Մոնղոլները նվաճելով Հայաստանը, կարևոր վայրերում նշանակում Եյին իրենց կառավարիչներին, վորոնք անվանվում Եյին « Ծահնա » : Այդ շահնաները համարվում Եյին տվյալ գավառների, շրջանների կամ քաղաքների կառավարիչները : Արանց իրավունքները բավականին լայն Եյին : Արանք դառնում Եյին իրենց յենքականների բացարձակ իշխողները :

Արանք վոշ միայն հանդես եյին գալիս վորպես սոնղու-
լական տիրապետության քաղաքական ներկայացուցիչ-
ներ, այլև դատավորներ, հարկահավաքներ, հարկ նշա-
նակողներ։ Այդ շահնաների մասին մեր պատմիչներից
հիշատակում են՝ թե՛ Մադաֆիա սիբեղան և թե՛ Կի-
րակոս Գանձակեցին։ Կիրակոս Գանձակեցին Արանց համա-
րում է հարկահավաք վոստիկաններ։ Բնակչությունը յեն-
թարկվում է այս շահնաների։ Հարկահավաքների բաւահա-
ծույթներին, կամայականություններին, դաժան վարվելակեր-
պին։ Արանք պարզապես սկսում են կողոպտել, գջել ժո-
ղովրդին։

Հովառոցի իշխանության առաջին տարիների ընթաց-
քում Հայաստանում, ինչպես և Հայաստանի հարեան յեր-
կարներում, անց ե կացվում աշխարհագիր։ Այդ աշխարհա-
գիրի նպատակն եր նորանոր տուրքեր, հարկեր նշանակել
և ուժեղացնել հարկապահանջ։ Այդ աշխարհագրի զեկա-
վարները յեղել են Արղուն և Թորա աղան։ Արղունին և
Թորա աղային աշխարհագիր անցկացնելու և նոր հար-
կեր դնելու յե ուղարկում Մանգու զանը։ Աշխարհագրի-
րը անց ե կացվում 1253-55 թվերին։ Վարդան պատ-
միչն այդ աշխարհագրի ժամանակը համարում է 1253
թիվը, բայց Գանձակեցին և Որբելյան աշխարհագրի
ժամանակը համարում են 1254 թիվը։ Այս աղբյուրներից
մենք տեսնում ենք, վոր աշխարհագրիր տեղի յե ունե-
նում Հովառոցի իշխանության սկզբի տարիներին։ Գան-
ձակեցին կարագրում է այդ աշխարհագրի անցկա-
ցումը։ Յես կուզենայի կարդալ ծեփ այդ հատվածը։
Ահա նա։

Արդ յօրն հարկը և երեք թուականին հայոց առաքեաց

Մանգու զանե, և մեծ զօրավարն Բաթռ, զայր մի ոստիկան,
 Արդուն անուն, որ ի զիեց զանէն առեալ էր հրաման վերակա-
 յութեանն, հարկաց արքունի ի հնապանդեալ աշխարհայն, և
 միւս նորի զիխաւորաց ի տանէ Բաթռուն, որում անուն էր
 Թորա Աղա, հանդերձ այլովք բազմօք, որ Ընդ նոսա, աշխար-
 հագիր առենջ յամենայն ազգս, որ Ընդ ծեռամբ նոցա էրն
 հնապանդեալ : Եւ նոցա առեալ զայս հրաման, Եղին Ընդ աշ-
 խարիս ամենայն կատարել զգործն . հասր և յաշխարս հա-
 յոց և վրաց և Աղուանից, և որ շուրջ զնորօք գոււառք,
 սկսեալք ի տասնու մինից և ի վեր Ընդ գրով համարոյ
 արկաննել զամենեար, Քայ ի Կանանց : Եւ յամենեցուն պա-
 հանգեալ խստագոյն հարկոյ աւելի Քան վիար Մարդոյն, և
 սկսան չքաւորիլ : Ե. Նեղեին անհնարին Կոտանօք և շար-
 շարանօք և գելոցօք . և որ Թազշեր՝ ընթրոնեալ սպանա-
 նէին, և որ ոչ Կարեր հասուցանել զստին՝ զմանկուն նո-
 ցա առնուրն ընդ պարտոցն, Քան փի պարսիկ տաճկա-
 հաւատօք և սպասաւորք շրջեին : Այլև իշխանքն տեարք
 զաւառացն նոցուն գործակից Լեալ ի նեղելոցն և ի պա-
 հանգելն զասն հերեանց շահելոյ . և այսու ոչ Բաւուկա-
 նացան, այլ և զամենայն արուեստագէտս, Եթէ ի Բաւզար
 և Եթէ ի գիւղս, զամենայք ի հարկի Կայուցին : Այլ և զնո-
 վակս, և զիին Ճկնորսաց . և զերկաթահանս, զդարբինս, և
 զշապարարս, և սի պիտոյ Է Մանրամասնաբար ասել, զա-
 մենայն գուրքն շահեց հատիկ ի Մարդկանէ, և ինքնանք
 միայն շահեին . և զամենացն աշխանս առին . որի Կողք, և որ
 յայլ Կողման : Նաև ի վաճառականաց Բազուտ թէն շահելոյ . Կո-
 տոցին զանձն սաստիկս ունեցոյ և արծաթոյ և ականք պատուաեալոց,
 և այսպէս զամենեար սպասուցեալ, և վայր և արժարով դստա
 զաշխարհն, Թողին շար ոստիկանս ի վերաց աշխարհացն վեցու պա-
 հանգել յամենայն ասդ, նովին համարով և գրով : / Գանեալիու, օք 348-349/

- 15 -

Աշխարհագիր անցկացնելու ժամանակ հարկերի նշանակ-
ման մեջ վորոշ փոփոխություններ են տեղի ունենում: Այս
անգամ հարկերը հավաքում են ըստ աշխատող ձեռքի: Ենոյ
այդ նպատակով ել նրանք անց են կացնում մարդահա-
մար և ցուցակագրում են աշխատող տղամարդկանց: Աւ-
նենք տեղեկություններ այդ մասին: Անպայման ունենք: Վոչ
միայն այն վոր աշխարհ ^{բացի}! Ե անցկացվում, վորտեղ
գրվում եր աշխատող ձեռքը, այլև ունենք վկայություններ,
վոր հարկը նկառում են հաշվել ըստ մարդագլխի: Բայց
աշխարհագրիկ, վորով հարկ են դնում ժողովրդի վրա,
հատուկ հարկեր են նշանակում նաև ինքը Հովառն:
Այդ մասին հետևյալ տեղեկությունը կա:

«Այլ և միւս ընթաց այլ բազումնեն, որ եղաւ յերդունէն մա-
տի և փախչուրի. եղաւ հրաման ի Հովառուէն պահանջան հար-
կի, վոր թաղարն ասեն, յամնայն զիսոյ՝ որ մտեալ եր հ
զիրն արքունի, պահանջէն հարիւր շիտր ցորեան, յիտու-
լիտր գիսի. երկու լիտր բրինձ և ծնձատ, երեք տոպրակ,
երկու չուան՝ մի սպիտակ, մի նետ, մի նալ թող զայլ կաշառն
և բան անասնոյն. մի անասուն և բան ստակ, և ոյր
ոչ գոյր, կուստերս և զդստերս առ նուրին-ընթ պահանջ-
մանն. և այսպէս նեղացաւ և տառապեցաւ ատեռայս եր-
կրի: / Գանձակեցի, եզ 359-360/

Այդպիսով մենք տեսնում ենք, վոր ըստ պատմիչների
տված տեղեկությունների հարկը հավաքվում եր ըստ մար-
դագլխի: Յեկ հավաքվում եյին բազական ծանր հարկեր:
Վորոնք են այդ հարկերը՝ հողային հարկ, մալ, անասնահարք,
ճանապարհահարք, զիսահարկ: Յենթարիվուար եյին հարկագլոր-
ման՝ ար հետավորները, առետրականները, ձկնորսության
օբյեկտները, հանքերը: Հարկահանությունը, ըստ յեղած տե-

Ղեկությունների կատարվում եր բավականին դաժան կեր-
պով, բավականին խիստ կերպով։ Այդ մասին մեզ արդեռ
վորոշ տեղեկություններ ե տալիս Մաղաքիա աբեղան։
Նա ասում է, թե Արզուն անունով մի թաթար յեկավ
Մանգու ղանի հրամանով և հարկի համար հաշվառման
յենթարկեց, համրեց արեւելյան յերկերը։ Յեզ այսուհե-
տեղի հարկը առնում եր ըստ մարդկանց գյուաթվի։ Յեզ
այդպես ավերեցին արեւելյան աշխարհը, վորովհետև
մի փոքր գյուղում 50 մարդ եյին համարում 15-60
տարեկան հասակ ունեցողներից և յուրաքանչյուրից
հավաքում եյին 60 սպիտակ։ Իսկ ով փախչում եր կամ
թագնվում, յերբ բռնում եյին, վոտքերն ու ծեռները կա-
պում եյին, ապա-դալար ճիպոտներով ծեռում մինչև
արնաշաղախ դառնալը։ Այդպես արյունլվա նրանց գը-
շում եյին նկուղները և շներին արձակում նրանց վրա։
Իսկ Գանձակեցին հաղորդում ե, վոր ովքեր շեյին կա-
րող հարկը վճարել. տանում եյին նրանց վավակներին։

Անպայման պատմիշների տվածների մեջ կան վո-
րոշ շափականցություններ։ Դա յերեւմ ե հենց նրամբ,
վոր Մաղաքիա աբեղան ասում է, թե աշխատող ձեռքը
հաշվում եյին 15 տարեկանից, իսկ Գանձակեցին ասում
է, թե հաշվում եյին 10 տարեկանից։ Կամ այն մասին,
վոր ամեն մի աշխատող ձեռք պարտավոր եր տալ
100 լիտր յորեն, 50 լիտր գինի և այլն։ Դա ևս շա-
փականցություն ե այն իմաստով, վոր պատմիշները գի-
նին վորպես հարկ վերցնելը վերագրում եյին բոլոր վա-
րերին, մինչդեռ մենք գիտենք, վոր գիսին հավաքում
եյին այն վայրերից, վորտեղ խաղող եր լինում։ Իհար-
կե շափականցություն չե այն, վոր այդ հարգերը յեղել.

են, բայց շահիապանություն կա հարկի բանակի մասին։ Սակայն այդ ժի մեջմասնում հարկապահանջման այն դաշտը ծեերն ու շափերը, վորոնք յեղել են մոնղոլների տիրապետության ժամանակ։ Արդյոք միայն հայկական կամ վրացական աղբյուրներն են խոսում այդ մասին։ Վոշ-այդ մասին խոսում են նաև արաբական աղբյուրները, պարսկական, ռուսական աղբյուրները, և բոլոր դեպքերումնել ընդգծվում են մոնղոլական իշխողների հարկահանության խիստ քաղաքականությունը։ Այս դաժանությունների հետեւանից լինում ե այն վոր քայլացվում գյուղացու տնտեսությունը, յերկիրը սկսում ե աղքատանալ։ Այստեղ մենք պետք ե հաշվի առնենք մի հանգամանք ևս վոր բայի մոնղոլ նվաճողների զանձած հարկերից, զյուզացիությունը խոշոր հարկեր եր վճարում նաև տեղական ֆեոդալներին։ Աղբյուրները վկայում են, վոր զյուղացիներից ավելի հարկ ենին հավաքում, քան կրանց կարողությունն եր։

Ըստ հարկապահանձության հետեւանիցով, հատկապես մարդահամար անցկաց հետո, բնսկչության մոջ սկսվում եր խորը դժգոհություն, սկսվում ե Մի հոսանք, Շողենել Բեռանալ իրենց վայրերից՝ ազատվելու համար հարկահավաքների ձեռքից։ Այդ հարկային ծանրությունը իր ամբողջությամբ ընկնում եր առաջին հերթին աշխատավոր ժաղովրդի վրա, սակայն այդ հարկապահանջության ժամանակ տուժում եյին նաև տեղական ֆեոդալները։ Այս հանգամանքը նրանց մոջ ևս առաջ ե բերում դժգոհություն մոնղոլ-տիրապետողների գետ։ Քայլաստանում ու վրաստանում նորից խորոշում են աղքատամբական տրամադրությունները և կրկին բարձ-

վում ե հայ-վրացական սպատամբությունը մոնղոլների դեմ:

1261 թվին Վրաստանում և Հայաստանում բռնկվում ե մոնղոլական տիրապետության դեմ յերկրորդ սպատամբությունը, վորի գլուխ անցնում են տեղական քեոդակները: Ապստամբության կենտրոնը կրկին դառնում է արևելյան Վրաստանը, ուր իշխում եր վրաց Դաշիթ Թագավորը: Վորի շուրջը համախմբվում են և վրացական և հայկական նախարարները: Ապստամբներն ամրանում են ամուր վայրերում և հաճախակի հարծակվում են մոնղոլ զորքերի վրա ու ջարդում նրանց: Ապստամբության կողման են անցնում Շիրակի նախարարները, ապա Խաչենի շրջանի Զալալ Հասանը և մի շարք ուրիշ նախարարներ: Այս ապստամբությունը կրում է պարտիզանական յելույթների բնույթ: Մի շարք տեղերում հրաժարվում են յենթարկվել մոնղոլական գերիշխանության, սակայն ապստամբները բաց ճակատամարտի դուրս չեն գալիս մոնղոլական զորքերի դեմ: Նրանք ամրանում են անսոհի վայրերում և սկսում պարտիզանական գործողություններ մոնղոլական զորքերի դեմ: Այս ապստամբության հիմնական սխալն այն է, վոր ապստամբութերը չեն մթանում և մի ընդհանուր միություն կազմում, այլ առանձին առանձին ամրանում են իրենց բերդերում և պարտիզանական կորիւ մղում մոնղոլների դեմ: Վասպ Դաշիթ Թագավորը ամրանում է Ավանեթիքայում: Մի քանի հայ նախարարներ ամրանում են Հայաստանի լեռներում: Այդ ե պատճառը, վոր մոնղոլներին, թեև բավական համառ ջանքերից հետո, հաջողվում է հազթանակ լեռնել ապստամբների նկատմամբ և մահապատճի յեն-

թարեկել նրանց ղեկավարներից ամի բանիսին, ինչպես որին առկ Զալալ Հասանին, Լոռու և Շիրակի ֆեոդալ նահընշանի վորդի Զաքարեանին: Ապստամբությունը ճընշելուց հետո յերկրի բնակչության գրությունն ել ավելի յէ վաժթարանում: Նրանք սկսում են քայլայվել տնօտենապես և հեռանալ յերկրից: Ակնվում ե տեղական բնակչության զաղթը դեպի հեռավոր յերկրներ: Հարկահավաքման այդ ծանր վիճակից մասամբ զերծ եր միայն հոգեորականությունը, վորի ունեցվածքը տուշուների կողմից հարկահավաքման շեր յենթարկվում: Յեկ հոգեորականներն ել ոգտվում են այդ առիթից, ոգտվում են մողովորդի ընշակրկությունից և իրենց ձեռքում կուտակում են բավական հարստություն: Իոյի ընդարձակ տարածություններ: Այս շրջանից լանքապատկան կալվածքները սկսում են բավական ընդարձացվել: Այս յերեսուցի վրա ավելի մարդամասն կանգ կառնենք հետո, յերբ հարմար առիթ լինի:

Հուշառույի հետո, Հուշառույի հաջորդների ժամանակ,
ելղանությունը սկսում է թեակրտել իր ալգորիթմանը շրջանը:
Ճիշտ ե Հուշառույի հաջորդ Աբաղա զանը, վրայ լշխու և
1265- 82 թվերին, կարողանում է կատեցել վոսիե նորու
յի մի արշավանքը դեպի Անդրկովկաս և պարուուքան
մատնել միջին Ասիայից Պարսկաստանի վրա արշավող
Մոնղոլներին. սակայն այդ հաջողությունները Աբաղայի
պնդության վրա կատարված արշավանքների դեմ դեռ-
և շեր բնորոշում Աբաղայի իշխանության ռազմակա-
լարողությունը, հսկորությունը և վրա քաղաքական կայու-
թությունը: Աբաղայի ելղանության թուշացումը պարզված
է, յերբ նա բաղխվում է մամլուկների հետ:

Յեթի հյուսիսից և արևելքից Եղանության վրա կատարված հարծակումները հետ են չպրտվում, այս արևմուտքում Մամլուկների հետ ընդ հարվելիս Եղանությունը պարտություն է կրում: Արաղայի ժամանակ Մոնղուների վորքորը Մամլուկներից պարտվում է 1277 թվին, 1281 թվին և հաջորդաբար: Հենց այդ պարտություններն եղ նպաստեցին Մոնղոլական արևմույթի Եղանության ռազմական իրողության տկարացմանը:

Արաղա զանից հետո Եղանության գլուխանենք Բարձրանում Մի շարք նոր զաներ, վորոնք շատ կարճ ժամանակ են իշխում և նրանց մեջ մասն ել իրենց վախճանը գրտնում են դավադրությունների և սպանությունների մեջ. դավադրությունները վորոնք ավելի նյիւ խորացնում քայլայումը.

Ճիշտ եւ լինում են առանձին մոմենտներ, յերբ այդ Եղանությունն իր ուժերի վերականգնման, իր ուժերի հզորացման նշաններ եւ ցույց տալիս: Ահա այդպիսի մոմենտներից մեկն եր 13-րդ դարի վերջը և 14-րդ դարի սկիզբը: Այդ ժամանակ զահի բարձրանումը Ղազան զանը /1295-1304 թիւ/։ Վորի ժամանակ Թավրիկը ել ավելի հաստատու կերպով դառնում է Եղանության կենտրոնը: Ղազան զանի ժամանակ Մոնղոլները փորձում են ծեռք բերել Նախիին ուժը, փորձում են Կասեղնել կենտրության քայլայումը և վերակազմակերպել այն: Իսկ պետությունն այդ ժամանակ քայլավում եր թե տնտեսակեռ և թե Քաղաքականակեն: Ղազան զանի ծեռնարկած միջոցառումների մեջ աշխի յե ընկնում այն հանգամանքը, վոր նա ծգտում եր բարձրացնել յերեք տնտեսությունը, իսկ այդ ժամանակ արևմույթի Եղանության հսկայածավալ տերի տորթացում տնտեսությունն իր բալոր ճյուղերով ընդ հանրակեն գնում եր գեղի անփուստ:

Տնտեսության քայլայումը կանխիղու նպատակով նա հաստարում եւ մի քանի ուժքորմներ հարկահավաքություն բնագալառում և տնտեսության մի քանի ճյուղերի վարդապան բնագավառում։ Առաջին փոփոխությունը՝ վոր նա մուծում եւ հարկային Քաղաքականության մեջ, այն եր՝ վոր նա անցկացնել եւ տալիս աշխար հագիր, վորոշակի յեւ դարձնում հավաքվող հարկերի շափն ու Քանակը։ Երառավարական հասուկ վորոշումով պատճիծ եւ Նշանակում այս մարդկանց, վորոնք Նշված հարկից զատուրից հարկեր Կվերցնեն։ Այս հաստատում եւ տարիա մեջ հանրկերի մուծման յերկու հերթ, Նշանակում եւ մամկներ մեջ թե յերբ այդ հարկերը պետք է մուծվեն։ Հարկահանույն այս նոր կարգը գրի յեւ առնվում հասուկ տախտակների վրա և փակցվում յուրաքանչյուր գյուղի հրապարակում։

Ինչն եր ստիպում մոնղոլական եղանությունը հարկահավաքման այսպիսի նոր կարգ հաստատել և ինչ նպատակ ուներ այդ։ Բանն այն եւ, վոր մոնղոլական եղանությունն այս շրջանում Փինանսապես կրախի յեր մատնվել։ Ղազան ղանը պետական գործերը տնորինելու համար միջոցների պակասություն եր զգում։ Նա չեր կարող վճարել իր զորքի ոռօճիկը։ Չեր կարող նվերներ տալ իր զորքին։ Իսկ Ղազան ղանի շրջանում մոնղոլներն իրենց զորքի համակրանքը գրավում եին մեծ մասամբ նրանց նվերներ տալով և բարձր ոռօճիկ եղանակելով։ Մոնղոլական եղանության գանձարկղը դատարկ եր, չեր ապահովում եղանության ծախքերը։ Այս ինչ դրան հակառակ, գյուղացիության վրա դրվել եյին բազմաթիվ հարկեր ու տուրքեր և գյուղացիությունն իր յեկարու տի մեծագույն մասը վճարում եր վորպես հարկ, վորպես տուրք։

Առաջվում եր հետեւյալ պատկերը: Մի կողմից զյուղապիու-
թյունը վճարում եր բավական ծանր հարկեր ու տուրքեր,
իսկ մյուս կողմից այդ տուրքերն ու հարկերը շեյին մըտ-
նում պետական գանձարանը: Այս ուր եյին գնում: Շատ
հասկանալի յէ, վոր այդ տուրքերն ու հարկերը մեծ մա-
սամբ գնում եյին հարկահանների: Մաս իշխաննե-
րի, իսաների, ամիրաների գրապանները: Արանք մոնղոլական
այդ կառավարիչները կամ արդիական արտօն հայոտությամբ առան
մոնղոլական շինովնիկները ֆմահած կերպով զյուղապիներից
վերացնում եյին և յուրացնում եյին բազմաժանակ տուրքեր:
Հինովնիկների այդպիսի գործունեյությունը հարկահանության
բռագալառում վոր միայն վրկում եր պետական գանձարա-
նու անհրաժեշտ յեկամտից, այլև արգելակում եր յերկրի տրն-
տեսության զարգացումը: Շատ աղբյուրներ նշում են այն
հանգամանքը, վոր յերբ մոնղոլների հարկահանները մտնում
եյին գյուղ, զյուղապիները թագնվում եյին ընդհատակյա
փորփածքներում, նրանք պատսպալիմում եյին: Որերով ու-
շաբաթներով դուրս շեյին գալիս այդ թագստատներից, վոր
պեսցի իրենցից հարկ շվերցնեյին: Արանք իհարկե շեյին վճա-
րում հարկը վոր միայն այն պատճառով, վոր շեյին ու-
զում վճարել, այլև այն պատճառով, վոր նրանք վոշինչ շո-
նեյին հարկը վճարելու համար: Ակնին: Բազմաթիվ տեղե-
կություններ կան այն մասին, վոր յիրենց տնտեսության քայ-
քայման պատճառով թողնում եյին դյուզերը, զնում եյին
հեռավոր յերկրներ: Այդ փաստները շեն վերաբերում միայն
հայաստանին: Արանք վերաբերում են նաև ազող եղան-
ուության:

Մոնղոլական դանը իր ձեռնարկումներով ձգտում եր
վերջ տալ այն շարաշահությանը, վորը կատարվում եր մա-

Դուշական շինովնիկների կողմից հարկահանության բնակավառում:

Յերկրորդ փոփոխությունը՝ վոր նա կատարում է հարկահանության մեջ, այն եր, վոր կարգավորում է ճանապարհային հարկը, վոր նա կրծասում է մոնղոլական պաշտոնյաների յոթենեկությունը: Բանն այն է, վոր այդտեղ նույնպես մոնղոլ պաշտոնյաներն ենին շարաշահում: Ամեն մի մոնղոլ պաշտոնյա իրեն իրավունք եր վերապահում կնրակրվել զյաւղայիության հաշվին, վերցնել նրանից ինչ իրեն դուք եր գալու, ոգտվել նրա փոխադրական միջոցներից և այլն: Ուրիշ խոսքով, նրանք թարանում ենին բնակչությանը, իսկ այդ ատիպում եր բնակչությանը թողնել մեծ ճանապարհների շրջակայքը և հեռանալ այդտեղից: Ստացվում եր այնպիսի դրություն, վոր մեծ ճանապարհների շրջակայքը դառնում եր խոպան, անմարդաբնակ: Ահա այս յերեւլույթը վերացնելու նպատակով մոնղոլական ելզանը կրծատում է յերթեվեկողների իրավունքները արգելում ե ամեն մի պաշտոնյային յերթեկել պետության միջոցով, կրծատում է նաև սուրհանդակների թիվը: Ճանապարհային պունկտերում հաստատել ե տալիս վորոշ կարգ և այդ պունկտերում պահել ե տալիս պետական ծիեր, վորոնցով պետք ե յերթեկելին սոմհանդակները:

Այսուհետեւ վորոշ բարեկարգություն ե մասնում շափ ու կշռի մեջ: Մինչև զապան զանը ելզանը թյան տարբեր վայրերում գործադրում ենին տարբեր շեր ու կշռները ընդվորում այդ շափ ու կշռների մեջ պաշտոնյաները հսկայական ոգուտներ ենին ունենում և ոգտվելով այդ հանգամանքից այստեղ նույնպես շարաշահում ենին:

Նա կարգադրում է, վոր Եղանոթյան բոլոր սահմաններում հաս-
տատեն ստանդարտ սիատեսակ շափու Կշիռ: Այս բարեփոխու-
թյունը շափ ու Կշիռ բնագավառում ունենում է յերկու-
նպատակ: Նախ այն, վոր Նա կարգի կ'ըստ հարկը հաշվե-
լու գործը, վորոց պարզություն կմտցներ հարկի հաշվան-
ման մեջ: Յեզ յերկրորդ կնյաստեր յերկրի Ներքում ա-
ռեւտրի և փոխանակության պարզացմանը:

Այդ բոլորից բայի Ղազան զանը իրախուսում է
նաև գյուղատնտեսության պարզացումը: Եռանձին զարկ
ե տալիս նախագնացությանը իր պետության հարավա-
յին և հյուսիսային մասերում: Արանով Եղանությունը
ճգուռում եր աշխուժացնել յերկրի տնօնեսությունը:
Քեհարկե կրկին յելնելով իր գանձարան մոռող յեկամոր
շատացման նպատակից: Մուռավորապես սրանք են այն
բարենորոգությունները, յեթե իհարկե կարելի յե բարենո-
րոգում անվանել, վորը մուծվում են Ղազան զանի կող-
մից:

Այդ բարենորոգումները չեն կատարվում յերկրի արե-
տեսական կյանքի ընդհանուր վայրեջքը: այդ բարենո-
րոգությունները չեն ազատում գյուղացիությանը ծանր
շահագործումնից, արհեստագորությանը ծանր հարկացա-
հանգությունից: Յեզ թեև այդ բարենորոգությունը վորոց
շափով սահմանափակում է մոնղոլական շինովնիկների կա-
մայականությունները, ֆայզ աթմատական փոփոխություն
մտցնել յերկրում չեր կարող: Եղանությունը Ղազան
զանից հետո ավելի արագ կերպով գլորվում է քե-
պի անդունդ: Ղազան զանի հաջորդների՝ Ուղագույրի
/1304-1316թթ/ և Արու- Անդրեյի /1316-1335թթ/ ժամա-
նակ Եղանությունը ցուց է տալիս իր ամբողջ մնանկությունը:

Ներքին յերկապատճենիությունները և ընդվզումները պետք թյան դեմ տարբեր ժողովրդների կողմից հաճախակի յերկուր են դառնում, իսկ Աբու-Ասիֆի Մահմիդ հետո մոտ մի տասնյակ տարի, -ուրիշ հունվրի 1335թից մինչև 1345-46թր վը Ելղանության գահը բարձրանում են ավելի քան տասը յակ Ելղաններ: Ներքին հակամարտությունների սրումն այդ իշխող տան մեջ, դավադրությունները, սպանությունները սովորական յերկույթ են դառնում: Յեզ հենց այդ տասը սրնամյակի ընթացքում ել տոնդոլական այդ հնկա Ելղանությունը տրոհվում է մի շարք իշխանությունների, վերածվում է մի շարք մանր ամրիացությունների: Այդպես, որինակ՝ օրաքում հաստատվում են Գելայիրները: Փարսում և Քերմանիայում մուգաֆարիդները: Բեռանոր իշխանում հաստատվում են սերբեղարները: Հայուհովու բազմաթիվ այլ իշխանություններ են ստեղծվուածայրում: Այդպիսի իշխանություններ են հաստատվում նաև Թայաստանում և Անդրկովկասում:

Ելղանության քայլայման հենց սկզբի տարիներին Հայաստանում գլուր են բարձրացնում յերկու թուրքածն սեղեր՝ կարա-կոյունլուներ և աջ-կոյունլուներ: Արանց անունները կոչույ են տալիս, թե նրանք ինչոր եյին պբազվուա: Կարա-կոյունլու նշանակում է սեպ վոշխարավորներ, իսկ աջ-կոյունլու նշանակում է սպիտակ վոշխարավորներ: Վաշ ճառ տուն, անասնապահ սեղերն եյին, վորոնք մոնղուների արշավանքների ժամանակ և Արանց իշխանության հաստատման շրջանում մթօին Ասիրիայ և այլ վայրերի, գաղթեց եյին և յեկել հաստատվել Հայաստանում, ավելի քիչ ու Առըսպատականում և Հայաստանում: Արանց մի մասը դժուար յեկել եր սելջուկների-շրջանից: Կարա-կոյունլուները հայ-

տատվել եյին Անորդատականում և Դայաստանի հյուսիսային
մասում, իսկ այդ կոյունլուները հյուսիսային Միջագետքում
և Դայաստանի հարավ՝ արևմոյան մասերում:

1350-ական թվականներին կարա-կոյունլուները իրանց
իշխանությունը հաստատում են Դայաստանի հյուսիսային
և արևելյան մասերում ու միջնաշխարհում, իսկ Դայաս-
տանի հարավ՝ արևմոյան շրջանները ընկույտն ադ-
կոյունլուների գերիշխանության ներքո: Կարա-կոյունլունե-
րի և ջեղայիրների միջև այս շրջանում սկսվում է միութեղ
մրցակցություն: Բայն այն եվրոպուր ջեղայիրներն ինչպես տե-
սանք հաստատվել եյին Իրաքում և ճգտում եյին տեր
քառակ չափ Անորդատականը: Կարա-կոյունլուները հաս-
տառածնելով Դայաստանի արևելյան մասում, իրենց հերթին
ճգտում են անպայմանորեն իրենց գերիշխանության տափ
առնել Անորդատականը: Յեկ ահա ջեղայիրների և կա-
թա-կոյունլուների միջև սկսվում է համառ պայքար: Այդ
պայքարը ջեղայիրները մղում եյին կարա-կոյունլուների
գետ վոշ միայն Անորդատականը գրավելու համար, այլև
կարա-կոյունլուներին իրենց յենթարկելու համար: Նրանք
ցանկանում եյին ստեղծել Անդրկովկասում և Միջա-
գետքում իրենց համար հեգեմոն դիրք: Այսու կողմից կա-
րակոյունլուները փորձում եյին ամրացնել իրենց իշխա-
նությունը Անդրկովկասում և թույլ շատել: Վոր Անդրք-
կովկաս ներխուժի մի այլ իշխանություն: Սակայն շու-
տով Քաղաքական Իրադրությունն այնպէս Եղասպոր-
վում, վոր ջեղայիրները հրաժարվում են կոյունլուն-
երին իրենց յենթարկելու: Անորդատականը պայմա-
նություն մտադրությունի: Անզիւմ տ մր ուժեղ նախառեանու-
թյուն մուզաքաքարիդների և ջեղայիրների միջև:

Այս հանգամանքը ստիպում է ջելայիրներին՝ տալ ամբող
Աստրապատականը կարա-կոյունլուներին, դաշն կնքել նրանց
հետ ընդդեմ մուզաֆարիթների: Այդպիսով կարա-կոյունլու-
ների իշխանությունը Անդրկովկասուա, հատկապես Աստրապատա-
կանում և Հայաստանում, հիմնովին հաստատվում է: Այդ ժա-
մանակ կարա-կոյունլուների իշխանության ներքո յեն անց-
նում Հայաստանի հետեւառ մասերը՝ Այունիքը, Երևարատյան
դաշտը, Շիրակը, Գուգարքը, Բասենը, Վանա լճի հյուսիսային
ափերին, ընկած յերկրամասերը, Վասպուրականը և Վանա լճի
հարավային ափերին ընկած յերկրամասերը:

Ազ-կոյունլուները հաստատվելով հյուսիսային Միջադեռ-
քում նույն ժամանակամիջոցում, յերբ կարա-կոյունլուները
կովում ենին ջելայիրների դեմ, սկսում են բարձրանալ դժ-
պի հյուսիս՝ իրենց յենթարկել Հայաստանի հարավային ու-
արևմտյան գավառները և ամրանալ այդ վայրերում: Այդք-
դարի կեսերին, հատկապես Արդ դարի յերկրորդ կեսին,
ազ-կոյունլուները տիրում ենին Ծոփքին, Աղճնիքին, Տա-
րոնի արևմտյան մասերին և բարձրանում ենին դեպի Կո-
րին: Այդպիսով Հայաստանի մեացյած մասերը, վորոնք
դուրս ենին մնացել կարա-կոյունլուների տիրապետությու-
նից, ընկնում են ազ-կոյունլուների գերիշխանության ներքո:

Անձնադրանքներ, Եղանության Քայլայումից հետո Հայաս-
տանն ընդուած է այդ յերկու թուրքմեն ցեղերի գերիշ-
խանության ներքո և դառնուած է ասպատակությունների
թատերաբեմ այդ ցեղերի միջև: Ինչով է բացատրվում
Եղանության Քայլայումը և Վերածումն այդպիսի մանր
իշխանությունների: Ինչ հանգամանքներ տարան մոնղո-
լական պետությանը դեպի անկում, դեպի Քայլայում:
Այդ հաճագամանքները յերեքն են: Առաջինն այն, վոր մու-

ղղւները ծգտում եյին իրենց արտադրայեղանակը փաթաթել նվաճված յերկրների վպիս: Յերկրներ, վորոնք իրենց զարգացմամբ ունեյին ավելի բարձր արտադրայեղանակ, քան մոնղոլները: Այս մոնղոլական ամբողջ տիրապետության ընթացքուժ շայտուն կերպով արտահայտվում եր այն, վոր մոնղոլները ամայացնում եյին ամբողջ յերկրներ և իրենց համար ստեղծում եյին արոտատեղիներ: Հասկանալի յե, վոր այդպիսի Քաղաքականությունը նվաճված յերկրները տանում եր դեպի տնտեսական փլուզում, դեպի արտադրության լճացում, դեպի հետադիմություն:

Յերկրորդ պատճառն այն է, վոր մոնղոլ նվաճողները վորոշ յերկրներում շկարողանալով թելադրել իրենց արտադրայեղանակը, նշանակում են այդ յերկրների բնակչության վրա ձևերը հարկերը, մուցնում են թալանի քաղաքականություն և այդ ձանր հարկապահանջության ու կաղմակերպված ասպատակությունների հետևանքով քայլայվում Եյրկրի տնտեսությունը, ուժնանում Ե դժգոհությունն ու պայքարը մոնղոլ տիրապետողների Լծի դեմ: Բազմաթիվ դեպքեր կան, յերբ մոնղոլական արևմտյան ելշանության յենթակա մի շարք յերկրներում բռնկվում են ապստամբություններ մոնղոլական, լծի դեմ, իսկ այդ ապստամբությունները նույնպես նպաաստում եյին մոնղոլական պետության քայլայմանը:

Յեզ վերջապես մի այլ պատճառ, վորը նույնպես ֆիշ դեր շի խաղացել մոնղոլական տիրապետության անկման մեջ: Յերբ մոնղոլները սկսեցին իրենց նվաճումները, նրանք գտնվում եյին ֆեոդալական հարաբերությունների ծևավորման առաջին շրջանում և ինը սովորությունները, ինը տրադիցիաները, վորոնք գալիս եյին դեռևս տե-

մական կարգերից, վորոշ տեղ Եյխ գտնում մոնղոլ տիրապետոց-
Ների Մեջ, բայց յերբ նրանք հաստատվում են իրենց նվա-
ճած յերկրներում, յերբ տեղի յէ ունենում նվաճ-^{ութեան} լիու-
մը տեղական բնակչության հետ, յերբ այդ նվաճման ընթաց-
քում մոնղոլները սկսում են յուրացնել նվաճվող ժողո-
վըրդների սովորություններն ու կարգերը, ապա մոնղոլների
մոտ նույնպես ուժնանում ե կենտրոնախույս տիրամադրու-
թյուններ և ոյերատիկ ծզտումներ: Յեկ իսկապես, Կերպ
դարի յերկրորդ քառորդը բնորոշ է մոնղոլական տիրա-
պետողների մեջ այդ ներքին կենտրոնախույս ուժերի հա-
կամարտությամբ: Այդ կենտրոնախույս ուժը վոշ միայն
ջլատում ե մոնղոլական տիրապետող ուժը, այլև Քայֆա-
յում ե մոնղոլական կառավարող ապարատը: Ներքին դա-
վադրությունները, դավաճանությունները, զա հակալական
կորիվները, հատկապես մոնղոլական տիրապետության վեր-
ջին շրջանում, կազմալուծում են մոնղոլական պետությանը:
և նրան դարձնում անընդունակ իշխնելու այդ լայնածա-
վալ ընդարձակ տերիտորիային: Ահա այդ հանգամանքը
և նպաստում ե մոնղոլական պետության Քայֆայմանն
արևմտյան ելղանությունում: Ներքին այդ Քայֆայումն ա-
պելի յէ նպաստում նվաճված ժողովրդների պայքարին.
և նրանց ինքնուրույն իշխանությունների կազմակերպմա-
նը, մասսամբ այդ ե պատճառը, վոր ստեղծվում են
այծպիսի իշխանություններ, վորոնք քիչ կապ ունենին
մոնղոլների հետ, ինչպես որինակ սերբադարները, ջեղա-
միոնները և մուշաֆարիդները Պարսկաստանում և ադ-
կոյունլունները և կարա-կոյունյունները Անդրկովկասում:

Ստեղծված Քաղաքական իրադրությունն Անդրկով-
կասում, մոնղոլական ելղանության Քայֆայումից հետո, շա-

րունակուս և մինչև 14-րդ դարի 80-ական թվականները:
Բայց 14-րդ դարի 80-ական թվականներին, ինչպես Պար-
կաստանի, այնպես ել Անդրկովկասի գլխով անցնում է մի
մեծ ուրագան: Մի ուրագան, վորը իր թափով, իր ծավա-
լով գերակշռում է մոնղոլականին: Դա թթվապահանգի ար-
շականքն եր:

Թեսուր-լանգը թաթարական մանր ազնվականի վորով
յեր: Նա ուներ իր ցեղը, իր շարիաթը: Հոր մահից հետո նա
ինքն եր զիսավորում այդ շարիաթը, բայց վորպեսպի կարո-
ղանա շատ թե քիչ իշխել այդ շարիաթին և հետագայում բարձ-
րացնել պաշտոնը, մտնում է միջին Ասիայի Կեչ քաղաքի
ամիրայի մոտ ճառայության: Կեչի ամիրան Արան նշանակում
է իր յերկրի մի մասի կառավարիչ: Այդ լինում դեռևս
14-րդ դարի Կեսերին 1350-ական թվականներին: 1360-ա-
կան թվականների սկզբներին Միջին Ասիայում մի խառնակ
պիճակ է ստեղծվում և թեսուրն ոգտագործում է այդ
խառնակ պիճակը: Ունենալով զինվորական ջրի, տեղ ճարպ-
կություն և խորամանկություն, տիրապետելով Կապտա-
կերպշական վորոշ ընդունակությունների, նա տապալում
է Կեչ քաղաքի ամիրային և ինքը նվաճում է այդ քա-
ղաքը: Այդ քանի հասար նա ուներ բոլոր հնարավորու-
թյունները, մասնավոր վոր նա այն ժամանակ Կեչ քաղա-
քի տեղապահն եր: Այդ գեպքը կատարվում է 1363թվա:
Այնու հետև նա սկսում է իր շուրջը հասախթել իր աշխա-
կաններին, տարբեր վայրերի ամիրաներին և բարձրացնել
իր հասբավը: Արա համբավը բարձրացնում էն հատկա-
պես կրա հաստությունը և դաժանությունը: Մինչև Կեչը
նվաճելը թեսուր լանգը հաշածվել եր մի շարք խաների կող-
մից և թափառելին է յեղել, բայց Կեչը նվաճելուց հետո ամ-

րանում ե այդտեղ և սկսում Ե ընդարձակել իր տիրապետությունը :

1364թվին նա նվաճում է Ասմարղանդը : Ասմարղանդը նվաճելուց հետո թեմուրի բանակը ստիպված է լինութափական համառ պայքար տանել Ասմարղանդն իր ձեռքին պահելու համար, վորովհետեւ հակառակորդ ները պաշարում են Քաղաքը, նեղն են Լծում Նրան, բայց Ասմարղանդը մնում է թեմուրի բանակի ձեռքին: Ինքը՝ թեմուրը խորամանկում է: Հուր ե տարածեամ, վոր ինքը իբր թե հեռանում է Քաղաքից և գնում ե այլ ուղղությամբ, ուրիշ խոսքով փախչում է: Տարածելով այդ լուրը, նա անմիջապես Քաղաքից դուրս ե զայիս և թեանցում թշնամուն ու հետեւից հարձակվում թշնամուն վրա: Այդպիսով միջին Ասիհայի կենտրոնական Քաղաք Ասմարղանդը մնում է թեմուրին և զառնում է թեմուրի ռեփրենցիան:

Թեմուրն արդեն սկսում է մոռածել նորանոր նվաճումների մասին: Նա նվաճում է խորեզմը 70-ական թվականներին:

80-ական թվականներին, մոտ 10-տարվա ընթացքում նվաճում է միջին Ասիհայի վորոշ մասերը, Անդիստանը, հետո խորասար և վերջապես Բյուսիսային Պարսկաստանը: Այս արշավանդների ժամանակ նա իրեն ե յենթարկում ամբողջ Պարսկաստանի և միջին Ասիհայի մեծագույն մասը: Այդ բոլորից հետո թեմուրը ձեռնարկում է նոր, ավելի խոշոր հարթակումներ, ավելի խոշոր նվաճումներ: Ահա իր այդ նվաճումների ժամանակներում, վոր Հանդ-թեմուրը ձեռք է բերում այն հուշակը, վորով նա հայտնի յե դառնում ամբողջ այդ ժամանակի աշխարհին: Արեւելյան և վոլ Մի բռնակավ, վոր Մի նվաճող այնպիսի սարսափի մեջ շի պահ Յեպրոպան, ինչպես Հանդ-թեմուրը: Գիսգիւղ դասը ինքը պահած նվաճող

չեր, բայց Թինգիկ-ղանի հոշակը կամ սարսափը յեվրոպական ծողովուրուներն այնպես շերն զգացի, ինչպես զգացի են Հանգ-թեմուրի ժամանակ: Ի վերջո Թինգիկ ղանի պետությունը ծավալվում է նրա մահից հետո միայն, իսկ այստեղ ընդհակառակն է լինում: Այստեղ ինքը Հանգ-թեմուրը անձամբ գլխավորում է իր ծեռնարկած աշխարհակալությունները և կարծ ճամանափվա ընթացքում նա համարյա հաստատում է իր տիրապետությունը Թինգիկ-ղանի և նրա հաջորդների ժամանակ մոնղոլների ծեռքն ընկած բոլոր տերիտորիաների վրա:

Ամբողջ Պարսկաստանը իրն յենթարկելուց հետո 1386-88 թվականներին նա իր բանակով մտնում է Անդրկովկաս և Հայաստան: Առաջին հերթին նա նվաճում է Աղրբեջանը, ապա մտնում է Արարատյան դաշտը. Արաքսի հոսանքով բարձրանում է Շիրակ, այնտեղից ել մըս. Նույն է Վրաստան: Այս արշավանքների ժամանակ նա ստիպում է Շիրվանի խանին, լեզգիներին ընդունել իր գերշխանությունը, նվաճում է ամբողջ Բյուսիսային Հայաստանը, նվաճում է Վրաստանը և տակն ու վրա յե անում այդ յերկրները: Ամրապնդելով իր տիրապետությունը Վրաստանում, Աղրբեջանում և Հայաստանի հյուսիսային մասերում, նա իր բանակով այս անգամ ուղղվում է դեպի Վան, ուր այն ժամանակ նստում եր Կարա-Յուսուֆը, Կարակոյունլուների իշխանը; թեմուրը պաշարում է Վանը Քար ու Քանդ Ե անում Քաղաքը, պարտության մատնում Կարա-Կոյուններին և գերում է Յուսուֆին: Աղբյուրներից շատերը նշում են, վոր նա գերում է Յուսուֆին և դր հետ տանը լով բանտարկում է Բաղդադում: իսկ վորոշ աղբյուրներում ասվում է թթ Յուսուֆը փախչուածե:

Վանը նվաճելուց հետո թեմուրի զորքերը սկսում են ասպատակել Հայաստանի մյուս գավառները։ Նվաճում եւ Տարդնը, Կարսո շրջանը, Խլաթի ու Մանազերտի շրջանները և համարյա ամրողը Հայաստանը։ Այս արշավանքների ժամանակ թեմուրը Հայաստանի բաղաբներն ու գյուղերը ավերակի յէ վերածում, բնակչությանը զերեարում ե, կոտորում և հարստությունները թալանում։ Հայաստանի նվաճումից հետո Լանգ-թօմուրի բանակն ուղարկվում ե դեպի Միջագետք, ասպատակության և յենթարկում ամբողջ Միջագետքը, Մահ, Ապրասի, Եսքիռում այդ յերկրում։ Աղբյուրները պատմում են, վոր Հանապում նա կենդանի թաղել ե տախի 15- հազար Մարդ։ Միջագետքը, Սիրիան իրեն ե յենթարկում և հետո միշարք այլ արշավանքների ժամանակ նա նվաճում ե նաև վոր Ասի յի արեւելյան շրջանները, վորոնք արդեն այդ ժամանակ նվաճել եյին մի այլ պետության կողմից, ոսման կիսների կողմից, վորոնք հաստատվել եյին ամբողջ փոքր Ասիայում և նոյնիսկ անցել եյին դեպի Յեւլուա։

Նվաճելով փոքր Ասիայի կենտրոնական և արեւելյան Մասները, թեմուրը վերականգնում ե այդ մասնությունը և նախկին սելջուկյան թուրքմենական ամրրաների իրավունքները։ Դա վորոշ բաղաբականություն եր, բաղաբականություն, վորի միջոցով նա ուզում եր ստեղծել վորոշ պատվար ոսմանյան սուլթանության գետ։ Ոսմանյան սուլթանությունն այդ ժամանակ չեր գտնվում էր համապատասխան բարձրության վրա, բայց հնորան ման, վերելքի շրջանումն եր գտնվում։ Առ ևս պակաս ահ ու սարսափ չեր տարածել Յեւլուայում։ Ոսմանյան պետությունը փոքր Ասիան կենտրոնական և արեւելյան

Վայրերը նվաճելիս Միկվիդացիայի յեր յենթարկել այդ ամիրա յությունները: Թեմուրը վերականգնում է Կորանը: Թեմուրի արշավանքն այդ փոքր Աստիակակ տեղիտորիայի վրա ստիպում է ուսմանյան սովորան Բայազետ առաջինը Յեզրուց-յի վերագառնալ և դիմադրել Թեմուրին:

1402 թվին տեղի յե ունենում, ոսմանյան սուլթանության և Թեմուրի բանակի ծակատամարտը: Այդ ճակատամարտում պարտվում էն ուսմանական զորքերը և բայց նույն առաջինը գերի յե ընկնում Թեմուրի ճեռքը: Այդ հարվածը դական ու վրա յե անում ամբողջ ոսմանյան պետությունը և մի պահ կարծես թե այդ պետությանը հասցնում է վախճանի, սակայն հետո վերականգնում է: Փաստն այն է փոքր Հանգ-Թեմուրը արևելքում, փոքր Ասիայում ջարդությունը և անում այդ ժամանակ Հանգ-Թեմուրի դեմ ճառագող ամենախոշոր պետությանը: Ոսմանյան սուլթանի դառտարկած այդ հաղթանակից հետո, Հանգ-Թեմուրի իշխանությունն իր սեց և ընդգրկում համարյա այն բոլոր յերեղուները, վորոնք մի ժամանակ մտնում են սոնզոլական պետության մեջ և կարծեք թե Թեմուրի միջոցով նորից վերականգնում մոնղոլական աշխարհակալությունը, սակայն դա միայն առյօրեւոյթ եր և կարծատե մի ճայթք եր այդ ժամանակաշրջանում.

Փոքր Աստիան նվաճելուց բացի, Թեմուրը կազմութերպում մի շարք արշավանքներ դեպի Յեզրուց, դեպի հարավ, դեպի Հնդկաստան և այլն: Բայց 1405 թվին, յերբ ուզում եր մի նոր արշավանք սկսել դեպի Հնդկաստան, ահանում է խորը ծերության մեջ: Արա մահից հետո ցը հոկարձակալ պետության գլուխն է անցնում Արայի Շահ-ռուսիր: Շահ-ռուսին իշխել է բայգական յեր-

Կար ծամանակ, մոտ կես դար 1404-1447թիվը։ Բայց յերբ
նա յե իշխանության գլուխ անցնում, նրա տիրապետու-
թյան ժամանակ նվաճված՝ բազմաթիվ վայրերում սկսում
են գլուխ բարձրացնել տեղական սահման իշխանություն-
ները, վորոնք նվաճվել են թեմուրի կողմից։ Ահա դրան-
ցիկ մեկ Ելինում Կարա-Յուսուֆը՝ Կարակոյունլունե-
րի ցեղապետը։ Կարա-Յուսուֆը վերադառնալով Հայա-
տան, փորձում է նորից Հայաստանում և Ատրպատակա-
նում հաստատել իր տիրապետությունը։ Ակսվում յեր-
կարայու կորիվների մի շրջան Կարա-Կոյունլուների և
Շահ-ռուսի միջև։ 1420 թվին Կարա-Յուսուֆին հաջոր-
դում է իր վորդի Խսկանդարը ու վորն իշխում մինչև
1437 թիվը։ Պայքարը Խսկանդարի և Շահ-ռուսի միջնվ
շարունակվում է։ Շահ-ռուսը ջանում է պահպանել
իր գերիշխանությունն Ատրպատականի և հայաստանի
վրա, իսկ Կարա-Կոյունլուները հանձին Խսկանդարի
ծգուում են վերականգնել իրենց իշխանությունը։
Այդ կորիվների ընթացքում, վորն ինչպես տեսնում եք, տնվում
է մոտավորապես 25-30 տարի, տակն ու վրա յե լինում ամ-
բողջ յերկիրը։ Ատրպատականում և Հայաստանում քանդվում
են գյուղեր, քաղաքներ գերեվարվում են բնակչության մի մասը։
Կորիվների ընթացքում բնակչության մի մասն ել գոհ է գնում։
Դայերի համար ստեղծվում է մղծավանքային մի շրջան, վո-
րի ժամանակ քայթայվում է և նրա տնտեսությունները և նրա
ստեղծած կուլտուրան։ Այդ մղծավանքային շրջանը հենց սկս-
վում է Կարակոյունլուների ասպարեզ գալով։ Այդ կորիվների ըն-
թացքում Հայաստանի բազմաթիվ վայրերում բնակչությունն
իր բայասական վերաբերմունքն ե ցուց տալիս դեպի Խս-
կանդարը, դեպի Կարա- Կայունլուները։ Մեր աղբյուրներում

դուք կհանդիպեք Շահ-ռուսի մասին բավական գովասանուկան խոսքերի: Այդ նրա համար շե, վոր թե Շահ-ռուսի տիրապետությունը կբերեր ժողովրդին տնտեսական կյանքի վերելք, այլ հարցն այն ե, վոր նրանք կարա-կոյունլուների կորիւների մեջ տեսնում եքին յերկրի ավերումը: Իսկ Շահ-ռուսի տիրապետության պայմաններում նրանք հույս ունեյին, վոր կվերադառնան խաղաղության:

Թե Եռուրիդները յերկար ժամանակ պայքարելով կարա-կոյունլուների դեմ, փորձելով նրանց իրենց յթնթարկել, անհաջողության են մատնվում: Շահ-ռուսիր դիմում ե խորամանկ Քաղաքականության: Իսկանդարի հետ գործում ե նրա յեղբայր Զհան-շահը: Շահ-ռուսիր կարողանում է գրավել իր կողմը Զհան-շահին, յերկրպանակություն գցել յերկու յեղբայրների միջև և հանել Զհան-շահին, իսկանդարի դեմ, խոստանալով Զհան-շահին. վոր իսկանդարին ասպարեզից հեռացնելու դեպքին իշխանությունը կտրվի իրեն: 1437թվի Զհան-շահի և իսկանդարի մեջ յեղած ընդունակութերը ժամանակ իսկանդարը պարտվում է, փախչում և ապա ապանդում: Այդպիսով Զհան-շահը տեր ե դառնում աւրադ Ենորպատականին և Զայաստանի արեելյան մասերին ու իշխում մինչև 1467թվը: Զհան-շահի իշխանության գլուխ անցնելուց հետո դադարում են կորիւները թեսուրիդների և կարա-կոյունլուների միջև: Զհան-շահը ձևականորեն համարվում է Եսակ ռուսի վասսալը, բայց փաստորեն Զհան-շահը դառնում է Պարսկաստանի արեւադյան մասի, Ենորպատականի և Անդրկովկասի միահեծան իշխողը: Կարա-կոյունլուների տիրապետությունն իր բարձրագույն զագաթնակետին ե հասնում Զհան-շահի որոք: Այդ ժամանակ փորձեր են մրգում բայ-

Քայլած վայրերը վերականգնելու, բայց ապարդյուն, յերկրի տնտեսական կյանքը շարունակում է հետադիմուլ:

Սակայն Զհան-շահի իշխանության որոք հայկական իրականության մեջ յեկեղեցական հարցերում, վորը Քաղաքական նշանակություն ուներ, տեսնում ենք վորոշ ակտիվություն։ Այդ ակտիվությունը հատկապես դրսեվորվել է Երմիանում կոկին կաթողիկոսարան հաստատելու հարցում։ Ինչպես դուք հիշում եք, Եզրիանիկ կամ ավելի ճիշտ Հայաստանի միջնաշխարհից, Բագրատունյաց հարստության անկումից հետո կաթողիկոսարանը տեղափոխվում է Հայաստանի հարավային մասը և այնտեղից ել դեպի Կիլիկիա։ յերբ Կիլիկիայում հաստատվում է հայկական թագավորություն։ Կիլիկիայի պատմությունն անցնելիս մենք տեսանք վոր այնտեղ առևտրական հարաբերությունների վոլորտում ըստգրկվում ենակ Կիլիկիայի հայկական հոգևորականությունը, թզյա բայի այդ, հոգևորականությունը ամենասերտ հարաբերությունների մեջ է մտնում կաթողիկության հետ, պապի հետ և յուրացնում է կաթոլիկական յեկեղեցու վորոշ սովորություններ։ Ավելին։ Հայկական մի շարք կաթողիկոսներ կոնտակտ հարաբերությունների մեջ են մըտնում պապի հետ և փորձում են միավորել հայկական յեկեղեցին կաթոլիկության հետ։ Դրա հետևանքով սրվում է հայկական հոգևորականության միջև պայքարը, պայքարը վոր արտահայտվում է որ կողմից հոգևորականության այն մասի մեջ, վորը պաշտպանում եր հայկական յեկեղեցին իր բոլոր հայութեան սովորություններով, և մյուս կողմից՝ հոգևորականության այն թեպի մեջ, վորը պաշտպանում եր հայկական յեկեղեցու յենթառումը կաթոլիկության։ Հիշենք այստեղ այն ժողովները, վորոնք ունեն են ունենում Կիլիկիայում, հատկապես վերջին շրջանում՝ գարում կաթոլիկական յեկեղե-

պու պահանջներին բավարարություն տալու ծզտումով: Կր-
 իկիայում կաթողիկոսական աթոռը վարում եր այնպիսի գրձ.
 Վոր պահանջում եր հայկական յեկեղեցու յենթարկումը պա-
 պին: Կաթողիկոսությունը կրիելիայում սկսում է բազմաթիվ
 եյուղերով կապվել կաթոլիկության հետ: Հոգեորականները
 մասնակից են դառնում առևտրական բազմաթիվ գործա-
 նությունների: Տեղի յէ ունենում հայկական յեկեղեցուն
 սովորությունների այլասերումը: Ենքեղեցական պաշտոննե-
 րը ձեռք են բերվում վաճառքով: Մեծ հնարավորություն-
 ներ են ստեղծվում ունիթորականության շարժման ուժե-
 ղացման համար: Ակտում են պահել հասարակաց տներ և
 դրանք դարձնում են յեկամտի աղբյուր, հարկեր գանձե-
 լով պահ հասարակաց տներից: Պատրի սպառնալիքների, կրա-
 պղեցության տակ և նույնիսկ կաշառքների միջոցով Կր-
 իկիայի կաթողիկոսներից մէջ հատուկ հրովարտակ է ուզու-
 մաւ Հայաստան և Քարոզում է նրանց, վորաչենից կրանք
 չհալածեն կաթոլիկներին, այլ միաբանեն նրանց հետ: Այս յե-
 մասյթները յեկեղեցու ներսում ստիպում են Հայաստանում յե-
 ղած հոգեորականության մի կցալի մասին բողոք բարձրացնել
 կաթողիկոսի դեմ և խնդիր դնել. վեր կաթողիկոսարտերը տեղա-
 փոխով նշանակին: Այդ պահանջն առաջարրվում է կրիստո-
 նութած հայկական կաթողիկոսի մոտավորացն 1439
 թվին: Ասում նոտած այդ մատանակի կաթողիկոսը շինա-
 ւաճայնվում է հրամագրում յենթարկվելու այդ պահան-
 ջին: Բայց 1441.թվին նշանակվում, այդ մատանակիս նշան-
 իկանի իւան Ֆադուլի հովանավորությամբ, հրամագրում
 է հատուկ մողով վորտեղ ընտրվում: Նոր կաթողիկոս՝
 նշանակվում նստելու համար, ի հակածիր Ասի կաթոլիկոսին, վորը հրամարելու մ զալ: Նշանաձնում նոր կա-

թռղիկոս ընտրելու դրդապատճառների մասին բավական
 մանրամասն խոսում ե մեր պատմիշներից մեկը՝ թոփան
 ՄԵծոփեցին, վորու ունի յերկու աշխատություն։ Այդ աշխատու-
 թյուններից մեկում նա տալիս ե Հանդ-թեմուրի արշավանք-
 ները, իսկ մյուս աշխատության մեջ մանրամասն կերպով
 գրում ե, թե ինչ պատճառները առջապահեցին կաթողիկոս-
 արքունիք Եցմիածին։ Այդ պատճառները նրա մոտ շատ են
 և այս թվարկում ու 11 պատճառները, վորոնց մեծ մասը կրոնա-
 կան - դավանաբանական բնույթ ունեն։ Բայց կրոնական այ-
 տարածայնությունները առիթ են հյամարդելու Սսի կաթո-
 ղիկոսությունից։ Կիրիկիայի կաթողիկոսությունը ճանաչելը
 և Եցմիածնում նոր կաթողիկոս ընտրելը և այն ասե-
 նայն հայոց կաթողիկոս հայտարարելը ունի իր սույնալա-
 կան և քաղաքական պատճառները։ Բաժն այն է, վորու այն
 բոլոր մեղադրանքները, վորոնք հարուցվում են Սսի
 կաթողիկոսի հասցեին, այդ բոլոր մեղադրանքները մեզ
 ասում են մի բան։ Այն, վոր Սսի կաթողիկոսությունը կրա-
 խուսում ե Հայաստանում կաթողիկության տարւածումը մըսա-
 միսիոններների պաշտպանումը և նրանց լայն առաջընթա-
 լը։ Իսկ ինչը մն եր արտահայտվում կաթողիկության շարժ-
 ման ուժեղացումը Հայաստանում։ Այդ շարժումը հնատե-
 վանք եր առետրական հարաբերությունների խորաց-
 ման և առետրական բուրժուազիայի ուժեղացմանը։
 Իսկ Եցմիածնում նոր կաթողիկոս ընտրելը կազմակերպ-
 վում է հատկապես Հայաստանի այն տարրերի կողմից, վո-
 րոնք ունեն բազմաթիվ թելերով կապված եին քնողալա-
 կան հարաբերությունների հետ, կապված եին քնողալայսի
 հետ։ Ովքեր եին գլխավորում ուսիթունների դեմ մշկող պա-
 քարը Հայաստանում։ Այդ պայքարը գլխավորում եին Տա-

թեմի և Հայաստանի այլ վանքերի վանականները: Իսկ Տաթու-
վի վանքը 14-15-րդ դարերում հանդես եր գալիս վորպես
խոշոր ֆեոդալներից մեկը: Այնու հետև ունիթորական շարժման
դեմ վոչ միայն պայքարում եղին. հոգեբոր ֆեոդալները, այլ
և աշխարհիկ ֆեոդալները Հայաստանում, ինչպես որինակ,
Այունյակ նախարարությունը, այսինքն Որբելյան նախարարու-
թյունը, Զաքարյանների հնտնորդները Շիրակում, Դիլիջա-
նի շրջանում ևայն: Բայց այս հանգամանքից, այդ-
յերեւուցը ունի նաև իր քաղաքական դրդապատճառը:
Ֆեոդալական տարրերը Հայաստանում այս շրջանում սկզ-
սում են կապվել տեղական թուրքմենական ցեղապետների.
Իշխողների և նվաճողների հետ, իսկ ունիթորականությունը
քաղաքական ուրիշ նպատակ եր հնտապնդում: Կաթոլիկու-
թյունն արևելյում հնտապնդում եր այն նպատակը, վոր
շուկա ստեղծմի յեկրոպական արդեն պարգայող արդյու-
նաբերության համար և ուժ ստեղծի արևելյում մահ-
մեդական իշխանությունների դեմ՝ պայքարելու նպատա-
կով: Վոր այդ նպատակն եր դրել իր առաջ կաթոլի-
կությունը, ապասցուցում Ե Կիլիկիայի մի կաթողիկոսի
բացատրությունն այն մասին, թե ինչու ինքը ձշուու
եր միանալ կաթոլիկությանը: Դա արտահայտվել Ե կա-
թողիկոսներից մեկի հնտելյալ հայտարարության մեջ՝

«Վասն նեղեալ ձամանակիս կումբմբ զմիաբանութիւն
հռումոց ընդ մեզ և ամենայն ազգաց» /ՈՐԲԵԼՅԱՆ, ԳԼ-
68/:

Այս տեղեկությունը մեզ տալիս է Առեփանոս Որ-
բելյանը, վորը նոյսին բավական մակրամասն կերպով
խոսում է ունիթորականության և հայկական յեկեղեցու
միջև յեղած պայքարի մասին:

Ահա այստեղ հարց է դրվում հայկական քեոդալական նության առաջ, թե վոր Քաղաքանության նա պետք է հետևի: Մի կողմից զարգացող առևտրի ուժնացման և հետևապես արևմտյան Քաղաքանություն պետք է վարի, ըստրեմ իրենց յերկրում յեղած մահմեդական իշխանության, թե պետք է իր Քաղաքական բախտը կապի իրենց յերկրում յեղած մահմեդական իշխանության հետ:

Նա հրաժարվում է առաջինից : Սա մի յերեսը է,
վոր կապիւս է Հայաստանի Ներքին դասակարգա-
յին հարաբերությունների հետ : Ինքնաստինքյան հասկա-
նալի յէ, վոր դա վոշ թէ պաշտպանում է դասակարգա-
յին նոր հարաբերությունների զարգացումը Հայաստանում :
ուժանդակում է նոր աճող բոր-
ժուական հարաբերությունների խորացումունքը ծավալմանը .
այլ ընդ հակառակ դեմ է զնում նրան :

1441թվին Եջմիածնում կատարվում է Նոր ընտրություն և Կաթողիկոս է ընտրվում Արքակոսը։ Եջմիածնի նորընտիր Կաթողիկոսությանը հնազանդվում էն հայկական յեկեղեցու բոլոր կենտրոնները, բայի Սարգ, բայի Կրշնիկ-այում յեղած հոգևորականության մի մասը։ Աղթամարի Կաթողիկոսությունը միանում է Եջմիածնին։ Եջմիածնի Կաթողիկոսարանի նոր վերահսատատման փառտով կրկին միավորվում է հայկական յեկեղեցերին մի ընդհանուր կրոնական կենտրոնի ձեռքու։ Եջմիածնի Կաթողիկոսությունը ձեռք է բերում։ Ամենայժմ հայոց Կաթողիկոսությունի հրապութքը։ Այդ բանին ոգնում է հայկական բնակչության կրա Եջմիածնի ունեցած կրոնական տրադիցիոն մեծ ազդեցությունը։

15-րդ դարու 2-րդ կեսերից Հայաստանում ավելի ուժեղ
կերպով Քաղաքական թատերաբնում են բարձրանում ագ-կոյուն-
լուները: Դուք հիշում եք, վոր ագ-կոյունլուները դեռևս 14-րդ
դարի 2-րդ կեսերին, կարա-կոյունլուների հետ միասին. իրենց
իշխանությունն ունեյին Հայաստանի արևմտյան մասում:

15-րդ դարի 2-րդ կեսերին ագ-կոյունլուների իշխանությունն
ավելի հզորանում ե հատկապես Ուկուն Հասանի տիրապե-
տության մասնակ, վորն իշխել է 1466-1478թիվը: Մրա
ժամանակ ագ-կոյունլուների տիրապետությունը Հայաստանի
արևմտյան մասից սկսում է տարածվել դեպի արևելք և
հակամարտության մեջ և մտնում կարա-կոյունլուների հետ:
Յերկար մասնակ նրանց մեջ պայքար ե տեղի ունենում
Անդրկովկասի գերիշխանությունը ձեռք բերելու համար:
Յով վերջում 1467թին, յերբ նոր եր իշխանության գլուխ
Բարձրացել Ուկուն Հասանը, ագ-կոյունլուները կարողա-
նում են նվաճել կարա-կոյունլուների իշխանությունը, տա-
պալել նրանց և տիրել այն բոլոր յերկրներին. վորոնք
գտնվում են կարա-կոյունլուների իշխանության ներքի:
Այդպիսով Ուկուն Հասանի գահակալության սկզբին ագ-
կոյունլուների իշխանության տակ ե անցնում ամրող
Անդրկովկասը. Ներառյալ Հայաստանը, հյուսիսային Միջա-
զետքը, Կոտրպատականը և Պարսկաստանը: Առեղծվում ե
մի մեծ պետություն, վորի կենտրոնը նույնպես Թավրիզն
ե դառնում: Ագ-կոյունլուներին կարա-կոյունլուների դեմ
մղած պայքարում ոգնել եր ոսմանյան սուլթանությունը այդ
տեսակնից ագ-կոյունլուների հաջողությունը վորոշ շափով
պայմանավորված եր ոսմանցիների պույտ տված ոճանդակու-
թյամբ:

Ագ-կոյունլուների իշխանությունը յերկար շի տևում վազ-

Պարսկաստանում, վրայ Հայաստանում։ Վերջում նա բազմաքած թուղանում եւ 16-րդ դարի սկզբին իշխանությունն ընկնում եւ բոլորովին այլ դինաստիայի ձեռքբ: Ինչպես դեպքին են նշում. 14-րդ դարի վերջից մինչև 16-րդ դարի սկիզբը՝ մոտ մի դար, Հայաստանը և նրա հարեւան յերկրները դառնում են առաջարարակությունների թատերաբես, նախ թեմուրիդների արշավանքների համար, ապա՝ կարա-կոյունլուների և ագ-կոյունլուների համար։ Մի հանգամանք, վորոն ել ավելի խորացնում եւ յերկրի տնտեսական կյանքի անկույը, ել ավելի նպաստում եւ, վոր և՛ տնտեսական և՛ քաղաքականապես Հայաստանը թուլանա, նվազի։ Այդ դարերում բազականին փոփոխություններ են կատարվում նաև Հայաստանի ետնիկական կազմում։ Հենց այդ ժամանակաշրջանումն ել Հայաստանում, Ասորպատականում և Վրաստանում սկսում են հաստատվել մոնղոլական, թուրքմենական ժողովուրդներ։ Իսկ տեղական նախկին տարրերը՝ Ասորբենջանուն աղքանները, Հայաստանում հայերը, սկսում են յերկրից մասսայաբար արտագաղթել։

Այսմ ավելի մանրամասն ծանոթանանք մոնղոլների տիրապետության ժամանակ Հայաստանի սոցիալ-դասակարգային հարաբերություններին և յերկրի տնտեսական կյանքին։

Յ. ԴԱՎԻԴՍՈՒՆԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎՃԱԿԸ
ՄՈՆԴՈՒՆԵՐԻ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Հայաստանում մոնղոլների տիրապետության ժամանակ տ-
յիշալական հարաբերությունների և տնտեսական կյանքի բնա-
գավառում տեղի յեն ունեցել զգալի փոփոխություններ : Այդ փո-
փոխություններն առանձնական ակնհայտ են հողատիրության
բնագավառում :

Առաջին աշխի ընկնող փոփորությունն այն է, վոր մոն-
ղլընթերն Անդրբելքառուց հիրառուց Են հողային սեփականու-
թյան մի ծե, վորը կոչվում եր իկոսադարություն։ Իկոտա՝
Նշանակում ե հողամաս, հողակոտոր, հողային կալվածք, վո-
րը, հնչպես սելջուկների մոտ ե յեղել, այնպես ել մոնղոլ-
ների մոտ տրվել ե պինվորականներին։ Իկոտան սելջուկների
մոտ տրվել ե պինվորական ճառապողներին՝ իրենց ճառապո-
թյան համար. սելջուկյան պինվորները՝ սահմանափակ
իրավունքներ Են ունեցել իրենց այդ հողամասների վրա։ Մոն-
ղլների մոտ պինվորականի իրավունքը իկոտայի և այդ կալված-
քուց բնակվող բնակչության վրա ավելի ընդարձակվում է։ Իկոտան,
հնչպես աղբյուրներն են վկայում, սկզբնական շրջանում յեղել ե-
պայմանական հողատիրություն, բայց նա մինչև վերջ այդ պո-
ւանականությունը շի պահպանել։ Այդ մասին պերճախոս Կերպով
վկայում է Ղազան-ղանի հրովարտակներից մեկը. յարշիկներից սե-
կը։ Այդ յարշիկում ասված է. «Ղազարի նորը / Մանղոլական
կորչերը բաժանվում են նարյուրների. հաշարների և այլն։
Ղազարի ենիրը նշանակում է հայոց հոգու բաղկացած բա-
նակի հապարապետ. և ով կարող է մի շարք դժբախտուց ուներինը
իկոտան։ Յեթ վորե՛տ մեղը / պինվորականներից / հարյուրավորնե-

րից կամ տասնավորներից զանց Ե առնում որենքը, ապա հազարի Եսիրը, կամ հարյուրավորների Եսիրը թող պատճի Նրան և թող իկուա տա մի ուրիշի, ով վոր Կարող Ե տանել ձառայություն և հաստատի Նրա անունով":

Այս տեղեկությունը, վոր Վերյանում Ենք Պետրուշնվակու մի հոդվածից, տպագրված գիտությունների ակադեմիայի 1937թվի "Իզվեստիայի" հասարակական բաժնի Գրոհամարում, վեխյում Ե այն մասին, վոր Մոնղղական տիրապետության ժամանակ ընդ հանուր առմասբ իկուային տիրելու հանգամանքը կապված Ե յեղել վինվորական ծոտայության հետ: Յեվ յեթե վորեւ մեկը հրամարվի այդ ձառայությունը կատարելուց, զանց առնի սահմանված որենքները, նա կըրկվի նաև իկուայից: Բայց այդ բոլորը շե: Մի այլ տեղեկություն, վոր Նույնպես գտնվում է Ղազան ղանի կողմից հրատարակված այդ հրովարտակում, առաջուցում Ե մի ուրիշ բան: Այն, վոր իկուադարությունը ժամանակի ընթացքում աստիճանաբար դառնում Ե ժառանգական: Այդ յարլիկներից մեկում ասված Ե՝ Յեթե վորեւ մեկը / վինվորականներից / մեռնում Ե, թող նշանակվի Նրա փոխարեն Նրա մեծ կամ փոքր վորդիներից մեկը և թող տրվի Նրան իկուան":

Այսուղի արդեն վորոշակի կերպով յերեվում Ե տեղենց իկուան ժառանգական սեփականության վերածելու համար: Բերված վեխյությունը չի ասում, վոր իկուան դառնում Է ժառանգական հրդատիրության ծեներից մեկը, այլ դա գտնվում Ե այդ պրոցեսի մեջ: Կապված այն բանի հետ, վոր վինվորական ծառայության մեջ ևս ժառանգականությունը դառնում Է մի սովորություն: Հետազայում այդ յերեւ վոյքն այնքան Ե զարգանում, վոր պարզապես դառնում Ե

հողայի: Ժառանգական սեփականության մի ձև: Այս պրտցեսում մննք տեսնում ենք հկոտադարի, այսինքն հկոտանունեցողի և անմիջական արտադրողի միջև ստորագծված վորոշ գրանիարաբերություն: Յեթե սելջուկների տիրապետության օնտանակ պինդորականն ավելի սահմանափակ իրավունքներ, ուներ անմիջական արտադրողի անձի նկատմամբ, ապա այստեղ այդպես չե: Այստեղ մենք տեսնում ենք, վորոշուղացին վոշ միայն պարտավոր են իր բնիքի մի մասը վճարել իկոտայի տիրոջը, այլև նա յենթակա յէ անմիջապես իկոտադարին: Սա իրավունք չունի հեռանալու վայրից վայր: Յնչ յեթե մենք ու մենք փախզում են, ապա իկոտայի տերը իրավունք ունի նրան վերադարձնելու:

Այդ մասին նոյնպես խոսվում են Ղազան ղանի հրովարտակներում: Այնտեղ ասված են, վորոշուղի ուսաբը, վորին տվել են Քոշվորական պինդորականին վորացես հկոտ և վորոնք յերեսուն տարի առաջ կրվել են, կամ փախել և շեն մտել այլ վիլայեթների դավթառում. գրքերում այսուհետ չեն գրանցվել, նրանց նկատմամբ իրավունք ունեն պահանջելու, վորացեսի նրանք վերադառնանիրենց նախկին տեղերու: Ուրեմն, տեսնում եք, նոյնիսկ յերեսուն տարվա փախանցների նկատմամբ ել իրավունք են վերապահում հնու վերադարձնել: Վոշ միայն այդ, այլև յարմիկում պարզ ու վորոշակի Կերպով հրահանգվում են բոլոր իկոտադարներին, վոր նշանք չ'գրանցեն և նոյնիսկ թոյլ շտան այդպիսիներին իրենց գյուղերում բնակություն հաստատելու: Այնտեղ պարզ ասված են, վոր թող պինդորականները փախան ուսաբին վոշ մի առիթով չ'միացնեն իրենց գյուղերին, չ հովանավորեն նրանց, տեղ շտան անենելու իրենց վիլայեթով /գավառ/ կամ հկոտայով:

Այդ յարշիկն շարունակության մեջ Ղազան ղանը արգելում Ե պինվորներին, վորոնց տրված Ե այդ հողամասը վորացն ԻԿ-
տա, իրենց յենթակա իկուադարական հողերից զյուղացիներին
տեղափոխն ՄԻ այլ գյուղ:

Անմիջական արտադրողը վոչ միայն իրավական տեսակե-
տիկ այդպիսի ծանր պայմանների մեջ Ե ընկնում, այլ Նա նոյն
աստիճանի շահագործվում Ե այդ հողատերերի կողմից: Տուր-
քերը ՄԵԾ մասամբ վերցվում ենին Նատուրայով, Բայց յերբեն
ԵԼ կռով ու դրամով: Դրամական ՃԱԿՎ տուրքերի վճարու-
մը ՄՈՆՂՈՂԱԿԱՆ տիրապետության ժամանակ սփում Ե Բավա-
կան զարգանալ, հաճախակի դառնալ: ՅԵՐԵ Հայաստանում
12-13-րդ դարերում անմիջական արտադրողը տուրքերը հա-
մարյա բազառապես Նատուրալ ՃԱԿՎ Եր վճարում, ապա
ՄՈՆՂՈՂՆԵՐԻ տիրապետությունից ԹԵՇՈ դրամական միստեմը,
վորացն տուրքերի վճարման ՄԻ ՃԱ սփում Ե հաճախա-
կի յերևոյթ դառնալ, վորն ավելի յեր ծանրացնում գյու-
ղաց շահագործումը: Այդ իկուադարները իրենց հողամա-
սերի վրա յերբեսն ոգտագործելիս ԵՆ յԵՂԵԼ Նաև գԵՐ-
ՎԱԾ Մարդկանց աշխատանքը, վորոնք իրենց դրությամբ
համարյա մոտենում ԵՆ ստրուկին: Այդպես ԵԼ ասում ԵՆ
ստրուկ կամ գԵՐԻ: Դուք յերևի հիշում ԵԲ, վոր Կոկվ-
ՆԵՐԻ և արշավանքների ժամանակ ՄՈՆՂՈՂԱԿԱՆ պինվո-
րականները հիկայական քանակությամբ Մարդկանց վերց-
նում և գԵՐՈՒՄ Եին ու նրանց ՄԻ մասին աշխատեց-
նում Եին իրենց տնտեսություններում: Այս գԵՐԻՆԵՐԸ
կորցնում ԵՆ վորեւ իրավունք արտադրության վրա,
արտադրության միջոցների վրա, սԵԿԻԿԱՆՆՈՒԹՅՈՒՆ ուն-
նալու վոչ ՄԻ հնարավորություն շունեյին:

Այօմ ՄԵՎ հԵՏՈ ԳՐԻՔՐՈՒՄ Ե, թԵ այդ իկուադարական

սիստեմը վորքանով՝ տարածված եւ յեղել Հայաստանում։ Իս
Ենդ հանուկը յերևուց եր մոնղոլական արևմտյան եղանու-
թյան մեջ։ Դողատիրության այդ ձեւը տարածված եւ յեղել
Անդրկովկասում, հատկապես Աստրատականում։ Բայց այդ
չի նշանակում, վոր մյուս մասերում չի յեղել։ Հայաստա-
նի վերաբերմասր մենք ունենք տեղեկություններ, վոր Այրւ-
մի բում, վորտեղ բնակություն եյին հաստատել Քոչվորական
պինվորականներ, իկուաներ յեղել են։ Իկուադարական հողեր յե-
ղել են նաև Վանա լճի հյուսիսային մասում ընկած գավառ-
ներում, ուր նույնպես հաստատվել երեւ մոնղոլական բնա-
կիչներ։ Հայաստանի մյուս մասերի մասին տեղեկություն այդ
հողատիրության ձեւի մասին առաջին շիան։

Դողատիրության յերկրորդ ձեւը եղանության մեջ յե-
ղել եւ վակուֆային հողատիրությունը։ Մրանք այն հողասա-
սերն են, վորոնք յեղել են մուսուլմանական հոգեորականու-
թյան տրամադրության տակ, կամ մուսուլմանական կրո-
նական հիմնարկների տրամադրության տակ։ Անդրկովկասում
հողային այդ տիրապետության ձեւը նույնպես մոնղոլների մա-
մանակ տարածվում է, մանավանդ յերբ մոնղոլները ընդունուած
են մահմետականությունը։ Վակուֆային կալվածքներ, այն հենա-
տով, վոր նրանք մուսուլմանական հոգեորականության
պատկանեն։ Հայաստանում այդ ժամանակ համարյա թե
չի յեղել։ Սակայն դրա փոխարեն Հայաստանում մոնղոլ-
ների տիրապետության ժամանակից հայկական յեկեղեցա-
կան կալվածքները սկսում են ավելի ընդարձակվել և լայն
ծավալ ստանալ։ Ինչպես հայտնի յէ, հայկական յեկեղեցի-
ները նոր չեն, վոր կալվածքներ ունեյին, բայց այն նորը,
վորը յերևում ե այս շրջանում յեկեղեցատիրական հողա-
տիրության մեջ այն ե, վոր աշխարհիկ թեոդալների կալ-

վաճքները կամաց-կամաց սկսում են անցնել յեկեղեցու ձեռքը:

Բազմաթիվ տեղեկություններ կան արծանագրված. յերբ աշխարհիկ հողատերերը վորոշ բանակցությունների մջին մտնում վանքերի հետ, հոգեւորականների հետ և տալիս են իրենց կալվաճքները յեկեղեցուն, վանքին: Սա մի շատ հետաքրքիր յերկույթ է, վորը կարոտ է ամենալայն լուսաբանսան: Բանն այն է, վոր յեկեղեցին մոնղոլական տիրապետության ժամանակ վերծ է յեղել հարժապահանջությունից, իսկ Հայաստանում յեղած հողատիրապետության մյուս ձևերը մեծ մասամբ յենթակա եյթն ծանր հարկադրուման, վորի հետևանքով հողը կալվաճատիրոջ այլևս խռոր ոգուտ չի բերում: Այսինքն ստացած արդյունքի մեծագոյն մասը վերցվում է վորպես հարկ, վորպես տուրք: Յեզ վորպեսպի աշխարհիկ ֆեոդալը կարողանա վերծ պահել իր կալվաճքը, հատկապես նա «Կոտակում» է այդ հողը վանքին: Կոտակելով իր հողը յեկեղեցուն կամ վանքին, նա իր ձեռքերը շեր լվանում այդ հողից, այլ հիմտվում եր, վորպեսպի յեկեղեցին այդ հողը մշակի, վորպեսպի այդ հողը շտրոհի, շանցի ուրիշ մարդկանց ձեռքը՝ ակնկալելով, վոր այդ հողի բերքից ինքը կշարունակի ոգտվել: Այդ նվիրումը յեկեղեցուն կամ միաբանելը յեկեղեցու հետ կատարվել է բազմաթիվ ձևերով ու պատրժակներով: Շատ դեպքերում ֆեոդալական տունը իր ներկայացուցիչը դնում է յեկեղեցու գլուխ, վորպես վանական և այդ հողերը դնում նրա տրամադրության տակ: Դարձնում վորպես վանքապատկան հող: Սա մի յերկույթ է. վորը տեղի յեր ունենում տնտեսական ծանր ճնշումներ, վորը գործադրվում եր մոնղոլների հշխանության կողմից

տեղական ֆեոդալների նկատմասք:

Դեռագայում այդ կալվածքների մեծ մասը մնում է յեղեցկուն: Այդ ձեռվ յեկեղեցական հողատիրությունը Հայաստանում սկսում է բավականին ընդարձակվել: Վանքապատկան հողերում, ավելի քան այլ բնույթի կալվածքներում, կիրառվում է կոռ ու բժջարը: Խատկապես այդ դարերում: Անկայն յեկեղեցին անմիջական արտադրողին շահագործում երնաև այլ ձևերով:

Բայց հողատիրության այդ յերկու ձևերից, մոնղոլական արևմտյան նկանության մեջ բավական տարածված է յեղել նաև հնջուական կամ հաս հնջուական հողատիրության ձևը: Խասը նույն բովանդակությունն ունի. Ինչվոր հնջուն, վորոնք յերկուսն ել մոտիկ են հայկական տերունի տերմինին, այսինքն պետական, ավելի ճիշտ արքունական: Դողային տիրապետության այս ձևն իր մեջ ունի վորոշ ստորաբաժանում: Մի պարսիկ պատմագիր, վորը յեղել ե մոնղոլական իշխանության բարձր պաշտոնյա և բավականին ծանոթ ե յեղել թե հողատիրության ձևերին և թե հարկա հանսան սիստեմին՝ խամդալախ կամ Համբալախ ղազվին /ապրել ու գործել ե Կրդդարի առաջին կեսին/ բավականին տեղենկություններ և տալիս ինջուական հողատիրական ձևի մասին և հնայն նրա տվյալներով ե, վոր ավելի պարզ ե յերևուս, թե ինջուական հողատիրությունը բաժանվում է յերկու մասի: Մի մասը, վորից յեկած յեկամուտը մնում է իշխող տան, կառավարող տան անդամների ոգտին, այսինքն այլ խոսքով ասած այդ հողերը կազմել են կառավարող տան կալվածքը, իսկ մյուսը՝ վորից յեկած արդյունքը մտնում է դիվան, այսինքն պետական գանձարկողը:

Հայաստանում պետական հողեր նույնպես յեղել են, որի անկ Անքին 14-րդ դարի սկզբին հայտարարվում է հնջուական։ Հողատիրության այդ ձեր ընդհանրապես բավականին տարածված է յեղել թէ Անդրկովմասում և թէ Եղանության յենթակա այլ վայրերում։

Ինջուական են համարվել նաև այլ տեսակի կալվածքներ, վորի Եղությունը սակայն տարբեր է Վերը թերված ինջուական կալվածքներից և մորի մասին խոսք կլինի հետո։ Բայց հողատիրության այդ ձեռքրի, Մոնղոլական տիրապետության յենթակա յերկրներում հատկապես Անդրկովմասյան մի քանի յերկրներում՝ Հայաստանում և Վրաստանում, պահպանվել են նաև քան Մոնղոլները յեղած ֆեոդալների կալվածքները, վորք հողատիրության տարբեր ձեւ քան, ասենք, իկուան և վակուֆը կամ ինչուն։

Հայաստանում հողատիրության այս ձեր ամենից տարածված և գերակշռող ձեւն եր։ Այսինքն այն, վոր պահպանվել եր հայկական ֆեոդալների իրավունքը իրենց կալվածքների վրա։ Բայց յերբ մենք խորանում ենք այդ տեղական ֆեոդալական հողատիրության ձեփ Եղության մեջ, տեսնում ենք. վոր դա մի ամբողջականություն շի ներփայակնում իրենից, այլ ավելի շուտ այդ ձեփ տակ թագումած են հողատիրության մի քանի տեսակներ։

13, 14 և 15-րդ դարերում Հայաստանում սկսում է տարածվել պատրոնատի սրստեմը։ Խոշոր ֆեոդալներն իրենց հովանավորության տակն են առնում մանր ֆեոդալներին, վորոնց տալիս են հողամասեր, կալվածքներ պայմանական ձեռվ ոգտագործելու համար։ Հովանավորվող անձնավորություններին մեր արձանագրությունները տարբեր

անուններ են տալիս, բայց մեծ մասամբ անվանում են «Զեռնավոր»: Որինակ 1210 թվին, դեռևս մոնղոլների արշավանքներից առաջ, Կա մի արձանագրություն, վորտեղ խոսվում է պատրոնների և Յեռնավորների մասին: Ահա այդ արձանագրությունը:

«Եւ է այս գեղ ազատ յամենայն հարկէ ի պատրոնաց, ի ծեռնաւորաց, ի Յեռնավանաց...» /Վիմական տարեցիր, եջ 51/:

Բերենք մի ուրիշ արձանագրություն: 1225 թվի արձանագրություններից մեկում, վորը փորագրվելէ՝ Շիրակի մի յեկեղեցու՝ Մարմաշենի պատին, հետեւյալն ե ասված:

„Ի մամանակս բարեպաշտիկ և աստուածասիրաց պատրոնաց Մերոց Աթարակ իւանէի և մանտատորթա խուցն Ծահնշանի հրամանաւ սովին վերստին նորոգումն եղէ...» /Վիմական տարեցիր, եջ 70/:

Այսու հետև 1286 թվի արձանագրություններից մեկում, վորը փորագրվել է Ոշականի յեկեղեցիներից մտնի պատի վրա, հետեւյալն ե ասված:

«Ի թուին նաւթն հարիւր երեսուն և հնգին հրամանաւ պարոն՝ Սահմադինին /իսկ այս Սահմադինը «վիմ. տարեց.» եջ 106-ուտ 1263 թվի Անհի արձանագրության մեջ անվանվում է պատրոն/ եւ Ալեքսանոս ծեռնաւորս և Վահրամ Քեթորարս... Թողաք Կանաչանու քահանայիկ զինը հարկ որ Կայու այգու, բամբակի... և Ճամահարի...» /Վիմական տարեցիր, եջ 129/:

Սահմադինը հայ ֆեռալներից մեկն է յեղել, վորի կալվածքն են Կազմել Անին և Արարատյան դաշտի միմաւու, բավականին ընդարձակ մի տարածություն:

Այս արծանագրության վրա հինգված մենք յԵնթադրումենք վոր Ճեղնապահ Ստեփանոսը և Վահրամ Քեթորարու մտել են Սա հմադինի հովանավորության տակ և Նրանից ստացել են Ոշականն ու Կրա շրջակայիքը, վորպես կալվածք: Ստեփանոսն ու Վահրամը ստանալով կալվածք Սահմադինից վորոշ կախման մեջ են դնում իրենց նրանից, վորպես պատրոնից և Կրա համաձայնությամբ են վերացնում վորոշ հոր կեր: Այնուամենայնիվ մի այլ՝ Այուկիքի Նորավանքի յԵկեղեցու 1292 թվի արծանագրության մեջ ասված ե:

» Կամաւ ամենակալին աստուծոյ այս գիր յիշատակի և արծան անջնջելի Մրնայիսաթունիս է, դատեր մեծ արքային Զալալին և ամուսնոյ մեծարդի իշխանի Տարսա յիմին եւ իմ որդւոյս Զալալիս, որ զնեցաք ի սեր հալալ ընչեց զՆորբերդին այժին ի Վէդի և կայլն ի Կոռուց զեցաք ի հայրենատիրական... վերստին տուաք ի Նորավանս յիհապէ մբ Նշանս և մբ Ստեփանոս... եւ այս տուրքս ոչ ի գրկանաց ոչ ի գեղէ? ոչ ի պարոնա հողաց: այլ մեր հալալ դրամազին ապատ յամէն հարկաց: որոշ ուսմ հաշիւ չկա ի հետ: Այդ թէ ի սերոցն կամ յիշխանաց կամ ի Ճեղնաւորաց պինչ և իսէ պատճառաւ նենցել կամ հանել ջանան զայս այզիս ի Նորավանից... ի թվիս շխա" /« պիմական տարեգիր" Եջ134-135/:

Այս արծանագրության մեջ ավելի պարզ ու վորոշակի յէ խոսվում պարոնի կամ պատրոնի և Ճեղնապահ մասին: Բերված փաստերը բավական են համովելու հողատիրության պատրոնային Ճեղ գոյության մասին Հայաստանում: Այդ փաստերը նշում են նախ, վոր սկսած 7-րդ և 13-րդ դարի սկզբից, Հայաստանում սկսում ե

պարզանալ պատրոնատային սիստեմը և յերկրորդ վոր այդ սիստեմը ավելի յէ սկսում տարածվել և ծավալվել մոնղոլների տիրապետության ժամանակ:

Անյյալ անգամ մենք մասսաք խոսեցինք պատրոնատի ծագման պատճառների մասին: Այստեղ պետք է ավելացնել, վոր պատրոնատի առաջացման բնագավառուց պակաս դեռ շնորհացել նաև խաչակիրների արշավանքները: Կիլիկիայում այդ ձեւը բավական տարածված է յեղել դեռևս 12-րդ դարից: Կիլիկիայի այդ ձեւը անցնում է նաև Հայաստան: Յեզ շնորհիվ այն բանի, վոր այդ սիստեմը վորոշ ապա հովություն եր սույնուած մասն ժեռդալներին և պահպանում եր նրանց մոնղոլական ու այլ ցեղերի նարձակումներից, սկսում է մասսայական յերեպոյթ դառնալը:

Հայաստանուած, ինչպես աղբյուրներն են վկայում մոնղոլների ժամանակ գոյություն են ունեցել մանր հողաւտերներ, վորոնց ժեռդալներ անվանել շի կարելի, բայց վրանք իրենց ձեռքին ունեցին սեփական հողեր: Նրանք մեր աղբյուրներում հաճախ անվանվում են «Հայրենատերներ», վորոնք վոչ այլ վոր են քան շնորտակած զյուղացիներ, ապատ զյուղացիներ:

Այսպես, որինակ, 1292 թվի արձանագրություններից մեկում Այունիքի Տարսային իշխանի կինը հիշատակում է հետևյալը:

«ՎՆորա բերդ ի վերի և զայն ի Կորդո գնեցաք ի հայրենատիրացն և տնկեցանք!»

Այս հայրենատեր բառն է, վոր մեկ հետաքրքրում է: Այս բառը մենք հանդիպում ենք նաև Ատեփանու Որբելյանի պրում: Յեզ այնտեղ, և՝ այստեղ յե-

բեվում ե, վոր հայրենատերը ինքը Ֆեռդալ շե, բայց
նա իր ձեռքին ունի սեփական հող, վորի վրա Ֆեռդալը
վորե իրավունք չունի: Մանր հողատիրության գրյու-
թյան մասին ևնդրկովիառում և առ հասարակ Եղանու-
թյան մեջ վկայում ե նաև Խամբալաղ Ղազգին:

Հողատիրության այս ձեր բավականին տարած-
ված յերեսութե դառնում Հայաստանում մոնղոլա-
կան տիրապետության ժամանակաշրջանից: Այնու հե-
տեւ Հայաստանում հողային հարաբերությունների բնա-
գավառում 13-14-րդ դարերից սկսած նկատելի յէ հո-
ղի մանր կտորների հաճախակի վաճառքի դեպքեր:
Հողը առեւորի առարկայե դառնում: Այդ մասին բազ-
մաթիվ վկայություններ կան ինչպես արծանագրություն-
ներում, նույնպես և պատմագիրների մոտ և հիշատակ-
արաններում: Հետաքրքր ե, վոր այդ վաճառված կամ
ավելի ճիշտ գնված հողամասերը ազատ են լինում հար-
կից, վորպես „Գանձագին”, վորպես „Դրամագին” հող: Կար-
դանք վկայություններից մեկը: 1274 թվին Շիրակի Հոռ-
մու վանքի պատին գրված ե մի արծանագրություն, որը
տեղ անված ե հետեւյալը:

„Ես... Ստեփանոս... Ետու... ՎՃՈՎԱՅ ԳԹԱՆ ԻՒՐ ԲՈԼՈՐ
ԱԱԻՄԱՆԱՒՔՆ ԱՎԱՏ ՅԱՄԷՆ ԱԺԽԱՐԻԱԿԱՆ ՀԱՐԿԱԿ Ի
ԴԻՒԱՆԻ Ի ԽԱԼԱՆԻ Եւ ՅԱՄԷՆ շարէ, վոր գնեալ էի յիս
ախբաւրէն ի Ձալալէն եւ տուեալ իա հազար (21000 դրամ-
/՝ վիմ. տարեօրի”, եջ 137/:

Այս փաստերի կողքին պետք ե նշեց, վոր դեռևս
12-րդ դարի վերջին Գոշը իր դատաստանագրում պարզ
ու վորոշակի կերպով ասում ե, վոր այն հողերը, վորոնք
գնված են դրամով, ավատ են: տասնորդից, այսինքն նո-

ղային հարկից: Այս սիստեմը, ինչպես յերեւում է, պահպանվել է նաև մոնղոլական տիրապետության ժամանակ՝ Հայաստանում:

Հողատիրական նշված ձեռքից պետական հարկերից ազատ են յեղել իկտագարականը, յեկեղեցականը և ամենայն հավանականությամբ, դրամագին հողերը, զանձագին հողերը, զնովի հողերը:

Հողատիրության մյուս ձեռքը յենթակա յեն յեղել պետական հարեադրության, այսինքն մոնղոլական զանձարակին վճարել են հարկ: Բայց Հայաստանում, բայց հողատիրության այդ ձեռքից վերջին շրջանում հանդես ե գալիք նաև հողատիրության ինքուական սիստեմը, վրի որինակը մենք ունենք սիայն հանձին Ասիր: Ասիր ինքուական ե դարձել 14-րդ դարի առաջին կեսին: Ինչու յեն համարվել նաև տեղական առանձին ֆեոդալներին պատկանող հողերը: Բանն այն ե, վոր հաճախ մոնղոլական իշխանը կամ նրա մոտիկ ազգականներից մեկն ու մեկը /կինը, վորդին, յեղբայրը և այլն/ իր անձնական հովանավորության տակն ե առնում այս կամ այն հողատիրոջ և հայտարարում ե նրա կալվածքները ինչու: Այդ նշանակում ե, վոր ինչու հայտարարված կալվածքը դուրս ե բերելու տեղական հարկահանների մատյաններից և այլեւ նրանք տեղական հարկահանների միջոցով չեն վոր հարկ նն վճարում: Արանք իրենց հարկը սկսում են վճարել անմիջապես հովանավորողին, այսինքն կամ դանին կամ նրա մոտիկ ազգականներից մեկին:

Հայաստանում ինքու յե հայտարարվել Այունյաց Որբելյան տունը: Ինչուական իրավունքը Այունյաց իշխանը ննոք է

բերում յերկու անգամ այսելեղով ղանին և նվերներ տանելով նրան : Դրա համար ել իշխան նրա կալվածքները դարձնում են ինջուական և ազատում են տեղական հարկա հանին յենթարկվելուց, այդպիսով նրա դրությունը համեմատաբար թեթևացնում է :

Գոյություն ն ունեցել ինջուական հողերի յերեք ձև : Առաջին՝ այն հողերը, վոր խաս ինջու յեն համարվել և յեղել են պետական կամ իշխանին են պատկանել : Յերկորդ՝ ինջուական են համարվել վակուֆային և իկուադարական հողերը, վորոնցից վոչ մի հարկ չի վճարվել պետական գանձարանին և յերրորդ՝ ինջու յեն յեղել տեղական այն թերական կալվածքները, վորոնց հովանավորությունը վերը բեկալ ե ղանը կամ ղանի ընտանիքի անդամներից մեկն ու մեկը, վորին անմիջապես վճարվել ե այդ կալվածքների հարկը : Ինչպես տեսնում ենք այդ յերեք տեսակն ել տարբերվում են իրարից բավական խոշոր հատկանիշներով : Յես կարծում եմ, վոր այս բոլորից հետո շփոթություն չի առաջանալ ձեր մեջ ինջուական հողերի կապակցությամբ :

Հայաստանում հողատիրության նշված ձևերում, բայց „Հայրենատիրական“ հողերից, հողի մշակողը հանդես ե գալիս այդ հողերին ամրացված զյուղացին : Մենք իկուայի մասին խոսելիս արդեն ասեցինք, թե ինչպիսի փոխ հարաբերություններ ենին տիրուած իկուայի տիրող, ուրիշ խոսքով մոնղոլ վինվորականի և անմիջական արտադրողի՝ զյուղացու միջև : Տեսանք, վոր այդտեղ զյուղացին ամրացված ե իկուադարական հողերին և իրավունք չունի իր ամրացված հողակտորից հեռանալու :

Հողատիրության մյուս ձևերի վերաբերյալ անմիջա-

կան արտադրողի և թեոդալի փոխհարաբերության մասին
մենք շատ քիչ տեղեկություններ ունենք: Բայց հենց հե-
տադարական հողերում յեղած սովորությունները մեր
ձեռքը բանալի յեն տալիս բայցատրելու նաև մյուս տեսա-
կի կալվածքներում յեղած գյուղացու դրությունը: Որի-
նակ ինցուական պետական կալվածքների վրա անմիջա-
կան արտադրողը նույնպես ամրացված է յեղել հողին:

Ավելին: Այդ ինցուական հողերի վրա աշխատող գյուղա-
ցին, ինչպես վկայում է իսամդաշախ Կազմինը, ավելի
ծանր շահագործման է յենթարկվել, ավելի ծանր հար-
կեր է վճարել: Որինաֆ, այդ ինցուական պետական հողե-
րի վրա աշխատող գյուղացին իր տարեկան արտադրան-
քի $\frac{2}{3}$ մասը վճարել է վորապես ռենուա - հարկ: Մի յեր-
րորդը նա տվել է պետական գանձարանին: Մի յերրոր-
դը տվել է այն անձնավորությանը, վորը պետության
կողմից նշանակվել է վորապես կառավարից: Իր տրա-
մադրության տակ և մնացել միայն յենեմուի մի յերրորդ-
մասը: Իհարկե, պետական հողերի վրա աշխատող գյուղա-
ցիների դրությունից յերբեք չեր կարող լավ լինել տեղական
հողերի և վակութային հողերի վրա աշխատող գյուղացի-
ների դրություններ:

Պարսկական աղբյուրները՝ ինչպես Ռաշիդ Ահամ, Ահամ, Ահամ,
նույնպես և իսամդաշախ Ղազմինը, հաղորդում են, վոր
ծանր հարկատվության հետեւանքով գյուղատնտեսու-
թյունը քայթայվում է, գյուղերը դատարկվում են մարդ-
կանցից, գյուղացիությունն անկարող է դառնում, հնարա-
վորություն չի ունենում իր տնտեսությունը վարել:
Հատկապես իսամդաշախ Ղազմինը ընդգծում է այդ հան-
գամանից և ավելացնում է, վոր պետական հողերի վրա

աշխատող գյուղացիները ավելի շատ են քայֆայվում, քան
մյուս հողերի վրա աշխատողները և այդ պատճառաբա-
նում են ծանր հարկատվությամբ: Մոնղոլական կառավա-
րությունը գյուղացիության նկատմամբ տանում էր իրդա-
սակարգային դիմք և այդ քասակարգությունը գժի կիրառումը մոն-
ղոլական արեմոյան եղանության յենթակա յերկրներում
հենց արտահայտվել են գյուղացիության անձնական և քա-
ղաքական իրավակրկությամբ, նրանցից անասելի ծանր հար-
կերի հավաքմամբ և գյուղացիական ամեն մի պոռթիւն,
ընդվզման արյունալի խեղդմամբ: Պետք է ասել, վոր ա-
րեմոյան եղանությունում գյուղացիական և քաղաքային
աշխատավորական տարրերի ապստամբությունները հաճախա-
կի յերևոցի են յեղել, մանավանդ Պարսկաստանում:

Մոնղոլների կողմից գյուղացիության նկատմամբ կիր-
առված Քաղաքականությունը Հայաստանում առաջ է բերում
գյուղատնտեսության անկում, առ հասարակ տնտեսության
քայֆայում: Թե ինչ աստիճանի յեր ընկել Հայաստանում գյու-
ղատնտեսությունը մոնղոլական տիրապետության ժամանակ,
այդ ցայտուն կերպով ապացուցում է մոնղոլական քանձո-
րանը մտնող հարկի շափը, յերբ այդ համեմատում ենք
սելջուկներին տրված հարկի շափի հետ: Այդ տեղեկու-
թյունները մեկ տալիս են խարդարախ Ղազվինը: Նա վորցն
մոնղոլական ֆինանսական ապարատում աշխատող բարձր
պաշտոնյա բազականին իրավելի են յեղել մոնղոլական յեկա-
մուտային աղբյուրներին: Ցեղ նա իր մի գրքում տայիս է, թե
վոր վայրից, վոր յերկրից Աբուսեյիթ ղանի ժամանակ հեշ-
քան հարկ մուծվել արքունական քանձարանը: Նա իհար-
կե, գրում են բազմաթիվ յերկրների մասին, բայց մեկ հե-
տաքրքրում Հայաստանն ու Վրաստանը:

Ըստ Խամդալախ Կազմինի բերած տեղեկությունների, սահ Հայքը վճարում եր մոնղոլական պատության 39 թուման, վորը արձաթ դրամով հարթութիւն հաշվով անում է 195 հազար ռուբլի, իսկ մի այլ հաշվով, վորը տարիս և Որբելյանը 292 հազար արձաթ: Այս ինչ Հայաստանը սեղուկյան պետության ժամանակ վճարել է 200 թուման: Տարբերությունը շատ խոշոր է՝ 200-ի դիմաց 39: Հաշվի առնենք, վոր մոնղոլների ժամանակ Հայաստանի մի քանի նաև նույն մտնում եյին Վրաստանի մեջ: Ինչպես որինակ՝ Արարատյան գաշտը, Շիրակը, Այունիքը և Գուգարքը: Այս վայրերը դուրս եյին յեփել մեծ Հայքի վարչական բաժնումը և հաշվում եյին Վրաստանի վրա: Նրանցից ստացված հարկը հաշվում եր Վրաստանից վերցրած հարկի վրա:

Հարցի ոբյեկտիվության տեսակետից մեզ հետաքրքրում է նաև Վրաստանից քանձված հարկի չափը: Խամդալախ Ղազմինի նույն տեղեկության համաձայն Վրաստանը Արարատյան գաշտի, Շիրակի, Գուգարքի, Այունիքի և Վանանդի հետ միասին մոնղոլներին վճարել է 120 թուման: Վորն անում է 600 հազար ռուբլի: Այս ինչ սեղուկներին, Վրաստանը, առանց Հայաստանի թվարկված վայրերի վճարել է 500 թուման: Այս փաստերը ասում են այն մասին, վոր մոնղոլական տիրապետության ժամանակ զողատեսությունը Քայքայվում է այն աստիճան, տարածությունների ամայանում են այն աստիճան: Վոր հակառակ նրան, վոր մոնղոլների ժամանակ ավելի ծանր հարկեր եյին հավաքում, պետական յեկամուտը իջնում է մի քանի անգամ ավելի շած: Քան նախորդ շղանում: Խամդալախ Ղազմինը պատմում է, վոր ծանր հարկերի և մասսայական կոտորածների հետևանքով Ասորականական

Մի զգալի մասը տեսմարդաբնակ է դառնել, ամայացնել ե: Խասնդաշախ զազվենք հայտարարութե, վոր այն ավերածություններից հնտո, վորոնք կատարվեցին մոնղոլական արշավանքների ժամանակ, յեթե նույնիսկ 100 տարի մարդկանց վորեւե բան չպատահի, հապիվ հասնեն այն բնակին ինչ վոր մոնղոլական նվաճումներից առաջ:

Խամդաշախ զազվինի այդ ասածները ամբողջությամբ վերաբերութ են նաև Հայաստանին: Մոնղոլների վարած Քաղաքականության հետևանքով ամայանում գյուղերը, անմարդաբնակ են դառնում Հայաստանի այնպիսի շրջաններ, ինչպիսիք յեղել են Արարատյան դաշտը:

Շիրակը: Բագրենվանդի գավառը և այլն: Դիշելք Մարքսի իմաստուն խոսքերը, վոր ասել ե Ռուսաստանի վերաբերյալ մոնղոլների վարած Քաղաքականության մասին:

Թաթարական լուծը տեղ է 1257-ից մինչև 1462 թիվը, այսինքն ավելի քան յերկու դար: այդ լուծը վոշ Միայն ճնշում, այլև Վիրավորում և շրացնում է նրա զոհը դարձած ժողովորդուն վոգին: Մոնղոլական թաթարներն ստեղծեցին սիստեմատիկ տեղորդ ռեժիմ, ընդ վորում Քայքայումն ու Մասսայական սպանությունները կազմում են նրա մշտական հաստիտուտները:

Ռուսաստանում մոնղոլների Քաղաքականությանը տը ված Մարքսի այս սպառիշ գնահատականը ամբողջությամբ կիրառելի յե նաև այլ յերկրներում, վորոնց թվում և Հայաստանում, մոնղոլների վարած Քաղաքականության նրա կատարմամբ:

Սույն բախտն են ունեցել նաև Քաղաքներն ու Քաղաքային կյանքի զարգացումը: Քաղաքային կյանքի աշխուժացումը խոշոր շափով կապված եր արհենուագործության և առեւտրի զարգացման հետ:

թվում ե, թե մոնղոլական տիրապետության ժամանակ այլ պատկեր պետք է լիներ բազաֆների և առետըրի կարգայման բնագավառում, քան եր զյուղատնտեսության բնագավառում: Բայց յերբ դիմում ենք փաստերին, տեսնում ենք, վոր այստեղ ել տնտեսական կյանքը ընթացել ե նոյն ճանապարհով: Ինչպես զյուղատնտեսությունը՝ Մոնղոլները առևտրականների նկատմամբ փառում եյին վորոշ շափով ձեռնտու քաղաքականություն, հատկապես խոշոր առևտրականների նկատմամբ: Արագ ձգտում եյին կարգայնել առևտուրը յերկրում, նպաստեցնել տրանզիտային առևտուրի կարգայմանը նրանով. վոր ստեղծեցին մի լայնածավալ պետություն: Պետք ե ասել, վոր առեվտըրի մի ճյուղը բավական կարգանում ե Մոնղոլների ժամանակ: Այդ տրանզիտային՝ յերթեեկող առևտուրն եր, արտաքին առևտուրը: Առևտրական կապիտալը սկսում է ուժեղանալ, բայց այդ առևտրական կապիտալը և Հայաստանում և առ հասարակ արևմտյան ելզանության մեջ շատ քիչ ե կապվում յերկրի ներքին կյանքի հետ և նպաստում նրա կարգայմանը: Մոնղոլներն ել սակայն առևտուրի վրա նայում եյին վորպես ամժնազտաբեր յեկամտի աղբյուր և նրա վրա յել գնում եյին ճաճրհարկեր, վորը թույլ շեր տալիս, վոր յերկրի ներսում առևտուրը ծավալի և կարգանա:

Սակայն շնայած այն բանին, վոր մոնղոլական պետությունը իր քաղաքականությամբ յերկրի տնտեսությունը տանում եր դեպի անկում, այնուամենայնիվ, ազատելով առաջավոր Ասիան նախքան մոնղոլների տիրապետությունը հաստատված ցաքու կրիկ մակը պետությունների ամբողջացնելով այլ վորպես մի ամբողջական պետականությունը:

թյուն, դրանով իսկ ստեղծում եր տարանցիկ /տրանզիտային/ առևտրի զարգացման համար վորոշ նպաստավոր պայմաններ, մանավանդ վոր նրանք վորոշ արտոնություններ եյին տայիս խոշոր առևտրականներին:

Մինդոլական եղանությունը առևտրականների և առևտրի նկատմամբ զարած իր քաղաքականության ընթացքում, ինչպես ասացիսք յեղնում եր մի հիմնական խընթրից՝ վորքան կարծի յե այդ առևտուրը դարձնել կարեվոր յեկամտային աղբյուրներից մեկը։ Այդ հանգամանքն եր յելակեու հանդիսանում առևտրի զարգացման քաղաքականության համար։ Յեկ իսկապես, առևտրական կենտրոնները, որինակ թավրիկը, իր ժամանակ Անհն, թիւ լիսին և այլ քաղաքներ, վորոնք դեռևս հանդիսանուածին վորոշ չափով առևտրական ոջախներ, մուծում եյին պետական դիվանն ավելի շատ հարկեր, ավելի բարձըր հարկեր, իսկ այդ հարկերը հավաքում եյին գերազանցապես առևտրականներից և արհետավորներից։ Տրանզիտային առևտրի զարգացման համար խոշոր նշանակություն են ունեցել առևտրական ճանապարհները։ Դաշտանում մոնղոլների տիրապետության ժամանակաշրջանում մենք տեսնում ենք, վոր նախկին ճանապարհներին ավելանում են նոր ուղիներ։ Ակսած 14-րդ դարի կեսերից առ ճանապարհների ուղղության մեջ նկատելի յեն խոշոր փոփոխություններ։ Այսպես, որինակ, 13-րդ դարի վերջին 14-րդ դարի սկզբին այդ դիմումները ուղղությունը վերցնենք Պարսկաստանից, կենտրոն ընդունելով թավրիկը, վրուցեն Եղիանության մայրաքաղաք, ապա թավրիկից առևտրական գլխավոր ճանապարհը գալիս եր Սահմանական, Սահմանական մայրաքաղաք, ապա Եղիանության մայրաքաղաք, ապա Թավրիկից առևտրական գլխավոր ճանապարհը գալիս եր Սահմանական, Սահմանական

վանից Անհի Եհնիկ Մանապկերտ, Մանապկերտիկ Յերպանիկա, Յերպնկայից Սվապ, Մվապիկ Կեսարիա, Կեսարիայի իկոնիա, Իկոնիայից Սիյաս Նավահանգիսչը:

Այս նույն ճանապարհները Յերպնկայից տալիս են նաև մի ուրիշ ճյուղ: Այդ ճյուղը Յերպնկային գետը է դեպի Տրապիզոն, ապա Անվ ծով:

Այս ճանապարհի մասին մեզ տեղեկություն եւ տալիս յեվրոպական մի ճանապարհորդ՝ Ռուբրուկը՝ 1253-1255 թվականներին. յերբ նա ճանապարհորդել եւ Եվրի արտՎելք՝ այսեւելու համար մոնղոլական ղանին:

Նույն ժամանակաշրջանում Բավրիկից դուրս յեկող մի այլ ուղի անցնում է Դիատին. Դիատինից Բագավան. Բագավանից Ալաշկերտի դաշտով դեպի Բասեն, Բասենից Երզրում, Երզրումից Բագանզում է յերկու մասի մեկը գնում եւ դեպի Տրապիզոն, իսկ մյուսը՝ դեպի Յերպնկա. ուղղություն վերցնելով դեպի Եկիս: Այս վերցին ուղղության մասին տեղեկություն են տալիս ուրիշ ճանապարհորդներ՝ Պեղալոտին՝ Փլորենցիայից և Հանգեն՝ Անգլիայից:

Ճանապարհների այս ուղղությունները ինչպես անձնում են, ընկնում են 13-րդ դարի վերջերին և 14-րդ դարի առաջին կեսին: 14-րդ դարի յերկրորդ կեսին և առանձնապես 15-րդ դարում արդեն ճանապարհներն իրենց ուղղությունը վերցնում են դեպի ավելի հարավ: 15-րդ դարի սկզբների ճանապարհների մասին

մեզ բավական առատ տեղեկություններ եւ տալիս յեւրոպացի մի այլ ճանապարհորդ՝ Կլավիհոն: Նա ճանապարհորդել է 1403-1406 թվական: Նա նոյնպես պաշտոնական անձնավորություն է յեղիշ, վորին հանձնա-

բարված եր բանակցություններ վարել այդ ժամանակ արդեն բավական հոշակ ստացած թեսուրի հետ:

Նա տալիս է ճանապարհների հետևյալ ուղղությունները. թափրիկ, թափրիզիկ Խոյ, Խոյիկ Մակու. Մակվիկ Բայազետ, Բայազետիկ Ալաշկերտ, Ալաշկերտիկ Երզրում, Երզրումիկ Յերզնկա, Յերզնկայիկ Տրապիզոն:

Յերկրորդ գիծը, Վորի Մասին մեկ տեղեկություն է տալիս Բարբարոն. Վորը ճանապարհորդել է ամենի ոչ քան Կլամֆիխոն, այսինքն 1477-1488 թվերին. հետևյալ ուղղությունն է ունեցել՝ թափրիկ-Խոյ, Վրաստան-Բիբլիս-Աղերթ-Սասանք. Մերդին. Բիբլ-Արքա և ապա Ուրբայիկ դեպի Միջերկրական ծովը: Այս գծից Խոյիկ անջատվում է մի այլ ուղի, վորը գնում է Խոյիկ Բերկի, Բերկրիկ Արճեշ, Արճեշիկ Ախլաթ, Ախլաթիկ Խնուս, Խնուսիկ Յերզնկա, Յերզնկայիկ Մայամբա, Մալաթիայիկ Հալեբ դեպի հարավ, դեպի Միջերկրական ծով:

Ահա առևտրական ճանապարհների այն ուղղությունները, վորոնք կային 13-15-րդ դարերուա:

Ինչպես տեսնում եք, վորքան զալիս է դեպի 15-16-րդ դարերը, առևտրական ճանապարհները Հայաստանի հյուսիսից իջնում են դեպի հարավ: Արարատյան դաշտի վրայով անցնող առևտրական ճանապարհները անբանուկ են դառնում: Ինչն եր սրա պատճառը: Հիմնական պատճառը այն է, վոր 14-րդ դարի ընթագմուս, Անկ ծովի ավազանում ուժեղանում և խոշոր կշիռ ե ձեռք բերում ոսմանական կառավարությունը: Թյուրքիան հպորանալով պայմանը մեջ է մտնում արևմտյան յերկրների հետ, գրավում է Անկ ծովի ամբողջ արևմտյան ափը, փակում է արևմտութիւն առաջ արևելքի դռները. Անկ ծովի վրայով:

Որա հետևանքով փոխվում են Հայաստանի վրայով նախ կիններում անցնող առևտրական ճանապարհների ուղղությունները, թեքվելով դեպի Միջերկրական ծովը, վորի ավագանը դեռևս այն ժամանակի շեր նվաճվել ուստանանք ների կողմից:

Առևտրական ճանապարհների ուղղությունների փոփոխությունը տարբեր դեր է խաղում Հայաստանի տնտեսական կյանքում, Հայաստանի տարբեր վայրերում: Յեզ իսկապես, աղյունները վկայում են, վոր այս շրջանում յեթե Հայաստանի հարավային մասերում սկսում են աշխուժանալ տուեսուրը և ծեփավորվել են առևտրական բուրժուազիան, ապա Հայաստանի հյուսիսային և միջին մասերում քաղաքները սկսում են բարձայվել և անկան դիմել:

Սակայն Հայաստանի հյուսիսային քաղաքների անկան պատճառը վոչ այնքան ճանապարհների փոփոխությունն է, որ վորքան մոնղոլական եղանության քաղաքականությունը, վորը վոչ միայն գյուղատնտեսությունն է տանում դեպի անկում, այլև դեպի քայլայում ե տանում քաղաքներն ու քաղաքայիական կյանքը: Վորպեսպի ավելի հասկանալի լինի, մենք վերցնենք Հայաստանի գյուավոր քաղաքների՝ Անիի և Դիլինի պատմությունը: Դիլինը 74-րդ դարում արդեն կորցնում է իր նշանակությունը յերկրի տնտեսական կյանքում: Այդ խոշոր, այդ նուշակավոր քաղաքը, վորն սկսած 6-րդ դարից, նույնիսկ 5-րդ դարի կեսերից մինչև 13-րդ դարը Հայաստանի տնտեսական կյանքում խաղացել ե բավական խոշոր դեր, հանդիսացել է վոչ միայն առևտրի կենտրոն, այլ և ար հետագործության խոշոր կենտրոն: Վորպես մանաֆոր ծության, յերկաթամշակման խոշոր կեն-

րուններից մեկը Հայաստանում, 13-րդ դարից մոնղոլների ժամանակից նա արդեն բայթայվում է, բնակչությունը զբովում, գաղթում է:

Դպինի անկման մասին կղնկրետ տվյալներ մենք մեր գրականության մեջ քիչ ունենք: Մենք հույս ունենք, վոր նրա պեղումներն ավարտելուց հետո հնարավոր կլինի ավելի ճշգրիտ կերպով լուսաբանել այդ քաղաքի անկումը: Փաստն այն է, վոր նոյն 13-րդ դարից այլևս մեր աղբյուրներում չի հիշատակվում վորպես քաղաք: Կա յենթադրություն, վոր այդ քաղաքը կործանվել է յերկրաշարժի հետևանքով, բայց Դպինի անկումը բացատրել միայն յերկրաշարժով ճիշտ չե: Դպինը միայն 14-րդ դարում չե, զաք կրել և յերկրաշարժի ավերածությունը: Դպինը 10-րդ դարում նույնպես կրել է յերկրաշարժի ավերածությունը, բայց յերկրաշարժից հետո այդ քաղաքը սկսել է զարգանալ: Ուրեմն յերկրաշարժը չեր կարող հիմք լինել այդ քաղաքի կործանմանը: Դպինի անկումն ունեցել է այլ պատճառներ, վորոնց լուսաբանումը մեզ կտա Անիի անկման ուսումնասիրությունը: Ինչպես հայտնի յէ, Անին 10-րդ դարից սկսած մինչև 14-րդ դարի սկիզբը հայտնի յէ, վորպես Հայաստանի ամենախոշոր քաղաքներից մեկը: 13-րդ դարի վերջից այս քաղաքն սկսում է անկման դիմել: Անիի անկման մասին խոսում են Անիյում յեղած արծանագրությունները: 1301թվի մի արձանագրության մեջ ասվում է:

“Թվ. շձ... Ես Աղբուղջս, որոի իւանէի, թոռն մժմացն Զաթարիայի, եկի յԱնի հրամանաւ Շահնշահի, տեսի զքաղաքս աղբատացեալ և խիստ ի վեր մեացեալ զի շատ հարկ էք ի վերաց դրած, որի սկզբանէ շէք եղել ես: Գ. (3)նորդ,

ի վեր կալա վասն յերկար կենդանութեան և արեշատութեան եղբարցն իմոց Շահնշահի և իմ և վասն իմ նախնեաց գերեց-
մանին համար թողի զօնին հապր, զկոփն համբերեցն, զոշ-
խարին աղլհակն...” /Ամբ. տարեգիր, եջ 151/:

Ինչպես արծանագրությունն ե վկայում Այդ դարի սկզբին Անին սկսում ե աղքատանալ: Այդ արծանագրության մեջ պարզ ասված է, վոր Անին աղքատանում ե ծանր հոգ-
կերի հետևանքով: Այս մեկ վկայություն Անիի անհման
մասին:

Հիմա սենք դիմում մի ավելի ընդարձակ և ավելի հետաքրքիր վկայության: Անիի Մանուշեյի մզկիթի վրա կա-
պարսկերեն լեզվով մի արծանագրություն: Այդ արծանագր-
րությունը գրվել ե Աբու-Սայիդ-ղանի հրամանով, իսկ Աբո-
Սայիդը, ինչպես հայտնի յէ, իշխել ե 1316 թվից մինչև 1335
թիվը: Այդ թիվը յես հրատակեցի նրա հրամար, վորովհետո
արծանագրության թիվը ջնջված է: Արանով ուզում ենք
ասել, վոր այդ արծանագրությունը գրվել ե այդ տարի-
ների ընթացքում: Եհա այդ արծանագրությունը:

* Աստված զիտե իր ծառաների /զաղտնիքը/, Աբո-
Սայիդ բաղադրուր իսան, յարլիկ, Ներկայում յերկրի յերեսին
թագավոր Մայրաքաղաքից, աշխարհիկ սուլթանի: Վոր փա-
ռափորված ե յերկրավոր աշխարհից և հայտարկ և վորի թո-
գավորությունն /աստված/ հավիտնական անի: Յերբ արեւելքից
արևմուտք աշխարհի բնակիչները գտնվում են նրա գթու-
թյան և արդարության հովանու տակ: Բարձրյալ աստված
նրա հրամաններն ու կարգադրություններն ավելի ևս կորուկ
անի: Կարգադրությունը այս ե, վորովհետև յերկրի յերեսը նա-
տակ է նրա հրամանին և դիվանի կարգադրությունը նրա
գրի շարժումից կախումն ունի, թող վոշ վոք շհամարձակի:

պականեցնել կամ ավելացնել /մի բան/, թող բայի թամրայից և
արդարացի հարկերից ուրիշ վոշինչ չառնի: Յեզ վոշ մի մար-
դուց կալանի, նեմերի, թարխի և ուրիշների /հարկերի/պատրժա-
կով վոշինչ չպահանջեն: Ինչպես սրանից առաջ Անի քաղա-
քում և վրաստանի այլ գավառներում ապորինաբար սահման-
ված կալան և Կմօրի /հարկերի/ և թարխի բռնի հարկապա-
հանջության պատճառով բռնություն եյին առաջ բնրում և
զործ դնում /յերկիրը/ անապատ դարձավ, հասարակ- ժողովուր-
դը ցիր ու ցան յեղագ: Քաղաքի և գաղառի ավագներն կալան
և դռնազիր հարկերի պատճառով անշարժ կայթերը և րենց ըն-
ստանիքը թողին ու հեռացան: Գրեցի կարգադրություն /այս
բովանդակությամբ/ ամենաբարձրայլ աստված բարձրագուն
հովանին /հպատակների/ զիսիկ /չի հեռացնի/:

Կստեղ հիշատակվութ մի քանի հարկերը ունեն հետեյալ նշա-
նակությունը թամղան մոնղոլների ժամանակ քաղաքների ա-
ռետրականներից և ար հետազործներից վերցված նարկներ: Կալանը՝ նստակյայ ժողովրդից վերցրած հարկներ: Նեմո-
րին ժողովրդից գանձվող արտակարգ տուրքներ, այդ գանձ-
վում եր հատկապես պատերազմի ժամանակ, վորպես պա-
տերազմական տուրք: Թարխը, ըստ Որբելյանի բացատ-
րության, այն հարկներ, վոր ժողովրդի կողմից տրվում
ե հոգեորականությանը, բայց թարխ կոշվում ե նաև
պետական ամբարներին տված հայահատիկային հարկը
և գանձարաններին լուծված դրամը: Դրանազիրը այն
հարկներ, վոր քաղաք մտնող ապրանքից քաղաքի դռների
մոտ են վերցնում:

Աբու-Մեյիդի արձանագրությունը Անիի մանուշելու-
կիթի պատի վրա պարզորշ կերպով ցույց է տալիս, թե ինչ-
պես արդեն 14-րդ դարի սկզբներին Անին սկսում է քայ-

Քայլել, անկում ապրել:

Վորոնք են այդ Քայլքայման պատճառները: Այդ պատճառները մի Քանիսն են: Արձանագրությունները նախ և առաջ ընդգծում են Անիի Քայլքայման պատճառներից առնակարերը՝ հարկապահանջությունը: Ինչպես տեսանք, Անի Մասին յեղած արձանագրությունները, թե հայերեն և թե պարսկերեն լեզվով վորոշակի կերպով ընդգծում են Քաղաքի վրա դրված բազմաթիվ հարկերի առկայությունը և հարկերը վճարել չկարողանալու հետևանքով բևակության զայթը Քաղաքի և Քաղաքի շրջապատից: Սա շատ Եյափան մի պատճառ է Անիի և նաև այլ Քաղաքների՝ Դիմին և Ղարսի անկման համար: Բայց Բայրի այդ հանգամանքին, Բայրի ծանր հարկապահանջությունը, այդ Քաղաքները անկման են դժմում նաև մի այլ պատճառով: Անյազ անգամ մեզ համար պարզվեց, վոր 14-րդ դարի ընթացքում առևտրական ճանապարհները, վորոնք Հայաստանի վրայով անցնելով կապում եիրե արևելքը արևմուտքի հետ, սկսում են փորեց իրենց ուղղությունը և թեքվում դժեպի հարավ: Ձերեւ 13-րդ դարում և 14-րդ դարի սկզբում առևտրական ճանապարհը Պարսկաստանից գալով դեպի Հայաստան իր հիմնական մագիստրալով անցնում եր Նախիջևանով, Անիով, Ղարսով և զնում դեպի Մեզ Ֆով, դեպի Ձեմբոպատ, ապա 14-րդ դարի սկզբից այդ ճանապարհները փորեն են իրենց ուղղությունը, իջնում են դեպի հարավ և անցնում նախ Բատենով, իսկ մի քիչ ամենի ուշ՝ Արդ դարի վերջին և 15-րդ դարի սկզբին՝ Վանա լճի ավազանով:

Անին Արդ դարի սկզբին արժեն խոշոր արդյունաբերական և առևտրական կենտրոնից վերածվում սակագնակ մի վայրի, իսկ 14-րդ դարում տեղի ունեցած

յերկրաշարժը կործանում է նաև նրա կանգուն մնացած շենքերից շատերը։ Դրանից հետո Սևին այլևս չի վերականգնում և մեր գրականության մեջ հիշատակվում է արդեն վորպես ավերակ քաղաք։

Անդի և Դիմինի հետ միասին անկումն են ապրում նաև Հայաստանի մի շարք այլ քաղաքներ, ինչպես որինակ Ղարսը, Լոռին, Մանազկերտը և այլն։ Քաղաքային և զյուղական տնտեսության անկումը Հայաստանում մոնղոլների տիրապետության ժամանակ տիրապետող յերեսութեան և դա բզմում եր մոնղոլ նվաճողների վարած քաղաքականությունից։ Սակայն այդ ընդհանուր անկյան պայմաններում, ըստ հանուր անկման ժոնի վրա մոնղունենք մի յերեսութեան վոր Հայաստանի առանձին վայրերում տնտեսական կյանքը այդ աստիճան անկում չի ապրում, ինչպես Հայաստանի մեծագույն մասերում։ Դեռ ավելին։ Տեղ-տեղ, առանձին քաղաքատիպ վայրերում առևտուրը, հատկապես արհեստագործությունը սկսում եալ հպանել։ Իր գոյությունը և ցույց տալ զարգացման նշաններ։ Այդ վայրերը գերազանցապես ընկնում են Հայաստանի հարավային մասերում։ Այդ քաղաքների ու վայրերի մասին, վորոնք թիշ թե շատ պահպանում են իրենց տնտեսությունը և նոյնիսկ զարգացման վրոշ տեսդենց են հանդես բերում, բավականին տեղեկություններ են տալիս յեվրոպական ճանապարհորդները։ Նրանք 14-15-րդ դարերում քաղաքան հանախակի յերթևեկել են Հայաստանի վրայով և նկարագրել են թե այդ ճանապարհների ուղղությունը և թե իրենց հանդիպած քաղաքներն ու զյուղերը։ Այդ ճանապարհորդների տվյալ տեղեկություններից պարզ

վուս ե. վոր Հայաստանի հարավային շրջաններում ընկած մի քանի քաղաքներ, ինչպես որինակ Բաղեշը, Արծեղը, Մուշը, Յերզնկան, Սղերդը, Ամիդը հանդես են զալիս, վորպես առևտրի և արհեստագործական կենտրոններ: Այդ քաղաքներում առևտուրը, արհեստները զարգացած են, այնտեղ զյուղատնտեսությունը նույնպես զարգացած վիճակումն է գտնվում: Ահա Յերզնկայի մասին մի փոքրիկ հատված, վորը գրել ե Կլավիսուն: Սա հետևյալն է ասում:

« Արպինջան քաղաքը գտնվում է մի դաշտում. մի գետի յեղերքին, վորը արևմտյան Յեփրատն է: Այն դաշտը, վորի մեջ տարածվում է քաղաքը. հետեւ Կողմից շրջապատված է բարձր լեռների շղթայով և սրանց զագաթներն այժմ ծածկված են ծյունով. բայց ներսի հովիտներում ծյուն չկա: Շրջապատի բոլոր կողմերից կարելի յէ տեսնել զյուղեր-վորթատներով ու բույսերով: Ամբողջ գաշտում մշակվում է վորթատունկ և հայահատիկ: Ամեն քայլափոխին կային շատ զեղեցիկ պարունակներ և այգիներ: Հայերն են շինել Արպինջան և քաղաքի պարտեզում կարելի յէ տեսնել շատ տեղեր քարերի վրա փորագրված խաչի նշաններ: Քաղաքի բոլոր տներն ունեն տափակ կտուրներ, վորոնցով մարդիկ կարող են անցնել մի տնից մյուսը. կտուրների վրայով՝ հնչպես փողոցից: Քաղաքը շատ բազմամարդ եր և այնտեղ կարելի յէ տեսնել շատ գեղեցիկ փողոցներ ու հրապարակներ: Շատ պաշտոնական անձնավորություններ ապրում են այս կեղ, վորուց սեծագոյն մասը հարուստ մարդիկ են և կան շատ փարթամ վաճառականներ:»

Բայց ատրությունների կարիք չկա. Ընդգծենք, վոր տե-

ղեկությունը վերաբերում է 15-րդ դարին։ Այդ նշանակում է, վոր այդ ժամանակ Յերզնկան ապրել է տնտեսական կյանքի վորոշ վերելք, մասնավանդ, վոր նոյն ժամանակարհորդների վկայությամբ այդ և նման քաղաքներում արտադրված բարփականին նուրբ գործվածքները մեծ ընդունելություն ունեցել Յեվրոպայում։ Միայն Յերզնկայի մասին չեմ կը նրանք այդպիսի նկարագրություններ են թողել։ Նրանք գրել են նաև Մուշի և Մերդինի մասին։ Ահա մի փոքրիկ հոգված, ուր յերբ խոսվում է Մուսուլի շրջակայքի մասին, Մուշի և Մերդինի համար հետեւյալն է ասվում։

« Այս նահանգների մոտ կա մի ուրիշ՝ Մուշը և Մերդինը, վորոնք արտադրում են մեծ բանակությամբ բամբակ։ Վորիկ շինում են մեծ մասամբ բենեկ և ուրիշ կոտրեղեն։ Ժողովուրդը, արհեստավորները, առևտրականները և ամենը հպատակ են թաթար թագավորին։»

Այսպիսի տեղեկություններ կան Բիթլիսի, Արճեշի և Վանի մասին։ Տեղեկությունները նշում են այդ վայրերում տնտեսական կյանքի աշխուժացման, արհեստագործության և առևտրի աշխուժացման մասին։ Այս տեղ հետաքրքրում է այն հանգամանքը, թե ինչով բացատրել, վոր այդ վայրերը պահպանում են իրենց տնտեսական վիճակը, այն դեպքում յերբ մոնղոլական և նրանց հաջորդ թերությունների և թուրքինների տիրապետության ժամանակաշրջանում յերիշը ապրում եր տընտեսական ընդ հանուր վայրեցքը։ Այս յերեւոյթը դեռևս ուսումնասիրելու, լուսաբանելու մեծ կարիք ունի։ Մենք թվենք մի բանի պատճառներ, վորոնք կարող ենք հսկապես նպաստել այդպիսի յերեւությունների առաջացմանը։ Ամենից եյական պատճառներից մեկն այն է, վոր այդ-

վայրերը. շնորհից այն հանգամաւնքի. վոր առևտրական
 ճանապարհորդները փոխագրվում են դեպի հարավ. սեր-
 տորեն կազմում են Կիլիկիայի հետ և Կիլիկիայի միջ-
 նակ Խոտավիայի քաղաք հանրապետությունների
 հետ. Ստեղծվում է առևտրական սերտ հարստերու-
 թյուններ այդ յերկրների միջև. յերկրներ, վորոնք ապ-
 րում են տնտեսական, հատկապես արդյունագործո-
 թյան և առևտրի ուժեղ վերելք: Խոկ զարգացող արտա-
 դրությունը Կիլիկիայում և Խոտավական քաղաքներում պահու-
 ցում եր նաև հումուզը, վորը կարող եր ծեռք բերվել
 հիշված վայրերում: Ահա ստեղծված այդպիսի պայման-
 ները և կապը փոքր ասիական յերկրների հետ, խթանում
 է, վոր այդ վայրերում տնտեսական կյանքը մի քիչ աշխա-
 ծանա, զարգանա: Կան ինարկե նաև յերկրորդական այլ
 հանգամանքներ: Այսն, վոր այդ վայրերը գերազանցացեն
 կապված լինելով արևմույան յերկրների հետ, մասամբ
 Կիլիկիայի հետ, այնքան ուժեղ շափով ավերածության
 շեն յենթարկվել մոնղոլական արշավանքների սկզբա-
 կան շրջանում, ինչպես Հայաստանի մի շարք այլ վայ-
 րեր, ինչպես որինակ միջին և հյուսիսային մասերը:

Թեև Հայաստանի հարավային մասերում 14-15-րդ դա-
 րերում տեղի յե ունեցել տնտեսական կյանքի աշխա-
 ծացում, սակայն դրա հետ միասին տեղի յե ունենում
 աշխատավոր բնակչության տնտեսության քայլայումը աղ-
 բատական միջին դրա փոխարեն խոշոր հարստության կո-
 տակում հարուստ առևտրականների և վաշխառուների ծե-
 րին: Աշխատավոր բնակչության այդ աղբատակայումը տեղի
 յե ունենում վոշ միայն Հայաստանի միջին և հյուսիսային
 մասերում, վորտեղ տնտեսական կյանքը անկար եր յեն-

արկվում, այլ նույնիսկ այնպիսի վայրերում, վորտեղ այդ-
տեստեսական կյանքը վարդացման տեղենցներ եր չուց
տալիս : Բաձն այն ե , վոր Հայաստանի այդ վայրերում վար-
դանում ե վաշխառությունը, իսկ վաշխառությունը այն
պայմաններում, յերբ ինորանում են առետրական հարա-
բերությունները և ինստանում ե հարկապահանջությունը
աշխատավոր բնակչությունից, իր ճանփն ե ձգում աշխա-
տավորին և քամում ե նրան : Բնակչության հատկապես
Հայաստանի և հարեւան յերկրների քաղաքի բնակչու-
թյան ընշապրեման և աղքատացման մասին հետաքրքր
նկարագրություններ ունեն ճանապարհորդները : Արանց
տված տեղեկություններից պարզ յերևում ե , վոր հարուստ
վաճառականների և վաշխառուների կողմին քաջաքներում
կա աղքատների, որքա հային կարոտ ընշապուրեկների
մեծ բազմություն :

Այդ ժամանակների սոցիալական անհավասարության պա-
կերը, ամենագեղեցիկ կերպով տվել է մեր խոշորագույն բա-
նաստեղծ Ֆրիկը իր «ԳԱՍՏԱՏ» բանաստեղծության մեջ :
Ֆրիկը ապրել է 13-րդ դարի վերջին, 14-րդ դարի սկզբին
և քաջ ծանոթ ե այն իրադրության հետ . վորի մեջ ապ-
րել ե Հայաստանի ժողովուրդը : Մեջ բերենք նրա բա-
նաստեղծություններից մի հատված, ուր նկարագրում ե
այդ անհավասարությունը :

«Մեկն ի պապանց պարոնորդի .

Մեկն ի հարանց մուրող լինի .

Մեկին հապար ձի և զորի .

Մեկին վոշ ուլ մի , վոշ տաքը :

Մեկին հազար գեկան վոսկի,
Մեկին վոշ փող մի պղնձի.
Մեկին հազար հատ մարզարիտ.
Մեկին վոշ ուշնիկ մի ապակի:

Մեկին հազար գառնով մաքի.
Մեկին վոշ մեկ շորբոտանի.
Մեկին բեհեզ և ծիրանի.
Մեկին բրդե շալ մի շանկնի:

Մեկին ատլաս և դրմզի,
Մեկին շապիկ մի շի հասնի,
Մեկին հարամն հաջողի,
Մեկին հալալն կորուսի:

Մեկն ի կրկանացն հարստի,
Մեկն յուրայնոցն աշխատասցի...
.....

Մեկին ըռախտ և զըրենի,
Ցոխով նըստի ի պետավ ձի,
Մեկ պոպիկ և անվարտիկ,
Բնանվակին առաջ փախչի:

Ճանապար հորդների վկայությունները, ինչպես նաև նաց կանան ու վրացական աղբյուրների տեղեկությունները. լուրջ են տալիս. վոր 13, 14 և 15-րդ դարերում Հայաստանում և հարեւան յերկրներում բնակչությունը ծայր աստիճան աղքատանում է: Տնտեսությունը հետ ե գնում, քաղաքներն ընդ հանուր առումամբ սկսում են քայֆայվել և տնտեսության այդ քայֆայումն ու աշխատավորության համար ստեղծ ված ծանր վիճակը շատ հաճախ ստիպում են բնակչությանը՝ հեռանալու իր բնակած վայրերից. գաղթել հեռավոր վոր վայրեր:

Անիի մասին զրգած արձանագրությունները պարզուոց կերպով հիշեցնում են, վոր Անիի և Նրա շրջակայի բնակչությունը գաղթում է, հեռանում է յերկրից: Յեզ իրոք 13-15-րդ դարերում Հայաստանից հեռանում է. մեծ թվով բնակչություն և գնում բնակություն հատատում հյուսիսային Կովկասում, Ղրիմում և Գորքանիական այլ յերկրներում: Բնակչությունը արտագաղթել է հատկապես Արարատյան դաշտից, Շիրակից, Բայրենիպանդի դաշտից և Վանանդից: Այդ գաղթը գլխավորապես տեղի յե ունեցել յերկու ուղղությամբ: Միուղղությունը այս ե, վոր Հայաստանի միջնաշխարհից գաղթում են դեպի Փոքր Ասիա, տեղափոխում են Կ.Պոլսում և Մասսամբ ել իջնում են դեպի Միջերկրական ծովի Կղզիները և Յեզիպտոս:

Մյուս ուղղությունը դրա հակառակն է յեղել: Գաղթել են դեպի հյուսիս և դեպի հյուսիս-արևմուտք, այսինքն դեպի Աստրախան: Մեծատուզ, Ղրիմ ու այնտեղից ել դեպի Եվրաստան:

Հայաստանից արտագաղթ դեպի այլ վայրեր յեղել էն

նաև 10-րդ դարերում, բայց այս արտագաղթը մի քանի տարբերիշ զծեր ունի: Առաջներում կատարված արտագաղթը տեղի յեւ ունեցել զիխավորապես ի հաշիվ իշխող դասակարգի, այսինքն 11-րդ դարում Հայաստանից հեռացած բնակչության մի զգալի մասը յեղել են ֆեոդալներ, նրանք վորոնք հեռացան Հայաստանից և տեղավորվեցին Կիլիկիայում և հետագայում այնուեղ ստեղծեցին հայկական թագավորություն: Բայց այս դեպքում այդպես չե: 13-15-րդ դարի արտագաղթը զերազանցապես յեղել է ի հաշիվ առևտրականների, արհեստավորության և աշխատավորական այլ տարրերի:

Յերկրորդ տարբերիշ գիծն այն եւ, վոր 13-րդ դարից առաջ յեղած արտագաղթը տեղի յեւ ունեցել վոշ թե յերկրի տնտեսական կյանքի անկաման հետևանքով, այլ լոկ քաղաքական դրդապատճառներից: Իսկ այս արտագաղթի հիմնական պատճառը յեղել է յերկրի տնտեսական կյանքի անկումը:

Սրհեստավորության և զյուղացիության հետ յերկրից հեռանում եյին նաև մեծ թվով առևտրականներ: Այդ եւ պատճառը, վոր 13-րդ դարից հետո, 14, 15 մասաբ եւ 16-րդ դարում մենք տեսնում ենք հայկական առածին առևտրական գաղութներ, վորոնք հաստատվում են յեփրոպական մի շարք քաղաքներում: Որինակ, այդպիսի գաղութներ են ստեղծվում վենետիկում, Ջենովայում, Ամստերդամում և այլն: Մակայն այդ առևտրականները հաստատվելով այդ քաղաքներում, չեն կտրում իրենց տնտեսական, առևտրական կապը բուն յերկրից, Հայաստանից: Նրանք առևտրական զործառնություններին համար հաճախ են լինում Հայաստանում և Հայաստանի

հարեան յերկրներում: Այդ հայ առետրականները փաստը բն դառնում են միջնորդներ արեելքի և արեմուտքի միջև: Հայկական բնակչության արտագաղթը Հայաստանից ունենում է այն հետեանքը, վեց Հայաստանի արանձին շրջաններում նոսրանում են, սվապում բնակչությունը: Ի հարկէ յերկիրը չի ամայանում: 14-15-րդ դարերում և հետագայում Հայաստանում բնակություն ու հաստատում նաև այլ ժողովուրդներ: Ինչպես որինակ մոնղոլ-թաթարներ, սելջուկ-թուրքներ մեացորդներ, թուրքմեններ: Այդ ցեղերը հայերի հետ խառը սկսում են բնակել Հայաստանի զանազան վայրերում: շփկում են իրար հետ. և փոխադարձաբար ապդում են միմիանց վրա կուլտուրայի բնագավառում և կենցաղում:

4. ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՆ 12-15-ՐԴ ԴԱՐԵՐՈՒՄ

12-15-րդ դարերին հայ ժողովուրդը ստեղծել ե խաչոր կուլտուրա: Այդ դարաշրջանից հետագա սերունդները ստացել են կուլտուրական հարուստ ժառանգություն: Այդ ժառանգությունը բազմապիսի և բազմանդակ է: Նա իր մեջ պարփակում է զարգացած պատմագրություն, գեղարվեստական գրականություն, դիտության մի շարք ճյուղեր՝ բնագիտություն, աստղաբաշխություն, բժշկություն, գրական-քննական նյութեր, Թարտարապետություն, նկարչություն և արվեստի այլ բնագավառների հետ:

Ա. ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ

Հայկական պատմագրությունը 12-14-րդ դարերում նոր կարկ է ստանում, նոր թագի է ստանում՝ Պատմագրության շարժացմանը բավական խոշոր շափով նը-պատել ե Քաղաքական հախուռն Կյանքը, պատմական դեպքերի արագ փոփոխությունը, վորը տեղի յե ունեցել այդ դարերում: Այս շրջանի պատմագրությունը տվել ե իր վոչ պակաս անվանի ծերկայացուցիչ-ները: Դրանցից նշանավորներն են. առաջին՝ Մաթեան Աւրհայեցին, վորն ապրել ե 12-րդ դարում: Նրա զիրքը կոչվուց ե՝ "Պատմություն": Ի տարբերություն նախորդ պատմիչների, նա իր զիրքը սկսում է վոչ թե Անդառ և Յեղայից կամ Նոյից, այլ իր ժամանակին սուտիկ Քաղաքական դեպքերից: Նրա զիրքը ընդգրկում է 951 թվից մինչև 1162 թիվը ընկնող ժամանակաշրջանի պատմությունը: Նրա զրքի վերջին մասը գրել են ուրիշ ները: Հակառակ այն բանի, վոր Ուրհայեցին, ինչպես ինքն ծը խոստովանում է, քիչ ե ծանոթ իր նար կ'ո՛. շրջանում յեղած պատմիչներին և առհասարակ դասեան կյանքին, ևս իր պատմության մեջ տալիս է բակւաթիվ տեղեկություններ վոչ միայն հայկական իրականությունից, այլև Առաջավոր Ասիայի այդ ժամանակաշրջանի Քաղաքական կյանքից: Այդ պատմության մեջ վոչ պակաս մանրամասնությամբ Ակարագրում է սեւզուկյան տիրապետությունը, սեւզուկյան իշխանության բայթարութ, Վրաստանի հկորացութը, Կիլիկիայի հայկական իշխանության ձևավորութը: Քաղաքական այդ դեպքերի պատմության ընթացքում նա զգալի տեղ է տալիս նաև Երկրի տնտեսական կյանքին և սույնալական հարաբերութ-

թյուններին, թեև ավելի համառոտ կերպով։ Ուրիշեցին իր «Պատմության» սկզբնական մասերում խրոնոլոգիական տեղեկություններ Ե տալիս Բագրատության թագավորության մասին, բայց տված այդ տեղեկությունները իրենց մեջ ունեն նիշասակումներ այնպիսի գեղքերի մասին, վորոնք արձագանք չեն գտել Աստորք պատմիչների մոտ և ճշգրտում են մյուս պատմիչների տեստելությունը։ Եթև Պատմական գեղքերի ընթանած տեսակներից ևս մի քիչ ցածր Ե իր նոխորդ պատմիչներից շատերից, բայց կա գիրքը կարեւոր ազբյուրներից մեկն Ե Ա-Է-Ր-Ր-Դ դարի պատմության ուսումնասիրության համար, ոյն եղ վոշ միայն, Նոյաստանի, այլև Հայաստանի նորեան ժողովուրդների պատմության համար։ Ես նոյնիսկ մաս բամասն տեղեկություններ Ե տալիս խաչունիքների պաշաճների մասին։ Տեղեկություններ, վորոնք անպայմանուն վորոշ նշունակություն ունեն գեղք որևէ ելք կառավագանքների արշավանքների ուսումնասիրության համար։

Յերկրորդ Սամվել Անեցի, վորն ապրել Ե 12-րդ դարում։ Նրա պատմական յերկը կոչվում է «Ժամանակաշրջանություն»։ Բայց այս աշխատությունից ունի ոյլ գրտկան աշխատություններ։ Նա իր «Ժամանակաշրջանություն» գրքում համառուտակի, հակիրճ վորով, բայց հաճախ շատ սրամիտ ձևակերպումով տալիս Ե այ ուստիան դեղքերն ու կրանք բնութագրությունը։ Ինչպես յոթի վերնագիրն Ե աստիճան կրա աշխատությունը խրոնոլոգիա յԵ, ժամանակաշրջան, այսինքն դեպքերը տալիս Ե ըստ ասորեթվերի։ Անովել Անեցին սկսում Ե իր գիրքը «Ի սկզբանե առափ»։ Այսինքն Ադամի, Յեփասի ժամանակներից, հասցնելով այդ միջև 1179թ

Նրա աշխատության սկզբնական մասերը պատմության լուսաբանական տեսակետից խողոք արժեք չունեն: Միայն մարդկանական ու արտաբական շրջանի վերաբերյալ տալիս ե մի շարք դեպքեր, վորոնի նախորդ պատմիշների մոտ չեն յեղել: Ամենայն հավանականությամբ այդ շրջանների մասին նա ոգտագործել ե գրավոր այլ աղբյուրներ: Վորոնի մեջ չեն հասել: Նրա մահից հետո նրա գիրքը լորունակուց են ուրիշ մարդիկ, պահպանելով նրա վոճռ ու գրելու ձևը:

Եերրորդ՝ Միսիթար Անեցի: Ինչպես Միսիթար Անեցի մամանակակից պատմիշներն են ասում, նա գրել է պատմական ընդարձակ մի աշխատիւթյուն մի բանի հաստից բաղկացած՝ մինչև Յ հատոր: Կամ յերեք բաժին: Առաջմբայ հայտնաբերված ե նրա գրած պատմության միայն մի մասը: Այդ մասում նա մեծ մասամբ կրկնում է իր նախորդ մատենագիրների պատմածները: Որկնելով հանդերձ, վորոն արձեթավոր տեղեկություններ տալիս ե Բագրատունյակ թագավորության մասին: Ամենայն հավանականությամբ, ինչպես յենթադրում են նաև մի շարք ուսումնասիրողներ, գտնված մասը կազմում է իր պատմագրության առաջին գլուխը կամ առաջին հատորը:

Վորրորդ պատմիչը Վարդան Բարձրաբերդցին ե, կամ Վարդան Վարդապետը, վորը ապրել ու զորձել ե 13-րդ դարի կեսերին: Մեծ մասամբ յեղել ե Սյունիքուր, Արարատյան դաշտում և իր յերկը զրել ե հենց մոնղոլների նվաճումների մասանակ: Նրա գիրքը վերնագրվում է «ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՏԻԵԶԵՐԱԿԱՆ»: Աս նույնպես հետևում է իր նախորդ ների սովորություններին և սկսում է աշխարհի սկզբից, հասցնելով պատմությունը մինչև իր որերը:

» ՊԵՏՄՈՒԹՅՈՒՆ ՏԵՇԵՐԱԿԱՄՆԸ" լեպքերը նույնպես տալիս ե
խրոնոգիտական կարգով: այսինքն ժամանակագրություն եւա-
կայն այստեղ Վարդան Բարձրաբերդին մոնղոլների տիրա-
պետության ժամանակի վերաբերյալ տալիս ե վերին առահ-
նանի արժեքավոր տեղեկություններ նրանց նվաճումների
մասին, մողովորդի դիմադրության մասին, մոնղոլական ափ-
րապետության դեմ յեղած հայ-վրացական ապստամբու-
թյունների մասին: Տեղեկություններ, վորոնք իուզոր նշանա-
կություն ունեն այդ ժամանակաշրջանի պատմությունը
լրացրանելու, ուսումնասիրելու տեսակետից:

Հինգերորդ: Կիրակոս Գանձակեցի, վորը ժամանա-
կակից ե Վարդան պատմիչին: Վոչ միայն ժամանակակից
ե, այլ նրա հետ միասին յեղել ե աշակերտ իր Խամանա-
կին բավական անուն հանած վանական վարդապետի
մոտ: Գանձակեցին զրել ե մի յերկ, վորի վերնագրուն ե
» ՊԻԱՏՄՈՒԹՅՈՒՆ": Նա իր պատմությունը սկսում ե ~~Կ~~ ոդ քա-
րի անկյունով, այսինքն Հայաստանում քրիստոնեության
տարածում: Համառոտակի յե տալիս սկզբնական շրջանը,
բայց ավելի ընդարձակ և մանրամասն կերպով
կարողանում ե տալ իր ժամանակի պատմությունը և
այդ հասցնում ե մինչև 1262 թվի վերջերը:

Յեկ Գանձակեցին և Վարդան Բարձրաբերդ պիտի
լայն շահով իրազեկ են իրենց ժամանակի քաղաքա-
կան դեպքերին: Գանձակեցին իր ուսուցչի հետ միա-
սին զերի յե ըսկնում մոնղոլների ձեռքը: Մոնղոլնե-
րը նոցնիսկ շեն ուզեցնել նրան ապատել և ցանկա-
ցել են պահել իրենց մոտ, վորպես զրագիր, բայց հե-
տո նրան հաջողվում է փախչել և դրանից հետո
ձեռնարկում այդ գրքի գրելուն:

Սբա պրքի սկզբնական մատերն առանձին արժեք չեն սեր կայացնում. բայց նրա գիրքը մի խոշոր դոկումենտ եւ ուր արձագանք են զտել հայերի և վրացիների մղած պայքարը մոնղոլ նվաճողների դեմ. գյուղացիական դժողովություններն ու յեղույթները տեղական ֆեոդալների դեմ և մոնղոլների վարած քաղաքականությունը նվաճված յերկրների նկատմամբ: Բավական ճշգրիտ կերպով տրվում է բազա քական դեկոքերի խրոնոլոգիան: Այդ գրքում Գանձակեցին, շատ հետաքրքիր կերպով նկարագրում է մոնղոլների միտուու կայը, նրանց բարքերը: Հետաքրքիր և այն վոր մոնղոլների բարքերը տալիս, նա վեր ե հանում մոնղոլների մոտ մի շարք գծեր, վորոնք գալիս եյն տոհմական շրջանից: Այս տեսակենտիկ Գանձակեցիան դիւքը մի արժեքավոր աղբյուր ե Անդրկովկաստում մոնղոլների տիրապետու թյունն ուսումնասիրելու համար:

Վեցերորդ՝ Ամբատ Գունդստաբը՝ կամ Ամբատ ապարագետ, 13-րդ դարի մատենագիր: Ինչպես արդեն հայութիյեցիս նա Կիլիկիայի հայկական թագավորության մեջ Բաղադական մեծ գործիչ է յեղել: Աշխարհական և վրայութեան լինելով հունդերձ նա հմտու յեղել գրական կյանքին և գրել է պատմական յերկու յերկ՝ “Պատմությունը և դատաստանագիրքը”: Դայերենի յերգամանել նաև խաչակիրների արշավանքներով արեելքում հաստատված լատինական իշխանությունների որենքները ասիրվերը: Տվյալ դեպքում մեզ հետաքրքրում է նրա առաջին յերկը, նրա “ՊատմութՅՈՒՆԸ”, վոր նույնպես գրված է խրոնոլոգիական կարգով: Նա կանց ե առնում իր նախորդների սովորությունը և իր պատմությունը սկսում է իր մոտ ժամանակից, Բագրատունի Գաղղիկ Ա-ի շրջանը և հասցնում է մինչև 1274 թիվը:

Ակաբնական մասում դեպքերը նկարագրութե համառուտագի . բայց ավելի մանրամասն ե տալիս Կիլիկիայում յեղած քաղաքական անգու դարձերը . Կիլիկիայի հայկական իշխանության առաջացման և զարգացման պատմությունը : Գևանդստաբեր Պատմությունը՝ շարունակել են ուրիշները : Այդ գիրքը արժեքավոր աղբյուրներից մեկն է Կիլիկիայի հայկական թագավորությանն ուսումնասիրելու համար :

Յոթերորդ: Մաշաքիա սարկավագ, վորք գրել ե՞ «ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՎԱՍԻ ԱԶԳԻՆ ՆԵՏՈՂԱՑ» : Դեռևս Շշտված չէ, թե այս յերկի հեղինակը իրոք Մաշաքիան ե, թե վոշ, վորով հետեւ այդ յերկի ճեռագրերը շաւնեն հեղինակի անուն : Այծու ամենայիշվ այդ գիրքը գրվել ե 13-րդ դարի վերջերին կամ 14-րդ սկզբին : Նա արժեքավոր է հատկապես նրանով, վոր բավականին մանրամասն տեղեկություններ ե տալիս մոնղոլ-տիբաապետողների նվաճումների, նրանց վարած քաղաքականության, հայկաթօն հարկերի, այդ հարկերի շափի ու տեսակների մասին : Նա բավականին առատ նյութ ե տալիս յերկրի տնտեսական կյանքը մասին և այդ շրջանի ամենահետաքրքիր գատութիշներից մեկն ե : Այդ յերկը, ուսի վոշ միայն տեղական նշանակություն, սոյլե մոնղոլական տիբաապետության ուսումնասիրության համար կարևոր աղբյուր ե նաև ուրիշ յերկրների համար :

Ութերորդ: Ստեփանոս Որբելյան: Նրա գործունեյությունը նույնական ըսկնում ե 13-րդ դարի վերջին, 14-րդ դարի սկզբին : Նա գրել ե «ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՆԱՐԱՆԳԻՆ ՍԻԽԱԿԱՆ» գիրքը, այսինքն տվել ե Այունիքի պատմությունը սկզբից մինչև իր որերը : Ստեփանոս Որբելյանն իր գիրքը գրելիս ոգտագործել ե բավականին փաստական նյութեր՝ Տաթեկ վան-

բում յեղած փաստագրեր, արձանագրություններ և այլն։ Աշխատել ե իր տված ամեն մի տեղեկություն հիմնավորել այդպիսի փաստերոց, յեղած արձանագրություններով։ Այդ գրքուն կան բաղաբական զածազան դեպքերի մանրամասն նկարագրություններ։ Կան բայց ականաշափ տեղեկություններ։ Այուսից տնտեսական կրանքի մասին։ Առ շատ հիմա դրդիր փաստեր ե տալիս 10-11-րդ դարերում Այս դրդիր զյուղատնտեսության զարգացման մասին, վոռոգսան ցանցի տարածման մասին։ Այդ գրքում մենք գտնուու ենք մի շարք տեղեկություններ պյուղական յեղութերի, ապառաօտով բաները մասին Այս դրդում, վորոնք բունկից են Տաթնվի վանքի գետ։ Բայց այդ՝ նրանու տրվում ե նաև սոցիալական հարաբերությունների և հոգած րության ձևերի մասին մի շարք տեղեկություններ։ Այդ տեսակետից ել այս գիրքը վերին աստիճանի արժեքավոր ե մեր պատմության ուսումնասիրության համար։ Ճիշտ ե, այդ տեղեկությունները վերաբերում են Միայն Հայաստանի մի նահանգին. դա ինչպէս նրա պակաս կողմուն ե, բայց մրցած փաստերի առաջուր հատկապես տնտեսականն իյանքի և սոցիական հարաբերությունների մասին հնարավոր ե դարձնում վորոշակի գաղափար կազմել այն մասնակիվա Հայաստանի սոցիալական հարաբերությունների մասին, մանաշանութ, վոր նման տեղեկություններ մեկ տարիս են նաև վիմագրերը և մյուս պատմիչները, սակայն ավելի անորոշ և սակայ:

Իներգութ. Միսիքար Այրեվանեցի։ Գրել ե մի փոքրիկ մամանակագրություն։ Այրդ դարի պատմիշ ե։ Նա մեծ մաս սամբ կրկնել ե իրենից առաջ յեղած մամանակագրությունները և միայն վերցնեն շրջանի մասին մի քանի փաստեր ե, ապել։

Տասերգութ. Շեթում պատմիշ գրել ե « ԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԹԱԹԱՐՄԱՅԻ գիրքը: Կիլիկիայի թէ: Նա առաջին անգամ այդ գիրքը շի գրել հայերեն լեզվով, այլ գալլերեն: իսկ հետո թարժմանվել ե լատիներեն, վորիկ հետո հայերեն: իսքս անձասր շի գրել գիրքը: Նա թեղադրել ե և մի ֆրանսիացի գրիյե առել: Այդ գրքում պատմությունը հասցվում է մինչև 1307 թիվը: Հեթումը սկզբնական շրջանում աշխարհիկ ե յեղել հետո աշխարհիկ կյանքը թողել ե և հոգեգորական դարձել մտել ե վանք, ծանոթացնել ե իսաշակիրների արշավանքների մաշանակ արեւելք յեկած յնվրոպական մի շարք անձնավորությունների հետ և մի ֆրանսիացու հետ շատ մոերմացնել ե: Իրանից հետո նրանք գուրու են զալիս Կիլիկիայից և շրջագայում: Իրենց ընկերակցության մաշանակ Հեթումը խնդրել ե ֆրանսիացուն վորպեսպի նա գրի իր թեղադրած պատմությունը, վորովհետոն իսքը լավ շի տրուապետել գալլերենին: Այդ յերկի թերություններից մեկն այն ե, վոր խոսում ե այնպիսի գեղագերի մասին, վորովի իրականության շեն համապատասխանում: Այս գրքի առավելությունն այն ե, վոր բավական մասրամասն տեղեկություններ ե տալիս թաթարական իշխողների և նրանց հարեւան այլ յերկրների մասին և մանրամասն նկարագրում ե իր մամանակակից դեպքերը:

Տասնմեկերրորդ թովմա ՄԵԾՈՒԹՅԻ: 15-րդ դարի պատմիշ ե: Ունի յերկու փոքրիկ աշխատություն: Մեկում գրել ե լենքթեմուրի արշավանքների պատմությունը, վոր հետայ այդպես ել կոչվում է: իսկ մյուսը մի հիշատագարան ե, գրված Եջմիածնում: Կաթողիկոսական աթոռը վերահաստատելու մասին: Լինելով համարյա թէ հայկական միակ աղբյուրը: 14-րդ դարի վերջի և 15-րդ դարի առաջին կեսերի անցյալերի մասին, իրենից ներկայացնում ե արժեթավոր մ.

աղբյուր այդ շրջանի պատմության ուսումնասիրության:

Մրանք այն պատմագիրներն են, վորոնց յերկերը կամ լրիկ կամ կիսատ շափով հասել են մեզ: Ասկայն յեղել են նաև ուրիշ պատմագիրներ, վորոնց յերկերը մեզ չեն հասել: Դրանցից յես միմիայն յերկուսը կ'իշատակեմ: Մեկը՝ 12-րդ դարում գործող մի դրական գործիչ է Հովհաննես սարկավագը, վորը գրել է պատմություն. վորի բովանդակությունը չեղել է սեղծուկյան արշավանքները և Հայաստանի վիճակը Մելիք-շահի ժամանակ, սակայն մեզ չի հասել: Այս մասին, վոր նա գրել է այդ պատմությունը. մեզ տեղեկություն են տալիս Կիրակոս Գանձակեցին, Վարդան պատմիշը.. Միհիթար Այրեվանցին և Կրու աշակերտ Ասմենը Աննեցին, վորոնք նշում են, վոր այդ յերկու վերին աստիճանի արժեքավոր մի յերկ է յեղել, գույնը բայ մակողմանի. հարուստ Նյութերով և դեղքիւսով Հենոց հարդ գորից ել նրանք մեջբերումներ են անում:

Հովհաննես սարկավագի նման յեղել է նաև վանական վարդապետը՝ 13-րդ դարում: Նա նույնպես գրել է մի պատմություն և այդ պատմության բովանդակությունը յեղել են մոնղոլների արշավանքները: Վոր նա գրել է այդպիսի մի պատմություն, այդ հաստատում են՝ Վարդան պատմիշը և Կիրակոս Գանձակեցին: Բանն այն է, վոր այս յերկու անձնավորությունները՝ Հովհաննես սարկավագը և վանական վարդապետը իրենց ժամանակին հուշակված են յեղել վոշ միոց իրենց գրական գործունեյությամբ, այլև իրենց դպրություններով: Թե Հովհաննես սարկավագը և թե վանական վարդապետը ունեցել են բազմաթիվ աշակերտներ: Աշակերտներ, վորոնք նույնպես իրենց ժամանակի հասարակական և գրական խոշոր դեմքերն են յեղել. Որինակ վանական վարդապետի

աշակերտն ենյեղել վարդան պատմիչը . Աիրակոս Կառ
ծակեցին և շատերը : Այս անձնավորությունների մասն
կրանք խոսում են մեծ պաֆոսով : Բոլորն ել իրենց
պատմության մեջ հատուկ զլուխ են տալիս վանական վար-
դապետին : Հենց այն, վոր կրանք հատուկ զլուխ են տալիս
վանական վարդապետի կյանքին ու գործունեյությանը . այ-
սույց ետալիս կրա , խոշոր գործունեյությունը այդ Ար-
ջանում :

Ահա պատմությամբ կբաղվողների այն շարքը, վոր
մենք ունեցել ենք 12, 13, 14 և 15-րդ դարերում : Բայց սրբ-
նից, իհարկե, յեղել են նաև ուրիշները, վորոնք կոչվում
են մանր պատմիչներ, վորոնք թողել են կամ փոքր յեր-
կեր կամ հիշատակարաններ և այլն :

Այս շրջանի մեր պատմագրությունը իր շատ կող-
մերով շարունակությունն ե նախորդ շրջանի պատմա-
գրության : Ամենից առաջ այդ պատմիչների մեծագոյն
մասի մոտ արտահայտվում ե տիրող դասակարգի՝
ֆեոդալական դասակարգի գաղափարախոսությունը :
Նրանցից մի քանիսի մոտ ցայտուն կերպով դրսեվոր
վում ե իդեալիստական հայեցողությունը կյանքի և
աշխարհի մասին, որինակ Ատենքանոս Որբեցյանի մոտ :

Այնուհետև՝ ինչպես նախորդ շրջանի պատմա-
գրությունը, այնպես ել այս շրջանի պատմագրությունը
շատ մլատ ե իր տեղեկություններով յերկրի տնտեսա-
կան կյանքի մասին, հատկապես սույիալական հարաբե-
րությունների մասին : Նրանք ավելի մեծ ուշադրու-
թյուն դարձրել են քաղաքական անց ու դարձի վրա :
Սույիալական հարաբերությունների մասին տեսլեկություն-
ներ շտալը բացատրվում ե մասամբ նրանով, վոր պատ-

Միշներից շատերը կապված լինելով ֆեոդալների ուստ
 շեյխն ուզում գրել իրենց ժամանակի «Արհամարհիվաձ»
 խավերի մասին։ Չեն ուզեցել գրել, վորով հետև սուրիա-
 լական հարաբերությունների մասին գրել, նշանակում
 եր գրել այն մասին, թե ինչ հարաբերություններ կային
 զյուղացիների և կալվածատերերի միջև, ինչպես եյխն կալ-
 վածատերերը հարկեր հավաքում զյուղացիներից, և վեր-
 ջապես ինչ փոխհարաբերություններ կային այստեղ և
 ինչ պայքար ե յեղել զյուղացիների և կալվածատերե-
 րի մեջ։ Սակայն դրա հետ միասին, պետք ե ընդգծել
 մի ուրիշ հանգամանք, այն, վոր մեր պատմիշների մեծ
 մասը զրել ե իր պատմությունը քաղաքական անցքերի
 այնպիսի յեռ ու զեռի շրջանում, վոր նրանք ուշադրու-
 թյուն շնորհած յերկրի ներքին հարաբերությունների վրա։ Այնու ամենայնիվ մեր այս շրջանի պատմա-
 զրության հիմնական թերությունը ներքին կյանքի մա-
 սին, սոցիալական հարաբերությունների մասին քիչ տե-
 ղեկություն տալն ե։ Սակայն այդ բոլորով հանդերձ, նա-
 խորդ շրջանի պատմագրության հետ համեմատած, այս
 շրջանի մեր պատմագրությունը համեմատաբար ազատ է
 այն կրոնական յեկեղեցական դոգմատիկսից և սխուաս-
 տիկ մոտածողությունից, վոր կային 9-11-րդ դարերի պատ-
 մագրության մեջ, յերբ վերջինում փաստերը տրվում են
 յերկար մօքբերումներ անեղով աստվածաշնչից և դեպքերը
 բացատրվում եյխն գուշակություններով։ 12-15-րդ դարե-
 րի մեր մատենագիրների մոտ այդպիսի յերեսով համար-
 յա թե չկա, իսկ այդ խոշոր առավելությունն ե և դյու-
 րություն ե տայիս պատմական դեպքերը ավելի ճիշտ
 ըստունելու և բացատրելու։ Այնու հետև այս շրջանի պատ-

մագրությունը, հատկապես 13-14-րդ դարերի մատենագրությունը մի բողոք ե մոնղոլական տիրապետության գեմ մոնղոլների կործանարար Քաղաքականության դեմ: Այդ դարերի մատենագիրները դրվատում են մողովորդի դիմադրությունը՝ մոնղոլ նվաճողների^{ուղ}, նրանց գեմ յեղած ապստամբությունները և ատելությամբ են խոսում այն Իշխանների մասին, վորոնք դավաճանում են և անցնում մոնղոլների կողմը ու դառնում նրանց գործակից. որինակ՝ Քրակոս Գանձակեցին: Բայց դրանով չի վերջանում 12-15-րդ դարերի հայկական մատենագրության արժեքը: Այդ արժեքը ավելին ե, յեթե նկատենք, վոր նա Մերձավոր արևելքի պատմության ուսումնասիրության համար, սկսած սելջուկների տիրապետությունից մինչև սեֆելվյան Պարսկաստանի ասպարեզ իջնելը, հանդիսանում ե կարեոր աղբյուրներից մեկը: Բանն այն ե. Վոր հայ մասենագրությունը վոլ միայն տալիս ե Քաղաքական անց ու դարձը Մերձավոր արևելքում, այլև այդ նվաճողների կիրառած Քաղաքականություն այդ յերկրներում, այդ յերկրների տնտեսական կյանքի մասին վորոշ տեղեկություններ և ի վերջո այդ նվաճողների նկարագրը, նրանց վարքն ու բարքը: Որինակ Աստվածառու Որբելյանը և Կիրակոս Գանձակեցին բավականին հետաքրքիր նկարագրություններ են տալիս մոնղոլների սասին: Նրանց տվյալն տեղեկություններով կարելի յե նոյնիսկ վորոշ յերկակացություններ անել, թե այն ժամանակ նրանք ինչ սոցիալական չերտավորում ենին ապրում, հասարակական զարգացման ինչ աստիճանի վրա եյին գտնվում: Այս տեսակետից այս շրջանի, ինչպես և նախորդ շրջանի հայկական պատմության արժեքը չի սահմանափակվում միայն հայկական

իրականության սահմաններում, այլ ավելի լայն շրջանակներ ունի և ավելի խոշոր նշանակություն։ Խնտարակությունը այդ պատմագրության ոգտագործումը պետք է կատարվի բննադատաբար, միայն այդ դեպքում նրա ոգտագործումը կտա իր դրական արդյունքը և ոգտակար կլինի հայ և հարեւան ժողովրդների պատմության ուսուցասիրության համար։

Բ. ԿՐՈՆԱԿԱՆ ՅԵԿԵՑԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

12. Այս դարերում հայկական կուլտուրան նարաւում է այլ բնույթի զրականությամբ։ Որինակ, պատմագրությանը բավական մոտ են կանգնած միշարք գրական աշխատություններ, վորոնք ճիշտ են պատմագրություն չեն, բայց վորոնց մեջ պատմական բազմաթիվ խնդիրներ են շոշափվում և նյութ են տալիս զանազան հարցերի պարզաբանման համար։ Այդպիսին են այն ամբողջ գրականությունը։ Վոր ստեղծվում են այս դարերում ունիթորական և հայկական լուսավորչական յեկեղեցականների պայքարի ընթացքում։ Իր ձևով սա ի հարկե կրոնական, յեկեղեցական գրականություն է, բայց բավական արժեքավոր նյութ է տալիս այդ շրջանի պատմության վերաբերյալ։ Ինչպես հայտնի յէ, ունիթորական շարժումն այդ շրջանում Հայաստանում բավականին տարածվել էր։ Ունիթորները նույնիսկ ունեյին իրենց առանձին թեմուրը Հայաստանում։ Այդ թեմուրից մեկը գտնվում էր նախիջևանում։ Ունիթորների աշխի ընկնող զեկավարներից մեկը յէջել է Հովհաննես Քռնեցին։ Ունիթորական շարժման դեմ զնացող անձնավորություններից հայտնի երս Հովհաննես վորուանեցին, Գրիգոր Տաթևացին, Անդրակունեցին և

Մաղաքիա Ղրիմցին։ Ահա այդ պայքարի ընթացքում այս
մարդկանց կողմից ստեղծվել է բավական ընդարձակ գրա-
կանություն, ընդվորում այդ գրականության մեջ իմացաբա-
նական և փիլիսոփայական հետաքրքիր հարցեր են արձարձ-
վել, վորովհետեւ այդ պայքարը մասամբ արտահայտվ-
ել էր ժամանակի ֆիլիսոփայական միտքը։ Այդ տեսակե-
տից ել այդ գրականությունը վոշ միայն հետաքրքիր է,
այլև արձեքավոր է, մանավանդ, վոր բավականին լուս
և սփռում ունիթորական շարժման և նրա մղած պայ-
քարի վրա, վորպես սոցիալական առանձին շերտի մը-
ղած պայքարի։ Բայի ունիթորական և լուսավորչա-
կան յեկեղեցականների պայքարի ընթացքում ստեղծված
գրականությունից, կրոնական գրականության բնագավառում
այս շրջանում նույնպես ստվարանում են մեկնաբանու-
թյունները և շարականները։ Մեկնաբանություններն, ի հար-
կե, վորեւ նշանակություն շունեն, նրանք վուտ կրոնա-
կան բնույթ ունեցող գրվածքներ են, բայց շարականները
արժեքավորեն շեն, նրանց մի մասը գրական- գեղարվես-
տական հատվածներ են և ունեն աշխարհիկ բովանդա-
կություն։ Բեւ յերթեմն յերգվում եին յեկեղեցական արա-
րողությունների ժամանակ։

Գ. ՈՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Կուլտուրայի բնագավառում այս դարերը բնորոշ են
մաս նրանով, վոր պատմագրության կողքին զարգա-
նում ե նաև որենսդրական գրականությունը։ Պետք
ե ասեն, վոր մինչև 12-րդ դարը Հայաստանում Քո-
ղաքացիական որենսդրություն գրավոր կերպով չի յեղել։
Են շրջաններում Հայաստանում գերազանցապես ղեկավա-

Աղուս Եյին յեկեղեցական ժողովների մշակած կանոններով,
 վորովհետև յեկեղեցական այդ ժողովները հաճախ գուր
 ոն յեկել կրոնական հարցերի սահմաններից և մշակել
 են նաև քաղաքացիական որենքներ; Բայց յեկեղեցա-
 կան ժողովների գրավոր կանոններից, Հայաստանում
 քաղաքացիական հարցերը լուծում եյին նույն սովորութ-
 ներով, վորոնք որենքը ուժ եյին ստացել Սակա 4 12-րդ
 դարում Նախկինում յեկեղեցական ժողովների մշակած կա-
 նոնները, տրադիցիոն սովորութները մշակում և գրավոր
 որենութրության ժ վերածում Միսիթար Գոշը: Միսիթար Գոշի
 այդ գիրքը անվանվում է «ԱՏԱՏԱՆԱԳԻՐԸ»: Նա բաղկացած
 է յերկու բաժրեներից՝ յեկեղեցական և աշխարհիկ ու ճնշների
 բաժինները: Միսիթար Գոշը խոստովանում է, վոր այդ դա-
 տաստանագիրքը գրելիս ոգտվել է բազմաթիվ աղբյուրնե-
 րից: Նրա աղբյուրներն են յեղել առողջապահությը, կամ
 ինչպես ընոռունված ե ասել Մովսեսական որենքները,
 արաբական որենքները, բյուզանդական, վրացական որենքն-
 որությունները և բազականին խոշոր շափով յերկրում
 գոյություն ունեցած սովորությունները: «Դատանուա-
 գրքում» պատմով անցնում ե տիրող դուռը կայուցի
 շահերի պաշտպանությունը: Այնտեղ Նշվելու այն բոլոր
 իրավունքները. վոր տիրող դասակարգը թեոդալներ և
 ունեյին յերկրություն: Բոլոր հատվածները, վորութե խոսվում
 ե սույնալական հարաբերությունների մասին դասակար-
 գային հարաբերությունների մասին, այդ բոլոր հատված-
 ներում պաշտպանվում ե թեոդալների շահերը: Թեև տեղ-
 տեղ դատաստանագրքի հեղինակը՝ մեղմացելու համար
 այդ հարաբերությունների սուր կողմերը, գտնում են վոր
 խոստությունները շինականների և ծառաների շատմասը

պետք եւ սահմանափակվեն։ Դրանով հանդերձ Գոշի «Դա_տաստանագիրքը» ունի խոչոր պատմական նշանակություն։

Նրա նշանակությունն ու արժեքը մոծանում ենակ Արանով, վոր նա կարեղ աղբյուր ե՝ պատմական մի շարք հարցեր լուսաբանելու տեսակետից։ Այդ «Դատաստանա_գիրք»-ը տալիս ե բազմաթիվ տեղեկություններ դասա_կարգային փոխհարաբերությունների մասին, շահագործ_վոր դասակարգի իրավաբարեկության մասին, տիրող դաս_կարգի իրավունքների մասին և այլն։

Բայց Միսիթար Գոշի «Դատաստանագիրք»-ից հայեա_կան իրականության մեջ ասպարեզ ե իջնում նաև մի այլ որենսդրական աշխատություն, այդ Ամբատ սպա_րապետի կամ Ամբատ Գունդստաբլի «Դատաստանագիրք»-ն է։ Այս որենսգիրքը գրվել է 13-րդ դարում, Կիյիկեայի հայկական թագավորության շրջանում։

Ամբատ սպարապետի «Դատաստանագիրք»-ը մի կոտ_պելատիկ /հայկաֆանու/ աշխատանք ե։ Նա բաժականք նյութեր ե վերցրել Գոշի «Դատաստանագիրք»-ից, նրա հր_նական աղբյուրը յեղել ե այդ գիրքը։ Դրա հետ մրագի նա վերցրել ե յեղենացական որենքներից վորոշ կոտորներ ու զգություններ ե քաղել նաև խաչակիրների այդ ճա_մանակ ստեղծված արեւյան իշխանությունների մեջ գործող որենքներից։ Այդ գիրքն ունի մի բնորոշ գիծ, այն ե, վոր նրանում առեւտրականությանը բավակա_նից տեղ ե տրված։ Արանց իրավունքները պաշտպան_վու, առեւտրական հարաբերությունների պարզացմանը նը_պատելու իմաստով։ Այս տեսակետից սա նույնպես վորոշ նյութը ե տալիս պատմության ուսումնասիրության համար։

Ահա այս յերես յերենի մեջ ե արտապոլիտ այդ ժաման-

Կի հայկական որթնսդրությունը:

Դ. ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

12-րդ դարերում հայկական իրականության մեջ առաջանում են նաև գիտական գրականությունը: Գիտության զարգացման տարրեր մենք ունենք գեղես նախորդ շրջաններում՝ մաթեմատիկայի բնագավառում, փիլիսոփայության բնագավառում և այլն: Այս շրջանում դրանք ավելի խորանում, զարգանում են և նրանց ավելանում են: Գիտության նոր ճյուղեր: Ակսում են զարգանալ ասուղաբաշխությունը, ալիքի մաթեմատիկան, բնագիտությունը, բժշկությունը և աշխարհագրական գիտելիքները: Բայց դրանց մեջ առանձնակերպ աշբի յե ընկնում բժշկության զարգացմանը: Բժշկական գիտելիքների տարածումը Հայաստանում սկսվել է գեղես բավական վաղ շրջաններից՝ 10-րդ դարերից: Բայց բժշկականությունը Հայաստանում սկսում է ավելի ուժեղ կերպով զարգանալ 12, 13, 14, 15 և հետագա դարերում: Ու տաղիս ե իր ականավոր ներկայացուցիչներին: Բժշկության ներկայացուցիչները մինչև 12-րդ դարը յեղել են Գրիգոր Մագիստրոսը, ապա Ասհակը:

12-րդ դարում հանդես է գալիս Միքայար Հերակլին: Նա բազմակողմանի գիտելիքների տեր մարդ է յեղել: Նա զբաղվել է փիլիսոփայական վորոշ խնդիրներով՝ աստղաբաշխությամբ, բիոլոգիայով, Բայց, այդ բոլորի հետ միասին, նա յեղել է նաև անվանի բժիշկ: Նա անվանի յե յեղել վոչ միայն վորապես գործնական, պրակտիկ բժիշկ, այլ վորապես բժշկականության տեսաբան: Ուսի մի քանի բժշկական գրքեր, վորոնց մեջ աշբի յե ընկնում: Ձերսանց Մուտքարությունը դիրքը: Իր գործորուց Միքայար Հերակլին տաղիս ե իր ձամանակը.

բժշկականության հիմունքները և նշում օ կոնկրետ միջոցառություններ զանազան հիվանդություններ բուժելու համար։ Միսիթարիկ հետո հիշատակվում նաև մի շարք այլ հայ բժիշներ։ ինչպես որինակ Անար և Բունիաթ, վորոնք սահայն գրական աշխատանքներ չեն թողել։

15-րդ դարու բժշկության բնագավառում տալիս ե իր խոշոր ներկայացուցիչ՝ Ասթր Տովլաթ Անգամիացուն։ Ասմիր Տովլաթը թողել է բժշկական մի շարք աշխատություններ և իր ինքնակնեսագրությունը։ Նրա ինքնակնեսագրությունից պարզվում է, վոր նա աշխատել է բազմաթիվ վայրերում, ծառայել է զանազան իշխանների և բռնակալների մոտ վորպես բժշկապետ, սահայն և այնպես նաև մողովրդական բժիշկ ե յեղել։ Ասմիր Տովլաթը ջանացի ե իսպաս բերել իր բժշկությունը։ ինչպես իսբն Ե ասում՝ աղթատ մարդկանց։ Այդ նպատակով նա հասարակ մողովրդի համար գրել ե մի գիրք, որ խորհուրդներ Ե տալիս հիվանդություններից բուժվելու համար։ Այդ գիրքը նա անվանել ե «ԳՈՐՔ ՈՒՍԿԱՆ»։

Ասմիր Տովլաթը ժար ու բանդ Ե անում նաև միջնադարյան բժշկության վորոշ տրադիցիաները, այսինքն նա բաց Ե անում այդ բժշկության գաղտնիքները բուժման միջոցների պատրաստման և բուժման յեղանակների մասին։ Նա իր «Հոգուտ բժշկության», «Անպիտակ անպետ», «Արք Ռոբատին» / գեղագործություն / և «Գիրք ռասկան» աշխատություններում պարզաբանում մի շարք հիվանդություններից բուժվելու միջոցառությունները, հակառակ բժշկության մեջ այդ ժամանակ բուժման միջոցները գաղտնի պահելու տրադիցիաներին։ Հենց այդ յերկերում Ասմիր Տովլաթը վեր Ե հանում իր ժամանակի բժշկական գիտելիքները և դարձնում Ե մատշելի նրանց, ովքեր կարող

եյին այդ գրքեռը կարողալ! Նա այդ գրքերում զարգաց
նում է մի շարք սկզբունքներ՝ գիտության վերաբեր-
յալ. կոնկրետացնելով բժշկության բնագավառում, առա-
եւ, վոր յեթե ուզում են լավ բժիշկ դառնալ. պետք է
շատ կարողա, շատ սովորեն: Առանց սովորելու գի-
տուն, իմաստուն դառնալ չեն կարող: Այսուհետև ա-
զտնում են. վոր բժիշկը պետք է ծառայի ժողովրդին
ընդվորում բժիշկն աղքատներից վարձ չպետք է վեց
նի. յերբ նրանց բուժումներ: Բայսի այդ սկզբունքների
պետք է հիշատակել. վոր Ամիր Տովլաթի գրքերու
կան վորոշ հիմքանդությունների ռիազնոցներ և բու-
ժան յեղանակներ, վորոնք մինչև այժմ ել ընդու-
մի յեն բժշկության մեջ:

Առայժմ այդ կարելի յեն հաղորդել մեկ զբաղ
նող շրջանի գիտության վերաբերյալ: Պետք է ձև
գծել նաև մի հանգամանք, վոր բայսի ինքնուրուց
զրականությունից. գիտական զանազան ինդիրնե-
րի նկատմասի այդ ծամանակաշրջանում կատարվե-
նեն նաև բազմաթիվ թարգմանություններ՝ իւշպես
որինակ. ալֆիսիայից, բժշկությունից, աշխարհագրակ-
գիտելիքներից, մաթեմատիկայից, աստղաբաշխությունուց.
Ընդվորում այդ թարգմանությունները կատարվել եւ
արաբերենից, հունարենից, վրացերենից և այլն! Այդ
թարգմանություններն եւ ունեն իրենց արժեքը, հա-
կապես այն պատճառով, վոր թարգմանություններն ու
իրանում են յերկրում գիտական մտքի զարգաց-
մը, գիտական մտքի առաջնադաշտումը:

ՅԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Դայուսի յեւ, վոր գեղարվեստական գրականությունը մշորես գրականություն ինքնուրուց տեսակ առաջանալ եւ սկսում 10-րդ դարի վերջերին, 11-րդ դարի սկզբներին։ Այդ գրականությունը առանձին վարկ է ստանում 12-14-րդ դարերում։

Մարեկացուց հետո գեղարվեստական գրականության բնագավառում հանդես եւ գալիս Սերսես Շնորհալին. վորը 12-րդ դարի գրող է։ Նա տպել եւ բազմաթիվ գրքեր, վոտանավորներ, տաղեր, մեկնաբանություններ և այլն։ Մեզ համար նրա գրվածքներից ամենաարժեքավորն է «ՅԵՂԵՍԻԱՅԻ ՎՈՂԲԸ», վորի մեջ նա նկարագրում է ՅԵՂԵՍԻԱՅԻ գրավումը Հայեպի սրութանի կողմից։ Այդ յերկն արժեքավոր եւ նախ և առաջ իր թեմատիկայով և այն մոռքերով։ Վորոնֆ արտահայտված են այնտեղ։ Բանն այն է, վոր Շնորհալու գրվածքներում մենամասք տեղ են գտել յեկեղեցական թեմաներ։ Առկայն վերոհիշյալ գրվածքում Շնորհալին առաջ եւ քաշում աշխարհիկ թեմա, ընդվորում քաղաքական և սոցիալական խորը բովանդակությամբ։ Այսպես, որինակ՝ «ՅԵՂԵՍԻԱՅԻ վողիմ»-ում նա կարգանում է ազգային ինքնապաշտպանության գաղափարը, նա գովերդում է արիությունը, քաջությունը, հայրենիքի պաշտպանությունը։ Արևոնֆ գաղափարներ են, վորոնֆ այլև չեն պարփակվում կրոնական քողի մեջ։

Շնորհալուց հետո մեր աշխարհիկ գրականության մեջ ասպարեզ եւ իջնում ՖՐԻԿԸ։ Նա ամենից առաջ աշխարհիկ մարդ և աշխարհիկ գրող եւ յեղել։ Նա ապրել է 13-րդ դարի վերջին, 14-րդ դարի սկզբին և իր սոցիալական

կեցությամբ պատկանելիս եւ յեղել դեմքիրատական տարրերի շարքին:

Ֆրիկը համարյա իր բոլոր վոտանավորներում արտահայտել եւ աշխար հիկ մոտիվներ : Նրա մոտ յեկեղեցյական, կրոնական թեման շատ քիչ եւ հանդեն զալիս : Նրա թեմատիկան վոշ միայն աշխար հիկ եւ, այլև խորը սոցիալական եւ: Դրսեվորում եւ աշխատավորական մասսայի դժգոհությունն ու բողոքը տիրող կարգերի դեմ և արտահայտում եւ նրանց ձրդտումները: Նա բողոք եւ բարձրացնում վոշ միայն սոցիալական անարդարության դեմ, այլև արտաքին նվաճողների դեմ: Մեկ արդեն հայտնի յէ նրա «Գանգատ» վոտանավորը, վորի մեջ նա վեր եւ հանում շահագործվող ու շահագործող գասակարգերի մեջ յեղած խոր անդադոնիկմը: Այօծ մի քանի հատվածներ մեջ բնրենք նրա այլ վոտանավորներից: Նա իր «Ըստում ՖԱԼԱԳԻՆ» և «ԳԱԽԳԱՏ» վոտանավորներում տիրող կարգերի դեմ հետևյալն ե զրում:

«Իշխան դրեր ես մեկ մեկի,
Քան զբանասար զայլ վոշխարի.
Կամ վերդ վական նապաստակի
Կամ քաջ առյուծ ամեն հոտի»:

- Զտուվաթն ասա թե ո՞ւր լինի,
Յեկ բազդավորն ո՞ւր զտանի,
Վոր ի շուրջ զամ տասն տարի,
Յերեւ կաթլմ՝ ինձ հանդիպի».
- Եյ շարին, զվատին տունն կու լցնեն ակով դու բոլոր,
Զաղեկն ի հերենք ի վար փոարեն. վոր մողովտ կտոր,
Զայն վոր խոզարած շվայել ե կու վուգեն ահեղ ձեռվոր,
Յեկ վրշորդ մարդկանց ըկտունըն բակեն առանց բահավոր»

Յես ուղումտեմ այստեղ բերել մի ուրիշ հատված, վորը
նույնպես եյական է ֆրիթ ստեղծագործության մեջ։ Այդ-
հատվածը վերցնում ենք նրա արժեքավոր վոտանավորե-
րից մեկից, վորի վերնացիրն է՝ "Վասն Առառն Ղանոն Յես
ԲՈՒԴԱՑԻՆ". Այնտեղ նա բողոք է բարձրացնում արտաքին
նվաճողների դեմ։

"Դու զբրկելոց նս վողորմած,

Վորբերն քոյեն և այրին.

Տեր դու տեսար յերկնից ի վայր,

Զինչ քո ճառայիրն բարչեցին։

Գեմ շմեաց աղբյուրու գետ,

Վոր լացուցացիքս շիխուցին.

Գեմ շմեաց լեռներու դաշտ,

Վոր մասսաշիքն շկոխեցին։

Զմեռն հարան յերթին լալով,

Վ'ամառն ի քոյն քաշէին.

Քսան տարի դար քաշեցաք,

Վոր հալեցաք վոսկըրու սորբի։

Լոկ շընչավոր եմք մնացել,

Խելք, զգայարանք ի մեզ շերեմն.

Զալալ եղբած եր մնացել,

Նա կու զարներ աթիք բանի՞ն։

Ֆրիթը իր յերկու այլ վոտանավորներում՝ "ԱՅՀ ԲԱՆ
ՖՐԿԱՆ ՀԱՍՑՑԱԿ" և „ՆՈՐԻՆ ՖՐԿԱՆ ԱՍԱՑՑԱԿ" վոտանա-
վորներում բողոքում են իրադրության դեմ, վորի մեջ
ընկել են շքավոր մարդը և հենց ինքը։ Ահա այդ վո-
տանավորներից՝

" Աստեն թէ խսէ զիսի,

Որ լինիս դու սի պահ ի քուն.

Ուսկայ ի պարուոց յուղուն. յուհուն

Կու դողամ պինը ուռեի բատուն:

Դրի պիմ որդին գրաւ

Ուստի ճուղաց զնալուն

Միթէ թագավորն երկնից

Նա բերէ պիմ որդին իտուն:

Ֆրիկի ամբողջ ստեղծագործությունից ակնբախ կերպով յերևում ե, վոր նա վոշ միայն իր թեմատիկան ընտրել ե աշխարհիկ կյանքից և արձարձել ե սոցիալական հարցեր. այլև այն, վոր նա արտահայտել ե իր ժամանակաշրջանի դեմոկրատական տարրերի ձգտումն ու իշերը, հանդիսացել ե աշխատավորության ներկայացուցիչը: Ֆրիկը վորսկա աշխատավորության յերգիշ ամբողջությամբ ծառացել ե տիրող կարգերի դեմ: Բայց այդ նա միաժամանակ հանդիսացել ե հայկական գեղարվենտական գրականության հիմնադիրներից և կերտողներից մեկը:

Ֆրիկի ստեղծագործությունները մե, համար վոշ միայն գեղարվենտական արմեք ունեն, այլև սրատմական, նրանք շատ դեպքում հանդիսանում են աղբյուր՝ այդ ժամանակի սոցիալ-դասակարգային փոխ հարաբերությունները վեր հանելու և բացատրելու համար: Այդ տեսակետից ամենից արմեքավոր ե նրա „Գանգատ” և „Վասն Արդուն ղանին բուղային” վոտանավորները:

Ֆրիկի ստեղծագործությունները գեռևս ուսումնասիրված չեն, դեռևս հրատարակված չեն ֆրիկի բոլոր գրվածքները: Այդ գրվածքների հրատարակումը և ուսումնասիրությունը ավելի ևս կդրսեվորի ֆրիկի մեծությունը և նշանակությունը մեր գրականության մեջ:

Ֆրիկի մասին յեղած հաստ ու կտոր անդեմությունները

պարզվում ե, վոր նա շրջագայել ե բավական վայրեր: Նա
յեղել ե Կիլիկիայում, անցել է Փոքր Ասիայի մի շարք
վայրեր, յեղել ե Հայաստանի մի շարք Քաղաքներում
և այդ շրջագայություններն ոգնել են նրան, վորպեսի
նա դիտի աշխատավոր ժողովրդի կացությունն այդ վայ-
րերում, տեսնի այն ծանր վիճակը, վորում ապրել է
այդ ժողովուրդը: և այդպես վառ Կերպով դրսեվորի հր
վոտանավորներում այդ ծամանակավա սույնալական և տնտե-
սական փոխհարաբերությունները:

Փրիկից հետո գեղարվենտական գրականության բնագա-
վառում հանդեռ են զայխ Հովհաննես և Կոստանդին յեր-
պրնկացիները /XIII-XIV դարերում/ և Մկրտիչ Նաղաշը /XIV-XV-
դարերում/, Վորոնք նույնպես մեր միջնադարյան գրականու-
թյան խոշոր դեմքերն են: Նրանք գրել են բազմաթիվ վո-
տանավորներ, վորոնցում գովերդել են սերը, բնությունը և
այլն: Նրանց մոտ նույնպես աշխարհիկ մոտիվը սկսում ե-
գերականցել կրոնական թեմաներին:

Գեղարվենտական գրականությունն այս դարերում հր
մեջ կրում ե մի շարք նորություններ: Նորություններ վոշ
միայն բովանդակության տեսակետից, թեմատիկայի տեսա-
կետից, այև ձեր տեսակետից: Որինակ՝ բայի բանաստեղ-
ծությունից, հանդեռ են զայխ նաև առակներ: Առակա-
բաններ շատ են յեղել, բայց նրանց մեջ նշանավոր են յեր-
կուսը. Միսիթար Գոշը և Վարդան Այցելքյոթ: Առաջինը՝ 12-րդ,
իսկ յերկրորդը՝ 13-րդ դարում: Նրանք թողել են առակներին
սովար հավաքածուներ: Նրանց աղբյուրը յեղել է ժողո-
վորդական բանա հյուսությունը, ժողովրդական առակները
ու առանձները: Սույնիսկ իրենց առակների մեջ սոյսկի
են իին շրջանից յեկած հունական առակախոսություններից

վորոշ կտորներ: Աւելի եյականն այդ չե, եյականն այն ե, վոր Նրանք մշակել են այդ առակները և բարձր արվեստի յեն հասցրել այն: Այդ առակներում ավելի քան վորեւ այլ տեղ, ցայտուն կերպով Ե արտահայտված այդ դարաշրջանի սոցիալական հարաբերությունները, հարստի ու ազգատի միջնվանդ հակամարտություններն ու պայմարու Հենց այդ տեսակների Ել այդ առակների արժեքն ավելի և բարձրանում է: Այդ առակներում մողովուրդը արհամարհանքի յե յենթարկուս իշխողներին, ճաղրում Ե հոգեռականներին, մերկացնուս Ե իշխողների պորտաբույծ լինելը և հանդես Ե բերուս իր լավատեսությունը կյանքի մասին: Այդպիսի իմաստ ունեն « Աղօթքն աղքատի », « Եպն և ծին », Կաշուակեր դատավորն և բղուղ մի իւղ », « Աղքատ նրեց և աւետարան », « Իշխան և այրին », « Եկեղեցին և ջրաղաց » և որիշ շատ առակներ:

Բայի գեղարվեստական գրականությունից այս շրջանում մողովուրդի մեջ բավական զարգանում, առաջ Ե զնում նաև բանավոր գրականությունը՝ բանահյուսությունը-ֆոլկլորը: Այդ տեղի յե ունենում կանացան պատմվածքների, հեքիաթների, առակների, ասացվածքների և մողովուրդական յերգների ձեռով, վորոնցից շատերը հասել են մուզ:

Թե միջնադարյան տաղերգուները և թե մեր հնուացա գրողները խոշոր շափով ոգտվել են մողովուրդական ոյդ բանահյուսությունից: Մողովուրդական բանահյուսությունը դաշնում է գրականության զարգացման համար անսպառ աղբյուր:

Նախորդ շրջանի գեղարվեստական գրականության մեջ տիրող թեմատիկան մնա մասսայի կրոնական Ե՝ յեկեղեցական: Այս շրջանի գրականության մեջ թե բանաստեղծների և թե առակաբանների մոտ կրոնական թեմաները յերկրորդական պլա-

Աի վրա յեն դրված և դրան հակառակ առաջ են քաշված աշխար հիկ կյանքին վերաբերող բազմաթիվ հարցեր, բազմաթիվ նյութեր: Հենց այդ յերևույթն ել իրավմասք իրավունք ե տայիս այս շրջանի գեղարվեստական գրականությունը բնութագրել վորպես «Պայմանագիր» գրականություն! Ֆրիկը Կոստանդնուպոլիսի Յերզնկացին, Հովհաննես Յերզնկացին. Մկրտիչ Նազարը և այլն իրենց վորտանավորներում, ինչպես տեսանք, գրում են մարդկանց ծգտումների մասին, արձարձում են սոցիալական մոտիվներ: Ֆրիկը հատկապես բարձրանում է աշխատավոր ժողովրդի բողոքը տիրող կարգերի դեմ, վեր ե հանում այն անտագոնիզմը, վոր կար այն ժամանակ ազգատի և հարուստի միջև, շահագործող և շահագործվողների միջև: Այնուհետև բազմաթիվ վորտանավորներում բարձրացնում են հայրենիքի պաշտպանության գաղափարը, գովերգում են նրանց; ովքեր արիաբար, ինքնապոհ կերպով կռվում են ժողովրդի ազատության համար, կռվում են ուսար նվաճողների դեմ, պաշտպանելով իրենց յերկիրը: Մեծ տեղ ե բռնում բնության գովերգությունը, ընդվորում այդ բնության գովերգությունը տեղի յէ ունենում վոլ թե վերապահան իմաստով, այլ վորպես կյանքի հենարան. վորպես կյանք սնուցանող, աճեցնող:

Պակաս տեղ շեն գրավում մեր այս շրջանի գրականության մեջ նաև սիրային թեմաները: Բանն այն է, վոր գրականության մեջ այդ թեման առաջ չի քաշվում վորպես լոկ միրիկական վեղում սիրո մասին: Գեղեցիկության մասին, այլ այդ ձևով խրախուսվում է ամուսնությունը, վորպես ազգային գոյության պահպան-ման միջոց: Իր ժամանակին, յերբ հայերը անվերջ յեն-

թակա Երեն արտաքին նվաճողի հարցածներին ու Ֆրահիկական վլշնչացման, այդ հարցն ունեթ քաղաքական և սոցիալական խոշոր Նշանակություն և ամուսնության կապի առաջնական ու սերունդի վերաբռնադրման մեջ մողովրդի ըստ գոյն զավակները տեսնում են այդ մողովրդի գոյության շարունակության կռվաճներից մեջը:

Այնուհետև գրականության մեջ մի նոր յերեւոյթ է Նկատվում հասկացեն լեզվի բնագավառուա: Գեղարվեստական գրականության մեջ լեզուն սկսում է մոտենալ այդ ժամանակի խոսակցական, մողովրդական լեզվին: Բանն այն է, վոր գրաբարը արդեն վաղուց դադարեց եր ձողովրդին հասկանալի լեզու լինելուց: Գրաբարը դարձել եր գրքի լեզու, վորին տիրապետուած Եյին, հասկանում Եյին կղերական տարրերը: Ժողովրդին այդ լեզուն այլև հասկանալի շեր և անա հենց այդ ժամանակաշրջանի գեղարվեստական գրականության մեջ մթնք տեսնում Յնք գրական լեզվի մոտենումը աշխարհիկ լեզվին: Դրա համար եղ ուսումնասիրողները նշում են, վոր լեզուն նույնպես աշխարհականանում են: Տաղերգուներն այլև շեյին դիմում գրաբարին, այլ նրանք գրում Եյին մողովրդական խոսակցական լեզվով: Այս իհարկե շի Նշանակում վոր տաղերգուների մոտ գրաբարի աղբեկությունը բոլորովին վերանում է: Ահա մոտավորապես այն հիմնական փոփոխությունները, վոր տեղի յեն ունենում գրականության մեջ 12-15-րդ դարերում:

Ինչով բացատրել այդ փոփոխությունները, վորով ամեն են ունեցել զնդարվեստական գրականության Բնագավառում: Այդ փոփոխությունները մթնք Կարսնելք, իրեւ այդ յերեւոյթները կապենք սոցիալական այն հոգա-

բերությունների հետ, վորոնք ստեղծվել եյին 12-15-րդ դարում։ Սախ և առաջ այդ դարերում բնորոշ է այն, վոր դեմոկրատական, աշխատավորական տարրերի ակտիվությունը մի շարք վայրերում, հատկապես Հայաստանի հարավային մասում և ամենից առաջ Վիլիկիայի հայկական թագավորության մեջ սկսում է համատաքար ավելի ուժեղ կերպով դրսեորդել։ Իսկ դեմոկրատական տարրերի ուժեղացումը, այդ տարրերի մեջ դասակարգային գիտակցության համեմատաբար ավելի բարձր աստիճանի հասնելը այդ շրջանում ուժեղացնում է նրա պայքարը թեոդալիզմի դեմ, ուժեղացնում է նրա բողոքը տիրող կարգերի դեմ, վորն և սկսում է արտահայտվել գրականության մեջ այդ ծեռովունդ Այնուհետև այս շրջանում, հայկական իրականության մեջ ծեռավորվում է վորպես տնտեսական և քաղաքական ուժ առևտրական բուրժուազիան։ Այդ բուրժուազիան եղ իր զարգացման հետ միասին առաջ ե քաշում իր դասակարգային ձգտումները, իդեան, գողափարախնությունը և այդ յերեւոյթն եղ, բուրժուազիայի այդ նորումը նույնպես մենք տեսնում ենք արտահայտված այդ ժամանակի գեղարվեստական գրականության մեջ։ Այդ յերեւոյթների առաջ զալուն զո՞գը թայ մենք տեսնում ենք նաև ֆեոդալական կարգերի քայլայում։ Թեև դանդաղ։ Այդպիսով՝ սոցիալական կանքում տեղի ունեցող այդ փոփոխությունները, դեմքրատական տարրերի ուժեղացումը, առևտրական բուրժուազիայի զարգացումը, վորոնք առաջ են մղում ֆեոդալիզմի քայլայումը, նպաստում են գրականության զարգացմանը և առաջ են բերում նրա մեջ կատարված փոփոխություններիը։ Այնու հետև գեղարվեստական գրականության

և պատմագրության այդպիսի համուռն զարգացումը 13-14-րդ դարերում, յերբ մոնղոլական ծանր լուծն ու բայբայի Քաղաքականությունն եյին տիրում, ունեցել է նաև Քաղաքական ակտուալություն։ Այն հանդիսացել է Վորապես այդ տիրապետության դեմ ժողովրդի մղած պայքարի ձևերից մեկը և ճառայել է վորապես միջոց հայ ժողովրդի ամբողջականությունը պահպանելու։

Զ ԴՊՐՈՑՆԵՐԸ ՅԵՎ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

Գեղարվեստական գրականության և պատմագրության զարգացմանը մասնավորապես և կուլտուրայի զարգացմանը ընդհանրապես խոշոր չափով նպաստում են ուսուցման այն կենտրոնները կամ այլ կերպ ասած, դպրոցները, վորոնց ցանցը զգաի շափով ընդարձակվում է 12-15-րդ դարերում։ Այդ շրջանում հոչակվում են Հայաստանում մի քանի անվանի դպրոցներ, վորոնք դարերի ընթացքում սնուցանել են մարդկանց, տվել են նրանց վորոշ գիտելիքներ։ Այդ դպրոցները հիշյալ մասանակաշրջանում մեծ մասամբ կրց են յեղել վանքերին։ Հայաստանում այդ դպրոցներից հայտնի յեն յեղել Հաղպատի, Սանահինի, Տաթեվի, Այրեվանի կամ Գեղարդավանքի, Մակույի, Ախսթամարի, Մեծօփավանքի, Խիզանի և այլ դպրոցներ։ Այնու հետեւ նրանց Քանակը ավելի ևս շատ ե յեղել Կիլիկիայի հայկական թագավորությունում։ Լեզոն Զ-ը իր մի շարք ձեռնարկումների հետ միասին բազմաթիվ դպրոցներ բաց արեց Կիլիկիայում և հենց այդ դպրոցներումն ել կրթում, դաստիարակվում եյին իրենց մասանակի գրականագետները, պատմիչները, գիտնականները, բժիշկները, բանաստեղծները, նկարիչները։

Այդ դպրոցներում, բայց գրագիտությունից և կրօնական գիտելիքներից. Նրանք սովորում ենին նաև քերականություն, ճարտասանություն, լեզվաբանություն, աստղաբաշխություն, մաթեմատիկա, իմաստասիրություն և այլն:

Հենց այդ դպրոցներում են ստեղծագործվել ե այդ ժամանակի և գրականությունը և արվեստը: Այնտեղ կատարվել էն բազմաթիվ թարգմանություններ մեր հարեան ժողովրդներից, վրացական գրականությունից, հունարենից, արաբերենից և այլն: Վրացական գրականությունը 12-13-րդ դարերում բավական ու մեղ կերպով զարգանում ե: Այս ժամանակ վրացական գրականությունը տվել ե իր համաշխարհային նշանակություն ունեցող ներկայացուցիչն՝ Շոթա Ռուսթավելուն, վորի յերկը «Ընծենավորը» խոշոր աշդեցություն ե ունեցել հայերի վրա: Շփուսը հարեան ժողովրդների հետ ազելի ևս նպաստում է կուլտուրայի զարգացմանը Հայաստանում:

Ե. ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

12-13-րդ դարերում Հայաստանում զարգանում ենաև ճարտարապետությունը: 11-րդ դարի կեսից սկսած սելջուկների արշավանքների և տիրապետության ամբողջ տևողության ընթացքում Հայաստանում ճարտարապետությունը առ ժամանակ կանգ ե առնում: Յեվդաշատ հականալի յեւ, շե վոր ճարտարապետության զարգացումը կապված է Այութական միջոցների հետ, իսկ սելջուկների արշավանքները և նրանց տիրապետությունը այդ միջոցները Հայաստանից դուրս ենին կորցում:

12-րդ դարի կեսից սկսած, յերբ Հայաստանը սկսում է ազատվել սելջուկյան տիրապետությունից, հատկա-

պես յերբ Հայաստանի Սրարաւոյան գաշտի հյուսիսային
մասերը սկսում են կամաց կամաց անցնել վրացական
տիրապետության ներքո, ահա այդ շրջանում մենք տես-
ուում ենք, վոր ճարտարապետական արվեստը նորից զար-
գանում է Հայաստանում և կառուցվում են մի շարք
հուշարձաններ և շենքեր, վորոնցից մի մասը մնացել են
մինչև մեր որերը: Որինակ՝ Գեղարդի վանքը, վորը կա-
ռուցվել ե 12-13-րդ դարերում: Այնտեղ կան ճարտա-
րապետական հրաշալիքներ՝ Գեղարդի մայուափոր տաճար-
ները: Մրանք յերեք են՝ յերկուսը փոքրիկ տաճարներ, իսկ
մեկը՝ մի մեծ սրահ: Յերբ դիտում ենք այդ սրահը, պատ-
կերանում ե մեր առաջ գյուղական տունը: Նա քառա-
կուսի ձև ունի և կենտրոնի չորս սյուների վրա բարձ-
րանում է գմբեթաձև յերթիկը: Այդ քարափոր գավիթը
ծառայել ե հասարակական հավաքների և ժողովների հա-
մար:

Մեկ հետաքրքրող մասնակաշրջանում են կառուց-
վել մինչ մեր մասնակը հասած մի շարք հուշարձան-
ներ Դիլիջանի շրջանում / Գոշավանք, հաղարձին/, Ծաղ-
կաձորում, Հաղպատում, Սանահինում, Այունիքում, Շիրա-
կում և այլն:

13-րդ դարում մեր ճարտարապետության մեջ առաջ
ե գալիս գավիթների կառուցումը: Գավիթներ սկսում են
կառուցել վոլ միայն նոր կառուցված յեկեղեցիներին կամ
վանքերին կից, այլև իին շենքերին կից: Գավիթը իր կա-
ռուցվածքով աշխարհիկ վոճից վերցված նմուշ ե, նման
մեր գյուղական տներին: Իրա կրոնական արարողություննե-
րի համար շեն ոգտագործել, այլ հավաքույթների, ժողով-
ների համար: Այդպիսի մեծ գավիթներ կան Ծաղկաձորում,

Հաղարձինում և այլուր:

Հարտարապետությունը 14-րդ դարից հետո Հայաստանում ապրում է իր անկումը: Անկումը արտահայտվում է վոշ միայն կրանով, վոր 14-րդ դարի յերկրորդ կեսից սկզբան համեմատաբար շատ քիչ կառուցումներ են տեղի ունենում, այլև յեղած կառուցումների վորակը կրակց հարտարապետական արժեքը ընկնում է: 10-11-րդ դարերի, կամ 12-13 րդ աւանուն կրբությունը, գեղարվեստական բարձր ճաշակը այլևս այդ կառուցումների մեջ չի նկատվում: 15-րդ ավելի ուշ՝ 16, 17-րդ դարերի կառուցումներից մնացած հուշարձանները մեծ մասամբ կրաքիտ են, շեն հոգիվել ճարտարապետական առումով, շեն կառուցվել ճարտարապետական արվեստի հիմունքներով: Անձ մասամբ կուրք են դիմայկունությունից և հանդ են են գույիս վորակն զանած շինություններ: Նենց դրանում ել արտահայտվում է ճարտարապետության անկումն այդ շրջաններում: Ճարտարապետական արվեստի անկումն պատճառներից մեկը պետք է համարել այն, վոր այդ դարերում Հայաստանը ավելի մեծ շափերով, քան այլ ճամանակ յենթարկվում է հարձակումների, ավարի և ավելի ածուխան: ու տնտեսական քայլավումներ: Անընդհատ կրիզները ասպատակությունները և զանազան ցեղերի տիրապետության արագ փոփոխութը իանգարում են մոնումենտալ շինարարության կառարմանը: Ի վերջո այդ շրջաններում ավելի, քան նախորդ շրջաններում, յերկրի նարսությունները յերկրի ասհմաններից դուրս են տրվել: Իսկ ճարտարապետական կառուցումները կնորոշ են տեղի ունենալ նյու

թական միջոցների առկայության պայմաններում:

Հ. ՆԿԱՐՁՈՒԹՅՈՒՆ

Յեթե ճարտարապետությունը 14-րդ դարից հետո առկում է ապրում, ապա արվեստի մի այլ ճյուղ ընդ հայկա-
ռակը, սկսած 12-13-րդ դարից ունեցել է ուժեղ վերելք և այդ վերելքը շարունակվել է մինչև 18-րդ դարը: Դա
Մանրանկարչությունն է: Մանրանկարչությունը՝ Հայաստա-
նու ցերապանցապես կապված է յեղել գրքի զարգաց-
ման հետ, իսկ գիրքը հայկական իրականության մեջ
բավական մեծ ընդունելություն եր գտնում: Մերը
դեպի գիրքը, գրասիրությունը մողովրդի մեջ առաջ է
բերել ձեռագրերի բավականին ստվար քանակություն:

Մանրանկարչությունը՝ Հայաստանում ունեցել է իր որո-
րոցները, իր ուղղությունները: Որինակ Խիկանի դպրոցը,
Կիլիկիայի դպրոցը, Սյունյաց դպրոցը, Մանահնի դպրոցը
և այլն:

Ձեռագրերում հիշատակվում են բավմաթիվ նկա-
րիչների անուններ, վորոնց մեջ նշանավոր են Թօրոս ուս-
լին, Պիծակը, Մանվելը Կիլիկիայում և Ծերունը, Ռիստա-
կեսը և ուրիշները Հայաստանում: Այդպատճենությունները իրա-
րից տարբերվել են վորոշ շափով թեմատիկայի, նկարչու-
թյան տեխնիկայի, արվեստի զարգացման աստիճանի
տեսակետից և այլն: Խիկանի և Հայաստանում յեղած
մյուս դպրոցները տարբերվում են Կիլիկիայի դպրոցից նախ
և առաջ նրանով, վոր այդ դպրոցներուն դեմոկրատական, աշ-
խատավորական տարրերի կյանքը ավելի յե արտսցորված և
ավելի ինքնուրուցնություն կա, բայց նրանք Կիլիկիայի դրպ-
ռոցից ցած են կանգնած արվեստի տեխնիկայի և զարգաց-

Ման աստիճանի տեսակետից : Այդ բոլորով հաւաքերծ պէտք է նկարչությունն իր թեմատիկայով և տեխնիկայով ստուգելու վաճ ե զրգիք : Չնայած դրան, նա ներկայացնուած է խոշոր կուլտուրական արժեք մեր հին արվեստի մեջ :

Մանրանկարչությանը վուզընթաց այս դարերում բավական զարգանուած են նաև փորագրությունը : Որինակ, Գրիգորյանի Գոշի վանքում յեղած մի շարք փորագրություններ . Այլունիքում յեղած մի շարք ռելյեֆներ, վորոնք վերաբերուած են 14-րդ դարին, և բազմաթիվ այլ հուշարձաններ վկայուած են այդ արվեստի զարգացման բարձր աստիճանի մասին :

Հայկական մանրանկարչության արվեստը պատմություն ունի ունի իր արժեքավոր տեղը : Այժմ առանձնապես խորհրդագույն միության մեջ շատ մեծ հետաքրքրություն կա դեպի այդ մանրանկարչությունը, և միութենական արվեստագետները, վորոնք զալիս և դիտուած են այդ ծեռագունը . իրենց հիմունքունքն են արտահայտուած այդ նկարչության տեխնիկայով՝ բարձր արվեստի մասին ! Այդ նկարչությունը հետաքրքիր է վոշ միայն իր բարձր արվեստով, այլ նաև իր տեխնիկայով : Զարմանք ե պատճեռուած հանդամանքը, վոր 8-9. յերթեմն ավելի դարեր առաջ նկարված նկարները պահպանվել են իրենց գույների այնպիսի թարմություն, վոր նարձես թե յերեկ են նկարված : Բայց այդ, մանրանկարչությունը խոշոր նյութ տալիս ուսուցնասիրելու այդ տարրերի կենցաղը, կբաղմունքը, գործիքները և բազմաթիվ այլ հարցեր, վորոնք կապված են պատմության ճիշտ մեկնաբանման և ուսուցնասիրության հետ :

Տերյան
Հայոց
Յանձնական

